

U. Fencing party

Night people

1912

891.99

R-17

Հայ
~~Պ. Ա. Ա. 881~~

Ընդամենը 1889



ՔԱՐԱԼԵՆՑ Ս.

Ո Ս Կ Ե Թ Ե Ի Ի Կ

Հ Ե Բ Ի Ա Թ Ն Ե Ր

Գ Ի Ն Ը 30 Կ Ո Պ.

891.99
Գ-17

Թ Ի Յ Լ Ի Ս

Հիմնադրամ սպորան «Էպոխա», Մուղեյսիի պեք. №:
1912

891.99
F-17

APM.
2-3850a

2-3850a

-6 NOV 2011



ՀԱՄԱԵՆԻՑ Ս.

Ո Ս Կ Ե Թ Ե Ի Ի Կ



Հ Ե Բ Ի Ա Թ Ն Ե ր


ՊՊԻՑ. № 22373

ԹԻՖԼԻՍ

Էլ.հաճախը սպարան «Էպոխա» Մուգեյիկի պեր. № 8
1912

Կոչ ենք անում մանկական գրականութիւն սիրող ու խրախուսող անհատներին, հրատ. ընկերութիւններին, որ հնար տան նոր տպագրութեան համար վայելուչ պատկերագրաբանութիւն արդէն սպառուած մեր «Հէքեաթներ» և «Նրկու աղբերացեղ» մանկական գրքերը:

Քամ. Ս.



Ա Ջ Դ

Գրական լեզուի վերածած ներկայ «ՈՍԿԵ-
ԹԵԻԻԿԸ» և միև հեքիաթները հանել ենք մեր
«ՇՈՒՎԱԻԻՐՅՈՅ ԲԱՐԲԱՌ» ձեռագիր աշխա-
տութիւնից, որի նիւթերը—բանաւոր գրակ-
նութեան զանազան ճիւղերի վերաբերեալ փըշ-
րանքներ—ժողովել ենք մեր ծննդավայր Շու-
լաւէրի ծերերի ու պառաւների շրջանում, ու-
սուցչական պաշտօնավարութեան միջոցին:

ՀԵՂԻՆԱԿ

13 հոկ. 1912.



40618-67

Ո Ս Կ Ե Թ Ե Ի Ի Կ

Կար, չը կար, մի ծեր թագաւոր կար և ունէր
մի նետաձիգ, սրտոտ տղայ: Որքան հայրը խիստ էր ու
զաժան, այնքան որդին բարի էր ու մեծահոգի: Տղէն
սրտով աւելի մօրն էր քաշել:

Ծեր թագաւորի մեռնելու ժամը երբ հասաւ,
կանչեց իրա մօտ նազիրին, վազիրին և ասեց. «տղէս
թէև մարմնով զօրեղ է, բայց թագաւորութիւն կա-
ռավարելու մէջ անփորձ է, պարտական լինէք իմ հո-
գուն, թէ նրան անօգնական թողնէք: Գանձերիս բա-
նալիքն անձ, մահիցս ետ բաց արէք սենեակները և
որդուս յանձնեցէք բոլոր ոսկեղէնն ու հարստութիւ-
նը, բայց մի դռան ամենսին ձեռ չը տաք, թէ չէ
աշխարհիս գլխին մեծ փորձանք կը գայ»:

Թագաւորն այս պատուէրը տալուց ետ մի քանի
ժամ ապրեց, մեռաւ ու թաղուեց ինչպէս մի ատելի
մարդ: Նազիրն ու վազիրը ուզում էին իրանք խնա-
մակալութիւն անել և առ ժամանակ աշխարհը կառա-
վարել, թագաւորազն այդ չըթողեց, իսկոյն պահան-
ջեց, որ իրա հօր ունեցածն իրան պահ տան: Նազիր-
վազիրը բաց արին բոլոր փակ դռները և գանձերը
յանձնեցին, բայց մի սենեակ փակ թողին ու անցան:
Աչքաբաց թագաւորազն այդ նկատեց. «ինչ կայ այս-
տեղ, որ փակ թողիք, բաց արէք, տեսնեմ»: Նազիրը
լուռ մնաց, վազիրը նոյնպէս: Թագաւորազն ասեց.

«պալատի տէրը ես եմ, ինչո՞ւ իմ տանը ինձնից ծածուկ բան մնայ»։— Մենք ի՞նչ անենք, ասին նրանք, հանգուցեալ հորդ պատուէրն այդպէս է, երգուել ենք նրան, չենք կարող մեր երգումը կոտրել. դրանից աշխարհի գլխին մեծ վնաս կը գայ»։— Այժմ թագաւորն ու երկրի տէրը ես եմ, ոչ թէ իմ հայրը, հրամայում եմ, որ բաց անէք»։ Թագուհին որդու կողմնէր։— «Գալիք փորձանքի համար դու ես պատասխանատուն, թագուհի, ասին նազիրն ու վազիրը և արգելուած դուռը բաց արին։ Թագաւորազը ժողովրդի մէջ յայտնի էր Գթոս անունով, երբ ներս մտաւ ու ծանր կապանքների տակ տեսաւ մի խոշոր ծեր, ճերմակ միրուքը մինչև գոտիկ փռուած, գուլթը շարժուեց։ «Ո՞վ ես, ծերունի, ո՞վ է կապկապել քեզ, հարցրեց թագաւորազը։— «Ես թագաւորն եմ այն աշխարհի, որտեղ առջկալի՞մն է գտնուում և վաղուց բանդարկուած եմ այստեղ հորդ ձեռով»։ Գթոսն ուզեց մօտենալ կալանաւորին, նազիր ու վազիրը առաջն ընկան, որ չըթողեն. երիտասարդ թագաւորը բարկացաւ. «հօրս կամքն է եղել սրան կալանաւորել, իմ կամքն է այժմ արձակել, դուք ձեզ համար կացէք»։ Ծեր թագաւորին կապանքներից ազատելով տարաւ պալատ, մաքրեց, հագցրեց ու պատիւներով ճանապարհ գցեց։ Նազիր վազիրը շատ վիրաւորուեցին, որ նոր թագաւորն առանց իրանց խորհրդի բան է բռնում, հետն ընկան ու սկսան ժողովրդի մէջ լուրեր տարածել, որ նա հօր գանձերը անհաշիւ վատնում է սրան նրան բաշխելով, գործերը թողած մի գլուխ որսորդութեամբ է պարապում։ Պալատականները, որոնց թագուհին երես չէր տալիս, նրանք էլ որոգայթ

շարելով ժողովրդի մի մասին իրանց կողմ քաշեցին։ Վերջապէս մի օր դժգոհները թափուեցին պալատ ու ասին. «Թագաւոր, իմաստուն նազիրին, վազիրին թողած քո մօր խորհրդով ես վեր կենում, նստում, հարևան թագաւորն եթէ քո թուլութիւնն իմանայ, կը գայ մեր երկրին կըտիրի։ Դու մեր ուզածը չես, թող հօրդ գահը, հեռացիր»։ Այդ չար, նախանձ մարդիկ այնքան լարեցին ժողովրդին, որ երիտասարդ թագաւորին ու թագուհի մօրը պալատից դառ դարդակ հեռացրին։

Մայր ու որդի թողին քաղաքը ու գնացին օտար հողում ապրուստ անելու։ Մի գիւղի ավի կանգ առան։ Գթոսն այսպէս էր յուսադրում մօրը. «գու անող կաց, մեզնից փախած փառքը Աստծով մի օր ինքն իջան կըվերադառնայ։ Ոչ ես և ոչ դու ժողովրդի համար մագաչափ վատ բան չենք արել։ Նազիրի, վազիրի զրգամա՞ր մեր դէմ դժգոհողներն էին մի քանի կեղեքիչ անձինք, որոնց դուր չէր գալիս, թէ ինչո՞ւ աղքատների հարկը բաշխում եմ, ինչո՞ւ գանձարանը ժողովրդի արիւնով լցնելու փոխարէն՝ եղած գանձերից բաժին եմ հանում աշխարհի խեղճ ու տնանկներին։ Վերջը ժողովուրդն ինքը կըփոշմանի, որ չըպահեց ինձ գահի վրայ։ Ես ոչ կարող էի հօրս պէս դաժանութիւն անել և ոչ բնաւորութիւնս փոխել։ Սպասիր, ես ցոյց կըտամ ամենին, թէ ի՞նչ կայ իմ մէջ թագնուած։ Մենք երկուսով ենք, դժուար չէ ապրելը, ես այնքան որս կանեմ, որ եօթ հոգի կըկշտանան»։

Ամենայն առաւօտ Գթոսը նեւ ու անեղն առած գաշտն էր գնում ու իրիկունը շալակը որսերով վիզ վերադառնում։ Լիառատ ապրում էին. նրանց հագուստը այնքան հասարակ էր, որ ոչ մի գիւղացի կար-

ծիր չէր անում, թէ նրանք թագաւորական տանից են:

Մի օր Գթոտի բաղդը ձախուեց ու ինչքան ման եկաւ, որս չըգտաւ: Սար ու ձոր այնքան ոտի տակ տուեց, որ մութն ընկաւ. շատ հեռու գնալը չէր նրկատել, խիստ զայրացած էր անաշողուժեան վրայ. դարգակ շալակով չէր ուզում մօրն երևալ: Տխուր տրտում պարկեց վարած ցելի վրայ, որ յոգնած ոտներին հանգիստ տայ: Քնել էր առանց իմանալու թէ Աղջկայճի աէր թագաւորի հողումն է: Նրա որսորդները տեսնելով, գնացին յայտնեցին. «Թագաւորը ողջ լինի, այս ու այս նշանի մի օտար երիտասարդ պարկած է մեր հանգում»: Թագաւորն իսկոյն յիշեց իրան ազատող թագաւորազի նշանները, հրաման արեց սպասաւորներին, որ գնան ցելում քնած երիտասարդին վերցնեն թևերի վրայ ու այնպէս զգոյշ բերեն, որ չըզարթի: Հրամանը ճշտութեամբ կատարեցին: Առաւօտը վաղ վաղ Գթոտը դարթեց ու մնաց խիստ դարմացած, որ ցելի փոխարէն իրան գտաւ փափուկ անկողնում: Շքեղ դահլիճին աչք ածելով առաջ կարծեց թէ երազի մէջ է, երբ համոզուեց, որ տեսածը իրականութիւն է, տեղից վեր թռաւ, որ դուրս փախչելով գերութիւնից ազատուի: Յանկարծ առաջն եկաւ ծանօթ պատկերով մի ծեր և քաղցրադէմ խօսեց. «բանւրի, հազար բարի լինի քո գալուստը, վեհանձն երիտասարդ, վերջապէս միտդ ես բերել իմ աշխարհը»: Գթոտն ուրախացաւ, երբ տեսաւ, որ բարեկամ թագաւորի շատումն է, մանրամաս պատմեց իրագրելին եկած դժբաղտութիւնը:—«Իմ պատճառով է սկսուել նրանց հակառակութիւնը քո դէմ. բեզ պալատից դուրս են արել, ինչ փոյթ, ահա իմ պալատը

բեզ բնակարան: Սիրտդ մի կտարիլ, առաջուայ պէս բաջ կայց»:

Պալատականները երբ իմացան հիւրի ո՞վ լինելը, թագաւորավայել պատիւներ տուին: Բայց Գթոտի ունքամէջը չէր բացոււմ, միշտ մտածմունքի մէջ էր, կերած խմածը կարծես սրտում շարուելիս: Ուզում էր շուտ մօր մօտ գնալ, չէին թողնում: Վիշտը մոռանալու համար դուրս եկաւ մենակ, որսորդութեան գնաց Աղջկայճի կողմերը: Նրան պատմել էին, որ նրա մէջ մի ծաղկազարդ կղզի կայ, հեռաւոր աշխարհներից թևաւոր աղջիկներ են գալիս կղզու վրայ գթօնելու, յետոյ լաւ եղանակին լողանում են լճում: Իմացել էր, որ այդ աղջիկները հասարակ արարածներ չեն, արևի, լուսնի պէս գեղեցիկ են, ազամորդի չի կարում նրանց մօտենայ, իսկոյն ծլկլուում են: Գթոտն ասեց. «գիտեմ, որ բաղդիս այս թարսուած օրերին այդպիսի որս ինձ չի պատահիլ, բայց սիրտս շատ բաշում է, որ մի հնարքով գնամ, ծաղկաւէտ կղզին տեսնեմ, դրախտի պէս բան կըլինի, այդ էլ մի հովութիւն է տխուր սրտիս»: Լողալ գիտէր, նետ դցել գիտէր. մօտեցաւ լճին, բաւական մեծ էր, ափները ցելս ու փխակ, «հը՛, խօսեց Գթոտը, երևի այս է պատճառը, որ սրսկանները սիրտ չեն անում Աղջկայճի մտնել»: Շորերը հանեց, վզաքօքին ամբայրեց, նետ ու անեղն առած մտաւ փխակը, գոտկահետ խոր էր, յետոյ առաջն եկաւ թանձր եղեղնուտ. այդ էլ զգոյշ անցնելով ընկաւ պարզ լիճը ու լսեց: Զուլն այնպէս յստակ էր, որ երեսնաքքը մէջն երևում էր: Հասաւ կղզուն. կղզի մի ասիլ, այլ անուշահոտ, գոյնդդոյն ծաղկներով, ծառերով լի դրախտ տաս: Նրա

վրայից սուս աղբիւրներն ջրերն էլ գալիս էին լիճը թափւում: Կղզու վրայ երկայն ու մէկ ման եկաւ, ծաղկներից հոս քաշեց, վրայ ընկաւ աղբիւրներից խմեց, ծլլլան թռչուններին ականջ դրեց ու ման-գալով եկաւ մի թփի տակ նստեց ու լճի ջրերի խա-դին մտիկ արեց: Մտիկ էր անում ու այսպէս խօսում. «Ախ, Աստուած, զօրութիւնիդ մեռնեմ, թէ տխուր սրտիս համար մի ցնծութիւն ունես պահած, այսօր ցոյց տուր: Ոչ գահ եմ ուզում, ոչ ոսկի, հրամայիր, որ երկնային աղջիկները գան, իրանց շնչով այս դրախտը կենդանացնեն, քաղցրացնեն: Ոչինչ չեմ ու-զում, միայն նայեմ ու նրանց տեսքով մխիթարուեմ: Իսկ եթէ, Աստուած, քո կամքումը կը լինի, որ այդ աղջիկներից մինն ինձ բաժին լինի...»

Այս խօսքումն էր Գթոտը, որ ականջով թրթռո-ցի ու շխշոտցի ձայն ընկաւ. դուխը որ բարձրաց-րեց, քիչ մնաց ուրախութիւնից սիրտը պատուել: Երեք աղջիկ ոսկեգոյն, արծաթագոյն և պղնձեգոյն թևերով թռթռալէ եկան դէպի կղզին: Երևի շոքած էին ու հովանալ էին ուզում. էլ չբարձրացան կղզու ծաղկափթիթ թումբը, իջան ավի մօտ իրա նստած տեղից քիչ հեռու, թշուշիկ գլուխները աղունակի պէս պէս դէն թեքեցին, որ տեսնեն արդեօք իրանց հետևող շնչաւոր կսյ թէ ոչ: Երբ միամտուեցին, որ ոչ մի կողմից վտանգ չըկայ, շուտով դեղին, սիպտակ, կար-միր թևերը հանեցին, կանաչ ավի վրայ անփոյթ թափթփեցին ու ընկան վճիտ ջուրը լողանալու: Նրանք ոչ թէ աղջիկ, այլ հրեշտակներ էին, որովհետև Գթո-տը նրանց պատկերը տեսնելով քիչ մնաց խելքամաղ լինի: Կարապի պէս սուրում էին ջրի երեսին, երբեմն

սուզում էին ջրի մէջ մինչև ուսերը, կռներով ա-լիքները գրկած ուրախ ժպտում էին դէպի կանաչ ջրջապատը, դէպի կապոյտ երկինքը, դէպի դրախ-տային կղզին: Ամենափոքրը յանկարծ վախ գգալով ճչաց. «Քոյրեր, ջուրը սովորականի պէս չէ, պղտո-րնթիւն եմ նկատում տեղ տեղ, երևի ազամորդի է մտել, եկէք շուտ դուրս գանք»:—«Չուր ես վախենում, պատասխանեցին միւս երկուսը՝ ձեռներով ջուրը չուժի չուժի անելով, մեր հօր աշխարհից մինչև այստեղ եր-կար ճանապարհ ենք գալիս, միթէ սրտի ուզածի չափ էլ չը մնանք այս յստակ ջրերում: Սխալ ես, ջուրը պարզ է, Լիճը ջրջապատող եղեգնուտան այնքան թանձր է, որ ոչ մի անշնորք ազամորդի այստեղ ոտ չի դնիլ: Հեռու ավից ինչքան ուզում են, նայեն, մենք մեր զբօսանքը հանգիստ շարունակենք»: Կրտսեր քոյրն այս խօսքերի վրայ միամտուեց, քնքոյշ մատներով ուրախ չխիացրեց ջրի երեսին ու անհոգ առաջ լողաց՝ կզակը ավիքների փոփուրի մէջ խաղացնելով: Երբ ջրի մէջից գլուխը բարձրացնում էր, ոսկեգոյն հիւսերը քանդու-ելով փուում էին ուսերին ու շարմաղ կրծքին: Լճի խորքում միամիտ սրտով խաղում էր ավիքների հետ, մէկ աջ թևն էր մեկնելով չխփացնում ականակիտ ջրին, մէկ ձախը: Միւս քոյրերը ծանծաղ տեղն էին, յանկարծ կղզու թփերի տակ նրանց աչքով ընկաւ մի ազամորդու պատկեր. նրանք ծվացին ու շտապ դուրս վախան իրանց թևերի կուշտը. վախից էլ ժամանակ չունեցան կրտսեր քրոջն իմաց անելու և նրան սպա-սելու, շուտով հագան ու թը՛ռռ, օդը բարձրացան: Կրտսերն օդում իրա քոյրերին տեսնելով յետ նայեց դէպի կղզին ու պարզ նշմարեց ավի մօտ մի երի-

տասարդ, որ զբաղուած էր իրա ոսկէ թևերը դիտելով, ձեռին հետաքրքրութեամբ շուռ ու մուռ տալով: «Մէ՛ր, երկինք, հառաչեց աղջիկը, ինչո՞ւ քոյրերիս խօսքերին հաւատալով միամտուեցի, հոգիս վկայում էր, որ այսօր մի փորձանք պտտուում է զլիսիս: Տես, քոյրերս թռան, ինձ թողին մենակ... ադամորդու առաջ: Ի՞նչ անեմ ես»: Մորմոքուեց ինքն իրան մերկ աղջիկը ու ամօթից մնաց մինչև վիզը ջրում ծածկուած: Վերջն անձարացած լողաց դէպի ափը, ձեռը ճակատին դրած կանչեց ջրից. «այ երիտասարդ, երկի երկինքի որոշումն է, որ քո ձեռն ընկնեմ: Բաղդիս դէմ չեմ գանգատում, ուզում եմ դուրս գալ, վերարկուդ թող ափի վրայ, հեռացիր, որ դամ փաթաթուեմ»: Գթոտը վերարկուն թողեց, նրա ոսկէ թևերը կռան տակ հեռացաւ մի կողմ: Աղջիկը դուրս վազեց ջրից ու վերարկուն առաւ վրէն: Տղէն մօտեցաւ, ողջունեց, իրար նայեցին, իրար աչքում դուր եկան, նստան իրար կողքի, անուշ զրոյց արին: Մի ժամ չանցած աղջիկն ասեց. «ես բաղդաւոր եմ, որ թևերս քեզ պէս քաջի ու բարեսրտի ձեռ ընկան. իմ փնտրածը դու ես, որ կաս, էլ չեմ ուզում ուրիշ տղամարդ ճանաչել, թևերս տաս էլ, ես քեզանից հեռացող չեմ»:

— «Իմ սրտի փափագն էլ այն էր, խօսեց Գթոտը, որ քեզ պէս մէկին հանդիպեմ ու վշտերս թեթեացնեմ»: Երկուսի աստղն էլ, ինչպէս երևում է, իրար շատ բռնել էին. իրար վզով փաթաթուեցին ու սիրոյ ուխտ կապեցին: Գթոտը նեւ ու անեղը դրեց իրանց մէջտեղը, երկսով կանաչ խոտի վրայ պարկած խօսեցին, խօսեցին ու մատների ծայրերն իրար կպցրած բնեցին: Գթոտին թուաց երազում, թէ ձեր թագաւորը

շատ անհանգիստ է դարձել իրա ուշանալու պատճառով, քաջ որսորդներ ուղարկելով Աղջկալճի կողմը, գտել է նրան կղզու ափին ընած. յետոյ նաժիշտների ձեռով կանացի ընտիր զգեստ է ուղարկել, Ոսկեթևիկին զգոյշ հագցրել և հրամայել է սպասաւորներին այնպէս փոխադրել նրանց պալատ, որ քաղցր քնից չըզարթեն: Նրան այդպէս թուում էր. սակայն նրա ցանկութիւնն էր Ոսկեթևիկի հետ կղզու վրայ զբօսնել. ծաղիկներից փունջ կապել սիրուն նշանածի համար: Բայց մէկ էլ զարթեց ու իրան գտաւ թագաւորի շքեղ սենեակում: Իսկոյն լոյս ընկաւ սպասաւորը և յայտնեց, որ վաղուց նրան թագաւորն ու մեծ իշխանները սպասում են: Գթոտը դուրս եկաւ, տեսաւ մեծ հացկերոյթ սարքած, Ոսկեթևիկն էլ զուգուած, նստած: Ամենն էլ ուրախ մասնակցեցին սեղանին, խնդացին ու անթիւ անգամ բաղդաւորութիւն մաղթեցին Գթոտի ու Ոսկեթևիկի համար: Մեր թագաւորը առաջարկեց Գթոտին, որ թևաւոր աղջկայ հետ պսակուի ու իրա աշխարհում ապրի: Բայց երիտասարդն ասեց. «ո՛չ, թագաւոր, դեռ սրտումս փափագ կայ, որ անկատար է, նրան էլ հասնեմ, յետոյ հանգիստ պսակուեմ: Մայրս տխուր այժմ ինձ է սպասում, հարսնացուս տանեմ, որ նրան մխիթարի: Անչափ շնորհակալ եմ հիւրասիրութեանդ համար»:

Գթոտը մնաս բարով ասեց ու Ոսկեթևիկին առած մտաւ իրա աշխարհը իրրև օտարական ու հասաւ այն գիւղը, ուր մայրն էր. երեքով սկսան ապրել առանց իրանց ո՞վ լինելը լոյս գցելու: Ոսկեթևիկը սրտով շատ կպել էր Գթոտին. «քեզ ունենալուց ետ աշխարհի ոչ մի փառք ինձ պէտք չի: Ազբատ վիճա-

կից ես վախեցող չեմ, արի պսակուենք ու մեր աշխատանքով տուն, տեղ սարքենք»։ — «Անչափ գոհ եմ, որ չբաւոր ապրուստս տեսնելով չես վախենում բաղդը ինձ հետ կապել։ Բայց աղաչում եմ, եթէ ինձ սիրում ես, քիչ էլ համբերի։ Ես ուխտել եմ հակառակորդներին ամաչեցնեմ, հօրս գահն ու գաւազանը նորից ձեռ բերեմ, յետոյ պսակուեմ։ Այդ բանը երկար չի քաշի»։ — «Յօժար եմ ասածիդ, պատասխանեց աղջիկը։ Գթոտը համբուրեց Ոսկեթևիկի ճակատը ու գնաց, մտադրութիւնն իրագործելու համար հնարներ փնտրելու։ Հարկաւոր էր ժողովրդի միջից աղբեցիկ համախոհներ ձարել փուշ պալատականներին գլորելու համար։ Միայնակ էր դեռ, գործի յաջողութեան վրայ դեռ յոյս չուներ։ Նշանածից արբուութիւնը ծածկելու համար շաբաթներով տուն չէր գալիս։ Եկած միջոցին էլ խոյս էր տալիս մօր ու Ոսկեթևիկի հետ երկար խօսելուց, քչախօս էր կարուել, միշտ մտքի ծովն ընկած մտածում էր։ Վշտից չը յաղթուելու համար, տղամարդ էր, երբեմն իրան տալիս էր որսորդութեան։ Կամաց կամաց Ոսկեթևիկի մէջ կասկած ծնեց. «չըլինի՞ Գթոտը ուրիշին է սիրում, դրա համար էլ ինձանով չի հետաքրքրում։ Եթէ այդպէս է, էլ ինչո՞ւ մենակ նստեմ ու ձանձրութիւն ձեռից հալուեմ, երբ նրա սիրան ուրիշին է պատկանում»։ Այսպէս միամիտ աղջիկը իրա մտքերը փորփրելով տանջուում էր ու պատճառ չէր գտնում, թէ ինչո՞ւ է նշանածն իրանից սառել։ Տարակուսած սրտով օրերն անց էր կացնում ու չէր համարձակում երկու բառով սիրած երիտասարդին վիշտը յայտնել։ Նրա երգումն էր, ինչ էլ լինի, չըհեռանալ Գթոտի մօտից, բայց մի օր տունը

վեր քայելիս, երբ իրա թևերը ձեռնարկողի մէջ ծալուտած տեսաւ, յանկարծ միտքը փոխուեց, ուրիշ տեսակ դարձաւ։ Ոսկէ թևերը վերցրած մօտեցաւ սկեսուրին ու ասեց. «մէրա, դու էլ գիտես, թէ որդուդ ինչքան եմ սիրում։ Վերջին մի քանի շաբաթները նա ինձ մտահան է արել, շատ կարելի է՝ ուրիշի է աչքադրել։ Այսուհետև ինչ սրտով այս տանը մնամ։ Եթէ նա իմ սէրը գնահատէր, վաղուց պսակուած կը լինէր։ Զուր հալ ու մաշ լինելու փոխարէն ուզում եմ գնալ հօրս մօտ, որ վաղուց իմ կարօտն է քաշում։ Այնտեղ, Զինումաչինում քո որդուն կըսպասեմ մինչև եօթ տարի, որ գայ, պսակուեմ ու բաղդաւոր ցընծամ։ Եթէ չի գալ, Աստուած իրա հետ, ես սևաբաղդ կը նստեմ մինչև վերջ ու մուրազաչոր կը մտնեմ գերեզման»։ Այս խօսքերից ետ սկեսոր ձեռը համբուրեց, ծալած ոսկէ թևերը պարզեց, հագաւ ուսերին ու երկնքի երեսով թռաւ։ Պառաւ թագուհին մնաց լալ աչքերով ետնից նայելիս։

Երեկոյին թագուհին վշտահար նստած էր, երբ որդին տուն ընկաւ պայծառ դէմքով ու գուարթ ձայնով կանչեց. «ահա՛ վերջապէս, մայր, մեր կորուստները վերադառնում են, ժողովուրդը նոր է իմանում, թէ իրա սրտացաւ բարեկամն ո՞վ է։ Երկու օրից ետ, երբ պալատից դաւաճանները վճռողուած կըլինեն, ես կը ժառանգեմ հօրս գահը ու Ոսկեթևիկի փափազը կը կատարեմ։ Հը՞, ինչ ես գլուխդ կախ արել, ինչո՞ւ չես խօսում, հետս ուրախանում։ Ո՞ւր է նշանածս, այսօր ինչ է պատահել յայտանը»։ Մայրը լուռ ու մունջ արտասուում էր։ Գթոտը սարսափեց. «ասա շուտ, մայր, ինչ է պատահել»։ — «Ի՞նչ ասեմ,

նրդի, որ ուրախանաս. քո Ոսկեթևիկը սրտակոտոր ու վշտահար հեռացան, գնաց»:—«Ո՛ր հեռացաւ, մայր, ինչո՞ւ հեռացաւ, պաղատելով հարցրեց Գթոտը:—Նա թևերը հագաւ ու գնաց Չինուժաչին, իրա թագաւոր հօր կուշտը»:—Ինչո՞ւ, պատճառն ի՞նչ բռնեց»:—«Վերջին ժամանակների քո լուսթիւնը, նա կարծում էր թէ իրան էլ չես սիրում: Թագուհին մանրամասն պատմեց աղջկայ ասածները: Խեղճ երիտասարդը սևփարեց ու գլխից բռնեց, կասես ուղեղը ցրւում էր: Յետոյ հեկեկալով խօսեց. «սխ, մայր, ինչո՞ւ չէիր նրան ուշացնում մինչև ես գամ: Ինչո՞ւ էիր այնպիսի ոսկեծամ հարսը ձեռից թողում: Նրա նմանը էլ սրտեղ ճարեմ կամ առանց Ոսկեթևիկի հօրս թագաւորութիւնն ինչի՞ս է պէտք: Ինչքան նա է սիրել ինձ, եօթն այնքան ես եմ սիրել նրան սրտիս մէջ, բայց յայտնի չեմ արել»: Յետոյ իրան ուղղելով շարունակեց խօսքը. «մայր, ամօթ է, որ ես էլ քեզ պէս նստեմ, արտասուք չափելով բաւականանամ. ես պիտի գնամ Ոսկեթևիկի ետնից: Ճանապարհս օրհնիր, ինչ պատուհաս էլ լինի, մինչև նրան գտնելը, պիտի բաշեմ, նրան գտնեմ, ապա թէ գամ, հօրս գահին նստեմ»:

Այս ասեց Գթոտը, նեա ու անեղը վիզը գցած ճանապարհ ընկաւ դէպի Աղջկալճի աշխարհ: Ծեր թագաւորի մօտ հիւր ընկնելով միտռ մի պատմեց իրա գործի յաջող վիճակը ու անակնկալ պատահած մեծ վիշտը: «Սիրտդ մի կոտրիլ, մխիթարեց թագաւորը, Ոսկեթևիկին կը գտնես: Չինուժաչինի մասին լսել եմ, բայց չեմ տեսել, պիտի գնալ: Գիմիր բոլոր շնչաւորներին, քեզ պէս բարեսրտին ամենը կօգնեն, թէ գա-

զանների, թէ դևերի և թէ թռչունների պետերը. նրանք իրանց ձեռից եկածը քեզնից չեն խնայիլ: Իմ կողմից տալիս եմ մի թասակ, սրա զօրութիւնով կարող ես մարդու աչքից աներևութանալ, թռչունի պէս փոքրանալ, կարճ տեղեր թռչել: Բացի այդ քեզ տալիս եմ երեք ձիու մազ, սիպտակ, կարմիր, սև. եթէ քեզ հարկաւոր կըլինեն, դաշտ կը գնաս, օրին ուղում ես, նրա մազը կը հանես ու կըկանչես. իրա սարք ու կարգով իսկոյն առաջդ պատրաստ է»:

Գթոտը շնորհակալութիւն արեց Աղջկալճի տէր թագաւորին ու գնաց դէպի անտառը, գազանների պետին պատահեց, պատմեց վիշտը ու նրա աջակցութիւնը խնդրեց Չինուժաչին հասնելու համար: Առիւծը ժողովի կանչեց գազաններին ու ասեց. «այս երիտասարդը վիշտ ունի սրտում, մեր պարտքն է օգնութեան համար, ձեզանից ո՞վ կարող է ընկերանալ նրան մինչև Չինուժաչին»: Գազանները պատասխանեցին. «ճամբէն ցամաքով լինէր, ուրախութեամբ, բայց մեծմեծ ծովերն ի՞նչպէս անցնենք: Դրան օգնել չենք կարող, մենք ինքներս էլ կըխեղդուենք»: Գթոտը դրանց թողեց, գնաց դևերի պետի մօտ և իրա ցաւի համար օգնութիւն խնդրեց: Պեան ասեց. «ափսոս, որ քս խնդիրը ուժի բան չի, իմ ցեղը անուանի է դրանով, նա ոչ օգում թռչել կարող է և ոչ ջրում լողալ»: Դարձաւ հպատակ դևերին ասեց. «ով որ այս ագամորդու հետ Չինուժաչին կըգնայ, նա մեծ ընծայ կըտանայ»: Ամենն էլ հրաժարուեցին ասելով՝ ծով մտնելը, նրա գլխով թռչելը մեր ուժից վեր բան է. Գթոտը դրանց թողեց ու տխուր տրտում ճամբէն շարունակեց, քերծերի գլխին հանդիպեց թռչունների

պետին: Արծիւը նրա վիշտը լսելով բոլոր թռչուններին՝
 ժողովի կանչեց. «այս երիտասարդը ուզում է Ձի-
 նումաճին գնալ, ո՞վ կուզի հեան ընկերանալ»:— «Որ-
 քան լսել ենք, պատասխանեցին մեծ թեւաւորները,
 ճամբէն շաբաթներով ծով է, մեզնից ոչ ոք ուժ չի
 ունենալ այդքան տարածութիւն ջրի վրայով թռչել
 ու մարդուն էլ շայակած տանել: Եթէ տարածութիւնը
 քիչ լինէր, կարող էինք առանց բեռի գնալ, բայց
 եօթ ծովի ու եօթ սարի գլխով թռչելը մեր բան չէ»: Գթոտը
 թողեց դրանց ու վիշտը սրտում հեռացաւ,
 ընկաւ դաշտերը, մտամոլոր թափառեց, ցաւը մեղ-
 մացնելու համար երգեր շինեց ու երգեց: Ծարաւ էր,
 ջուր խմելու համար մի պղտոր առու բռնեց, գնաց
 մինչև աղը, որ գտնուում էր մի մեծ քարափի տակ:
 Լուռ նայեց նրա վիթխարի կուրծքին ու լցուած սըր-
 տով խօսեց, «այ հոյակապ արարած, թէ շնորք ունես,
 ձայն հանիր, լուռ մի մնալ. թէ չէ քեզ էլ կրմեղադ-
 րեն, որ սիրազուրկ ես: Մի քանի օր անխօս մնացի
 սիրելի նշանածիս հետ, նա տեղեակ չէր, որ սիրտս
 ու հոգիս նրանն են, թողեց ինձ վշտի ծովում ու հե-
 ոացաւ: Լուռ սրտերը, իմ կարծիքով, շատ աւելի
 քնքոյշ են ու շատ աւելի հարուստ՝ իղձերով: Արարչի
 զթոտ մատը քեզ էլ դիպել է, այ վեհ քարափ, անրի,
 անզգայ մի մնալ, խորհուրդ տուր ինձ, ո՞ւմ դիմեմ,
 ինչ հանգով Ոսկեթևիկիս աշխարհը հասնեմ, արտա-
 սուքներս նրան ցոյց տամ, որ հասկանայ, թէ նրա
 սէրը առանց գնահատելու չեմ թողել»:

Քարափն Աստծու հրամանով լեզու ստացաւ,
 խօսեց. «ինչպէս տեսնում եմ, քո ցաւը խորն է ու
 անկեղծ, յոյսդ թեւաւորներից դեռ մի կարիլ, իմ բարձր

ծերպերի մէջ ապրում է մի պառաւ Զմրութ-դուշ,
 քո ասած աշխարհի ճամբէն նա կիմանայ: Հպարտ
 արծիւը նրան ժողովի կանչած չի լինիլ, Գնա նրան
 հարցրու, կարելի է քո ցաւին նա ճար է անու՞մ»:

Գթոտը հոգի առած բարձրացաւ քարափի ամե-
 նավերին ծերպը ու խոտոչի մէջ գառաւ ճլորած կա-
 տարով պառաւ Զմրութ-դուշին, նստեց ու գլխին ե-
 կածը սրտառուչ կերպով նրան պատմեց: «Այ երի-
 տասարդ, խօսեց մեծամարմին թռչունը, դու Զինու-
 մաճին ես ուզում գնալ, այդ ճամբէն ինձ ծանօթ է,
 շատ եմ գնացել, եկել, բայց այդ այն ժամանակն էր,
 երբ թեւերիս մէջ ուժ կար, սրտումս էլ եռանդ: Այժմ
 պառաւութիւնից անդօրացել եմ, ծովի ու սարի վրա-
 յով թռչելու ուժ չունեմ: Երկու օր միանգամ եմ
 բնիցս դուրս գալիս, դժուարութեամբ որս ճարում,
 պառաւութիւնը յաղթել է»:— «Իրա ճարը ես կը գտնեմ,
 պայծառացած երեսով խօսեց Գթոտը, ես քեզ ուժի
 կը բերեմ»:— «Բեր, տեսնեմ, ասեց Զմրութ-դուշը: Գթո-
 տը նետ ու անեղը ուսին իջաւ քարափից, ընկաւ
 մօտակայ դաշտերը, լեռները. էլ թռչուն ու էրէ չը-
 թողեց, ամենն սպանելով բերեց, թափեց Զմրութ-
 դուշի առաջ: Լիառատ կերակրեց մի շաբաթ, երկու
 շաբաթ: Հսկայ թռչունը հետզհետէ կազդուրուեց,
 նախկին կորցրած արիւնը դարձեալ երակներում խա-
 դաց, մէջքի, ոտների, թեւերի ձկնամսերը նորից լցուե-
 ցին, ուռան: Օրի մի օրը վերջապէս իրան ազատ
 թափահարելով կւրնչաց. «նրական տղայ, անպրի կուռըդ,
 ինձ թարմացրիր, մէջս այնքան ուժ եմ գգում, որ
 կարող եմ քեզ եօթ ծովի ու տաս սարի գլխով մի
 շնչում թոցնել, անպարտ չմնալ, գնանք»: Գթոտը



սիրտը թունդ եղած ելաւ նրա շալակը: Ձմրութ-դուշը մեկնեց թևերը ու երկնքի վրայով փռուած գնաց ու կուրնչաց, գնաց ու կուրնչաց. հատան ծովերը, պրծան սարերը, դէմ առաւ Չինուամաչինին, թագաւորի պալատից քիչ հեռու կանգ առաւ, ասեց. «դէ հիմի իջիր, գնա քաղաք ու գործդ տես: Ես այստեղէքք որս գտնելով կ'ապրեմ, մինչև կը վերջացնես, կըգաս»:

Գլխու լիաբերան գոհութիւն արեց Ձմրութ-դուշին ու քայլերն ուղղեց դէպի պալատ: Մի մարդու պատահելով հարցրեց. «արդեօք չե՞ս իմանում, թէ Գրտեղ են կենում ձեր թագաւորի աղջկէքը»:—Օտարական եղբայր, պատասխանեց մարդը, նրանք կենում են պալատի վերին մասում»: Գլխուը նայեց դէպի վերի երեք սենեակները ու հարցրեց. «հապա ինչո՞ւ նրանցից երկուսը գարգարուած են, իսկ մէկը սևով պատած»:—«Ասեմ, օտարական եղբայր, առաջին սենեակում կենում է մեծ աղջիկը, կողքին կիտած պղինձ փող. երկրորդ սենեակում միջնակ աղջիկն է, կողքին կիտած արծաթ փող, իսկ սևապատ երրորդ սենեակում ապրում է կրտսեր աղջիկը, կողքին կիտած ոսկէ փող: Նա սև է հագել մի երիտասարդի պատճառով, որին հաւանել, սիրել է հեռու աշխարհում ու զրկուել է նրանից»: Գլխուը սիրտն այս տեղեկութեան վրայ հանգստացաւ. «ուրեմն նա դեռ ինձ է սպասում, խօսեց ինքն իրան, այ, քաղցր բաղդ: Դէ շտապեմ, գնամ մօտը: Բոյո՞գ, ո՞ւր ես»: Չեւը մեկնեց ծոցը, քոլոզը հանեց, դրեց գլխին: Աղունակ դառնալով թռաւ պալատի վերև, լուսամուտի բաց աչքին կանգնեց, նայեց, Ոսկեթևիկը օթևանում քնած էր, քաղցր փշշոցը լսելով, բաւականացաւ այդ օր դրանով ու ետ դառաւ:

Գնաց միւս օրը, աւելի շատ մնաց նրա օթևանում: Այդպէս շարունակեց մի շաբաթ: Թագաւորը մէկ մէկ գալիս էր աղջկան այցելութիւն, իսկ սպասուհին ամեն օր բերում էր համեղ կերակուրներ, քաղցր խմիչքներ ու մեծ մասով անարատ ետ տանում, որովհետև Ոսկեթևիկը արտութեան պատճառով շատ քիչ էր ուտում: Բայց մի օր Ոսկեթևիկը շատ զարմացաւ երբ նկատեց որ սեղանի վրայի թողած կերակուրներից բան չըկայ: Կասկածն ստուգելու համար Ոսկեթևիկը կերակրի բաժինն իրա ձեռով ծածկեց, մի կողմ դրեց ու ինքը քնեց: Երիկնագէմին գարթելով տեսաւ, որ կերակուրը չըկայ. «դռներն ամուր կողպած են, խօսեց նա, ո՞վ կարող էր ներս մտնել»: Սկսեց պարտել պահարանները, արկղները, ծալքատեղերը, չըգրտաւ բաժինները մաքրող ոքմինին: Ազամորդու հետք չըկար: Աղջիկը վախենում էր այդ մասին սպասուհու հետ խօսել, ինքն իրան անհանգստանալով ասում էր. «ո՞վ պիտի լինի այս խորհրդաւոր ոքմինը, որ ուզում է ինձ գայթակղեցնել. չէ՞ որ հաստատ ուխտել եմ հաւատարմութեամբ սիրելուս սպասել: Եթէ հօրս յայտնեմ այս երևոյթի մասին, ո՞վ գիտէ, ի՞նչ կար ծիւղներ կըտանի: Նախանձոտ քոյրերս էլ այդպիսի առիթ են փնտրում, որ իմ վրայ բամբասանքի կծիկը բաց անեն»:

Ամեն անգամ երբ աղջիկը տեսնում էր կերակուրները կերած ու հետաքրքրութիւնից դէս դէն ընկնելով ուտողին չէր գտնում—նստում էր ու յոգնածութիւնից հառաչում: Գլխուը հրճուում էր Ոսկեթևիկին, այս վիճակում տեսնելիս: Մի օր էլ երբ աղջիկը շատ որոնելուց թուլացած լալիս էր, Գլխուը ասեց. «բաւա-

կան էր, որքան տանջեցի, սրան ես տեսնում եմ, սա ինձ չի տեսնում, մեղք է»։ Գլխի բոլոր վերջերեց, Ոսկեթևիկը իրա օթևանում տեսաւ խունացած վերարկուով մի երիտասարդ. վախից քիչ մնաց ուշաթափուի։ Յետոյ քաջաարտուելով ուզում էր գոչի «ո՛վես, ի՛նչ ես շինում այստեղ», մէկ էլ յանկարծ տղամարդու դէմքը ճանաչելով ուրախ ճչաց. «ճիս, այս դճւես, իմ սրտի կտոր»։ Ասեց, թևերը տարածած առաւ գիւղը ու վզով փաթաթուեց, որ կարօտն առնի, Հետը քաղցր զրոյցի նստելով ասեց. «լաւ կըլինէր, որ քիչ էլ համբերէի մօրդ կշտին, բայց չես կարող երևակայել, թէ ի՛նչ թրեր էին ցցւում սրտումս, երբ գու երեկոները լուռ նստում էիր ու առաւօտները լուռ հեռանում։ Բայց երբ այդքան դժուարութեամբ գլուխ բերած գործն արեսի վրայ թողել ես ու իմ ետնից ծովէ ծով, սարէ սար ընկել, դրանով իմ սէրն աւելի վարարեցնում ես ու ինձ դարձնում քո շուաքի գերին։ Ապրիր իմ օթևանում, մինչև մի բարբաղդ դէպք քեզ լոյս աշխարհ հանի»։— «Յօժար եմ, Ոսկեթևիկ, պատասխանեց Գթոտը ու ապրեց։ Քնելու ժամանակ նետ ու անեղը առաջուայ նման միշտ լինում էր երկուսի մէջտեղը։

Զինումաչինի թագաւորի դուռը մէկ էր, նրա աղջկերանց ուզողների թիւը հազար, ամենն էլ լիւխանազ ու թագաւորազ։ Աղջիկները չէին հաւանում, ամենին մերժում էին։ Մերժուած երիտասարդները զայրացած էին թագաւորի վրայ, դէպք էին որոնում նրանից վրէժ հանելու։ Նշանաւորներից երեք հոգի չըկարենալով վիրաւորանքը տանել, իրար հետ միացան, դեսպաններ ուղարկեցին Զինումաչինի թագաւորի մօտ. «կամ աղջիկներդ մեզ կնուծեան տուր, կամ դուրս արի կուլ տանք»։ Թագաւորը զօրեղ էր, վախ չունէր նրանցից, բայց կուլ սկսելուց առաջ աղջկերանց հարցրեց. «սիրելի զաւակներ, եթէ ձեր կամքումը կայ այդ թագաւորազների կինը դառնալ, ես դէմ չեմ»։ Երբ աղջիկները հրաժարուեցին, թագաւորը դեսպանների միջոցով պատասխանեց. «դուք չէք կարող իմ փեսէն դառնալ, համեցէք կուլ»։ Թագաւորազները դեռ յոյս ունէին, թէ սպանալիքը կօգնի. երբ վերջնական մերժում ստացան, կատաղութեան չափը կորցրին։ Վճռեցին մէկ մէկ յարձակուելով յամառ թագաւորի ուժը թուլացնել, փշրել։ Զինումաչինի թագաւորը բացի երեք աղջիկը էլ ուրիշ որդի չունէր. իրա զօրքերի գլուխն անցնելով դաշտ դուրս եկաւ, որ թշնամու դէմ կուլի։ Գթոտը նետ ու անեղը ձեռն առնելով ասեց. «Ոսկեթևիկ, ամօթ է ինձպէս փեսին, որ հայրդ մենակ մնայ կուլի դաշտում։ Ես ուզում եմ գնալ աւագ քրոջ ուզողին մի լաւ ջարդ տալ»։— «Իրանով ինձ կըբարձրացնես քոյրերիս աչքում, սիրելիս, գնա, ասեց Ոսկեթևիկը ու ճակատը համբուրելով ճամբայ դրեց։ Գթոտն իսկոյն դաշտ դուրս եկաւ, կարմիր մազը ծոցից հանեց ու ծվծվացնելով եղունգին քսեց։ Կարմիր ձին լոյս ընկաւ, մի ձեռք կարմիր զգեստ թամբին կապած։ Գթոտը ոտից գլուխ կարմրում մտաւ, կարմիր ձին նստած այն միջոցին կուլի տեղ հասաւ, երբ երկու կողմն էլ տաք տաք իրար խփում էին։ Անցաւ Զինումաչինի թագաւորի կողմը, թշնամու վրայ յարձակուեց, անխնայ կոտորեց թէ ինքը և թէ իրա ձին։ Թշնամի կողմը նրան կարմիր հրեշտակի տեղ ընդու-

լորի մօտ. «կամ աղջիկներդ մեզ կնուծեան տուր, կամ դուրս արի կուլ տանք»։ Թագաւորը զօրեղ էր, վախ չունէր նրանցից, բայց կուլ սկսելուց առաջ աղջկերանց հարցրեց. «սիրելի զաւակներ, եթէ ձեր կամքումը կայ այդ թագաւորազների կինը դառնալ, ես դէմ չեմ»։ Երբ աղջիկները հրաժարուեցին, թագաւորը դեսպանների միջոցով պատասխանեց. «դուք չէք կարող իմ փեսէն դառնալ, համեցէք կուլ»։ Թագաւորազները դեռ յոյս ունէին, թէ սպանալիքը կօգնի. երբ վերջնական մերժում ստացան, կատաղութեան չափը կորցրին։ Վճռեցին մէկ մէկ յարձակուելով յամառ թագաւորի ուժը թուլացնել, փշրել։ Զինումաչինի թագաւորը բացի երեք աղջիկը էլ ուրիշ որդի չունէր. իրա զօրքերի գլուխն անցնելով դաշտ դուրս եկաւ, որ թշնամու դէմ կուլի։ Գթոտը նետ ու անեղը ձեռն առնելով ասեց. «Ոսկեթևիկ, ամօթ է ինձպէս փեսին, որ հայրդ մենակ մնայ կուլի դաշտում։ Ես ուզում եմ գնալ աւագ քրոջ ուզողին մի լաւ ջարդ տալ»։— «Իրանով ինձ կըբարձրացնես քոյրերիս աչքում, սիրելիս, գնա, ասեց Ոսկեթևիկը ու ճակատը համբուրելով ճամբայ դրեց։ Գթոտն իսկոյն դաշտ դուրս եկաւ, կարմիր մազը ծոցից հանեց ու ծվծվացնելով եղունգին քսեց։ Կարմիր ձին լոյս ընկաւ, մի ձեռք կարմիր զգեստ թամբին կապած։ Գթոտը ոտից գլուխ կարմրում մտաւ, կարմիր ձին նստած այն միջոցին կուլի տեղ հասաւ, երբ երկու կողմն էլ տաք տաք իրար խփում էին։ Անցաւ Զինումաչինի թագաւորի կողմը, թշնամու վրայ յարձակուեց, անխնայ կոտորեց թէ ինքը և թէ իրա ձին։ Թշնամի կողմը նրան կարմիր հրեշտակի տեղ ընդու-

ներով, առջևից սարսափած փախաւ Գթոտը յաղթութիւն տանելուց ետ դաշտում չըմնաց, ակնթարթում բազմութեան աչքից անհետացաւ, ձին արձակելով մազը դրեց ծոցը ու աղունակի կերպ առած մտաւ Ոսկեթևիկի կացարանը, ուր շատ շուտ հասել էր Կարմիր ձիաւորի քաջութեան լուրը:

Երկրորդ օրը միջնակ աղջկայ ուզողը իրա գօրքերով յարձակում արեց Չինուամաչինի թագաւորի վրայ, որ երեկուայ պարտութեան վրէժը հանի: Կռուի թէժ ժամանակ յանկարծ սիպտակազգեստ մի մարդ լոյս ընկաւ, սիպտակ ձիու վրայ, թուր ու ազեղը ձեռին յարձակում էր թշնամի գօրքի մէկ այս ու մէկ այն թևի վրայ, իրա դէմ եկած նետերը վնաս չէին տալիս, բոլորը պաշտպանում էր: Չինուամաչինի թագաւորն իրան օգնող ձիաւորին լաւ դիտում էր, մտադիր էր կռուի վերջը մօտենալ, շնորհակալութիւն անել, բայց մէկ էլ աչքը բաց արեց, տեսաւ, չըկայ:

Երրորդ օրը կռիւը լինելու էր Ոսկեթևիկի պատճառով: Երեք դաշնակիցները միացած յարձակուեցին, որ Չինուամաչինի գօրքին բոլորովին ջնջեն: Այս անգամ, ուղիղ որ, շատ նեղը լծեցին իրանց կատաղի գոռոցներով ու շեշտակի հարուածներով: Քիչ էր մնացել որ հակառակ կողմին փախցնեն—մէկ էլ տեսան օդում մի Սև ձիաւոր երեաց, սևակոլով ձիաւորը փռուալէ մօտեցաւ ու սկսեց զարհուրելի կոտորածը, ինքը թրով, ձին բերանով ու ստներով: Չինուամաչինի գօրքերը նորից սիրտ առան ու քաջաբար կռիւը շարունակեցին: Երեք թագաւորագները, երբ նկատեցին որ Սև ձիաւորն իրանց է փնտրում, լեղապատառ եղած դէս դէն փախան: Գթոտն այս ոգևորուած մի-

ջոցին չէր նկատել, որ իրա վիրաւորուած բազկից արիւնը թափուում է: Չինուամաչինի թագաւորն այդ տեսել էր. հէնց որ Սև ձիաւորը շունչ առնելու համար մի բոսլէ կանգ առաւ, թագաւորը վրայ վազեց ու իրա մետաքսէ թաշկինակով ձիաւորի բազուկը փաթաթեց: Վրայ չը հասցրեց խօսքով շնորհակալութիւն անելը, որովհետև Սև ձիաւորը նոր ուժով ընկաւ թշնամու մնացած գօրքի վրայ, որ նրան սև սասանի տեղ ընդունելով առջևը սարսափած փախչում էր: Երեք թագաւորագներն էլ գերի ընկան Չինուամաչինի թագաւորի ձեռք: Ժողովուրդը ցնծութեան մէջ էր, շարունակ օրհնում էր Սև, Կարմիր, Սիպտակ ձիաւորներին արևը՝ առանց իմանալու թէ ուր են անյայտացել նրանք: Գթոտը քոլոզը զլխին վերագարծել էր Ոսկեթևիկի մօտ ու անցկացածը նրան պատմել: Թագաւորը վերջին անգամ աւելի ուրախ բարձրացաւ աղջկայ մօտ ու անվերջ գովում էր Սև ձիաւորին. «Հայր, ասեց աղջիկը, ճշմարիտ, այդ ձիաւորները շատ քաջ ու հերոս մարդիկ պիտի եղած լինեն, որ թշնամի գօրքերին կոտորելուց ետ վիրաւորներին էլ բռնեան են առել»:—«Լեզուով չեմ կարող ասել թէ ինչքան գոհ եմ այդ քաջերից, խօսեց թագաւորը. երանի նրանցից մէկն ու մէկը լոյս ընկնէր, սրտիս ուղած լաւութիւնը նրան անէի: Անշնորք իշխանագներն էին ուզում ինձ փեսայ դառնալ. ուր էր թէ այդ ձիաւորները գային, աղջիկներին ուղէին, տասն ձեռով կրտայի»:—«Կարելի է, աղբատ աղէք են. ինչպէս կը յօժարուէիր նրանց փեսայ ընդունել, հայր»:—«Թող աղքատ լինեն, աղջիկըս, դրանց փողով հարստացնելը դժուար բան չի»:

— «Հապա եթէ այդքան հաւանում էիր, ինչո՞ւ մէկն ու մէկին չէիր հրաւիրում պալատ, որ փեսայ ընտրէինք, ասեց Ոսկեթևիկը: — «Իմ միտքս էլ այդ էր, աղջիկս, ուզում էի բերեմ, երեքին էլ բերեմ, ձեր առաջ կանգնացնեմ և ստիպեմ, որ անպատճառ ուզէք: Բայց այն օրհնուածի տղէքը այնպէս աչքէս փախան, որ մնացի ան ու վիշ անելիս»: — «Հայր, եթէ նրանցից մէկն ու մէկին տեսնես, կըճանաչես, հարցրեց աղջիկը: — «Կարմիր ու սիպտակ ձիաւորներին լաւ չեմ յիշում, սրդի, բայց սերին հինգ մատիս պէս կըճանաչեմ, եթէ աչքովս ընկնի: Մետաքսէ թաշկինակս էլ կապել եմ բազուկը»: — «Վերջի ձիաւորը իմ բազդն է եղել, հայր, ան, սէր էր թէ նա իմաստուն լինէր, այդ քո խօսքերը լսէր ու քեզ փորձելու համար այստեղ լոյս ընկնէք»: — «Այդպիսի ուրախութիւն ինձ սով կըտայ, հառաչեց թագաւորն ու ետ դարձաւ, որ բազմոցին նստի վիշտը ծածկելու համար, յանկարծ աչքովն ընկաւ մի գլխաբաց երիտասարդ, խունացած վերարկուով: Թագաւորը շփոթուեց ու գայրացած հարցրեց աղջկանը. «Սով է այս մարդը, ի՞նչ գործ ունի այստեղ քո օթեանում»: — «Երևի քեզ մօտ գործ ունի, որ եկել է, սառնութեամբ պատասխանեց Ոսկեթևիկը, էլ ինչո՞ւ ես ինձ վրայ գայրանում»: — «Սա ի՞նչ գործ պիտի ունենայ ինձ հետ, եթէ անծանօթ մարդ է, ներքև կսպասէր, ոչ թէ այստեղ կըպրծնէր աներեսի պէս»: — «Հայր, այդ ի՞նչ ասիր, տաքացաւ աղջիկը, մի՞թէ քո լաւ հիւրին այդպէս ես ընդունում: Զէ՞ որ այս ըոպէիս դու սրա վրայ էիր խօսում»:

— «Խելառուել ես, ի՞նչ է, աղջիկ, ո՞վ է այս

մարդը, որին սպասուհիդ վառնդելու տեղ ներս է ընդունել»: — «Հայր, բարկութիւնդ թող, և իսկոյն կըտեսնես, որ սա այն քաջ երիտասարդն է, որին հինգ մատիդ պէս էիր ճանաչում: Յիշիր Սև ձիաւորին»: Թագաւորը լոյսի առաջ բռնելով Գթոտին՝ յիշեց ձիաւորի դիմագծերը ու մեղմանալով խօսեց. «հա, նման է նրան, սիրելի աղջիկ, բայց... — «Ի՞նչ բայց, հայր»: — «Այնքան զօրքեր կոտորողը չի կարող այսպէս անխօս, հանգիստ կանգնել, այն էլ այսպիսի խունացած հագուստում»: — «Ես հաւատում եմ, որ իսկ և իսկ նա է, պատասխանեց աղջիկը, եթէ դու թերահաւատ ես, կարող ես ստուգել թաշկինակդ պահանջելով»: — «Հա, լաւ յիշեցրիր, աղջիկս, խօսեց թագաւորը, կասկածոտ աչքով նայելով Գթոտին. եթէ սա այն քաջն է, ոչ թէ թաշկինակը միայն պիտի ցոյց տայ, այլև բազկի վրայի սպին»:

Գթոտը լուռութեամբ ծոցից հանեց մետաքսէ թաշկինակը, տուեց Ոսկեթևիկին, նա էլ հօրը. յետոյ բազուկը բանալով մեկնեց թագաւորին: Սա սպին իրա մասի ծայրով շփելով խօսեց. «հաւատում եմ, աղջիկս, սա իսկ այն երիտասարդն է, զուր չի ասած, վախեցիր այն ջրից, որ ոչ խըջայ և ոչ թըջայ: Այժմ ասա, ի՞նչ անեմ, որ սրա արած լաւութեան տակից դուրս գամ: Երևի վաղ թէ ուշ մի օրհնեալ դէպք էլ կարմիր ու Սիպտակ ձիաւորներին լոյս կըբցի»: Գթոտը երեսը շուռ տուեց. Ոսկեթևիկը ծիծաղելով հօրը մօտեցաւ ու ականջին փսփրացաւ: Թագաւորը բացականչեց, «ի՞նչ ես ասում, աղջիկս, ուրեմն այժմ ես խօսում եմ երեք քաջերի հետ: Շատ ափսոս»: — «Ինչո՞ւ, հայր, հարցրեց Ոսկեթևիկը: — «Հապա ի՞նչ է, սա

լանն է ու միայն մի հոգի, կռուածադիկ պիտի դառնայ երեք աղջկերանցս համար: Է՛հ, դրա վրայ յետոյ կը խօսենք, այժմ գնանք ճաշի ինձ մօտ»: Թագաւորը պալատականներին կանչեց, մեծ դահլիճում շարքով կանգնացրեց աղջիկներին և Գթոտին հրաւիրելով ստեց. «քաջ երիտասարդ, իմ գահի ժառանգները սրանք են, որին սիրտդ ուզում է, նրան կին ընտրիր»: — «Թագաւորը ողջ լինի, պատասխանեց Գթոտը, կռուածադիկ դառնալու մտադրութեամբ չեմ եկել այս աշխարհը, նա կըլինի իմ կինը, ով վաղուց իմ նշանածն է, որի համար ամեն նեղութիւն յանձն առած, անցել եմ ծով ու ցամաք ու հասել այստեղ»: Աւագ ու միջնակ աղջիկները կարմրելով ասին. «ուրեմն դու այն տղէն ես, որ տարիներ առաջ երևացիր Աղջկալժում ու մեր քրոջ թևերը խլեցիր»: — «Այո, սիրելիք, այդ քաղցր բազրը բաժին ընկաւ ինձ կեանքիս ամենաթշուառ օրերին: Այն ժամանակ, հայրական գահից զրկուած մի յուսակտուր մարդ էի. Աստծուն հազար փառք, կրկին վերադարձրեց կորցրած թագս. այժմ իմ աշխարհին պակասում է Ոսկեթևիկի պէս մի արժանաւոր թագուհի»: — «Ոսկեթևիկը վաղուց քոնն է եղել, քաջ երիտասարդ, գուարթ ձայնով խօսեց Չինուամաչինի թագաւորը, ինձնից ուրիշ բան ուզիր, որ քո լաւութեան տակից դուրս գամ»: «Թագաւոր, խօսեց Գթոտն ոգևորուած, Չմրութ գուշի մէջքին նստած երբ անցնում էի ծովի երեսով, մշտքիս մէջ ես փնտրում էի Ոսկեթևիկին և ոչ գանձ ու հարստութիւն»: — «Ողջ պալատով քեզ ենք պարտական, աննման տղայ, խօսեց թագաւորը, ով գիտէ, ովքեր պիտի լինեն միւս փեսաներս: Երբ չես ուզում իմ

աշխարհում մնալ, գոնէ վերցրու հարստութեանս մի երրորդ մասը ու տար վայելիր աղջկանս հետ»: — «Խնդիրդ չեմ կոտորի, պատասխանեց Գթոտը, և կը վերցնեմ այնքան, որքան իմ Չմրութ-գուշը կարենայ»: — «Գանձերի հետ նուիրում եմ քեզ և իմ Չմրութ-գուշը, աւելացրեց Չինուամաչինի թագաւորը:

Երկու Չմրութ-գուշերը իրանց շալակն առան թագաւորի գանձերի մի երրորդ մասը ու ծովի երեսով ճամբայ ընկան: Գթոտն ուզում էր իրա Չմրութի մէջքին նստել, Ոսկեթևիկն այդ չըթողեց, իրա թևերը հագաւ, իրա զարդերն ու սենեակի ոսկիքը զարսեց մի թևի վրայ, մնաք բարով ասելով հօրը, քոյրերին ու ժողովրդին, միւս թևի վրայ նստացրեց սիրելի նշանածին ու թուաւ երկնքի երեսով: Չմրութ-գուշերի հետ հասան այն երկիրը, ուր կարօտ սրտով նրանց սպասում էին թէ պառաւ թագուհին և թէ զղջումի եկած ժողովուրդը: Յնծութեամբ ընդունեցին սիրուն Ոսկեթևիկին: Եօթն օր ու գիշեր հարսանիքի պատճառով ուրախութիւններ արին, ամենն էլ իրանց բազրաւոր էին զգում, որովհետև Գթոտի միջոցով իրանց աշխարհը բացի անհուն գանձերը, իրա մէջ ունէր աննման Ոսկեթևիկին ու հագուազիւս Չմրութ-գուշերին:

ԴԵՐՎԻՉՆ ՈՒ ԻՐԱ ՍԱՆԻԿԸ

Կար, չըկար, մի թագաւոր կար, գանձերով հարուստ ու ի, իսկ սրտով դաժան ու անտանելի: Ժողովուրդն այնպէս էր նրա ձեռին վայում, ինչպէս գորտը օձի բերանում, ծանր հարկերի երեսից էլ հովու-թիւն չունէր: Անկարեկից թագաւորն իրա խղճի առաջ արդարանում էր այսպէս. «Երբ որ Աստուած իբրև երկնքի տէր ինձ պատժում է անժառանգ թողնելով, ես էլ իբրև երկրի տէր կը պատժեմ ինձանից տկարներին, իմ հը պատակներին: Ինչո՞ւ նրանք համ զաւակների կողմից մխիթարուած լինեն, համ ապրուստի: Թող այնքան նեղ օր քաշեն հարկահանների ձեռից, որ հողիները դուրս գայ»: Այսպէս վարուելով խստասիրտ թագաւորը ժողովրդին այրում, խորովում էր: Ամեն կողմ սուգ ու կոծ էր:

Օրի մի օրը, երբ պալատի առաջ թթուած դէմքով թագաւորը նստած էր, մի դէրվիշ մաշուած, խուսացած վերարկուն ուսերին, բակը մտաւ բաժին ուղերու: Թագաւորը մնաց լուռ, կարծում էր թէ դերվիշն իրան անխօս տեսնելով կը հեռանայ, բայց դերվիշը երկնքի հողէառ հրեշտակի պէս առաջը ցըցուեց, աչքը գցեց նրա երեսին ու նոյնպէս լուռ մնաց: Թագաւորն այս յանդուգն արարքից շփոթուեց, սակայն զարմանքն այն էր, որ այսօր, առանց մաղձերը

թափելու, ձայն տուեց սպասաւորներին, որ դերվիշի բաժինը տան ու ճանապարհ դնեն: Իսկոյն սպասաւորները նրան մի կողմ քաշեցին ու չնչին բաժին տալով առաջարկեցին, որ հեռանայ թագաւորի աչքից: Դերվիշը դժգոհաց ու բարձրաձայն ասեց. «Ես մուրացկան չեմ, որ զլիններիցդ ցանում էք, ես Աստուծո ծառան եմ ու եկել եմ թագաւորի դուռ, թագաւորին վայել բաժին տուէք, որ տանեմ չունևոր եղբայրներիս բաշխեմ»:— «Մենք շատ տալու իրաւունք չունենք, դերվիշ, ասին սպասաւորները, միթէ մեր թագաւորի բնոյթի մասին չե՞ս լսել: Մի դժգոհալ, երբ նա մտամոլոր նստած է, թէ չէ քեզ կը պատուհասի»:— «Նրա պատուհասից դերվիշը վախեցող չի, նրա մտամոլորութիւնն ինձ իրաւունք է տալիս աւելի մեծ բաժին պահանջելու, խօսեց դերվիշը, որովհետև ես այնպիսի հնար կասեմ, որ թագաւորի բոլոր վիշտն ու տխրութիւնը կը հեռանան: Փորձի համար, եթէ ցանկանում էք, յայտնեցէք թագաւորին, որ դերվիշն ուզում է հետը խօսել»: Իսկոյն մի սպասաւոր վազեց թագաւորի մօտ. «տէր, դերվիշն ուզում է քեզ հետ խօսել»:— «Թող գայ, տեսնեմ ի՞նչ է ասում, հանդարտ պատասխանեց թագաւորը: Դերվիշն եկաւ. խոր զուխ վէր բերեց ու հարցրեց. «աշխարհի տէր, ինչո՞ւ ես այդպէս տխուր, քանի որ ամեն բարիք ունես ձեռիդ տակ»:— «Դերվիշ բաբա, պատասխանեց թագաւորը, ոչ մի բարիք չի կարող մոռացնել անզաւակութեան կսկիծը, որից ես հալուում, մաշուում եմ»:— «Կարելի է, Ստեղծողին զայրացրել ես քօ կեանքով, քօ վարմունքով, դրա համար քեզ կսկիծ է տուել»:— «Ստեղծողի անունը մի տալ, դերվիշ բաբա, թէ չէ պատիժ կուտես: Ես

Ստեղծողի հետ խոսով եմ, հասկացիր»։— «Թագաւոր, դուր ես ինձ պատժիւ անուճով ահ տալիս. Աստծու ծառայ դերվիշը մարդկային պատժից վախ չունի. նա մոլորուածներին ուղիղ ճանապարհի բերելու համար ճշմարտութիւնը համարձակ ասում է բոլորի ճակատին, ինչքան էլ դառ լինի»։ Թագաւորը ցնցուեց աղքատ դերվիշի աներկիւզութիւնից ու ձայնը փոխելով խօսեց. «դէ որ այդպէս է, քեզ իրաւունք եմ տալիս, այդ ճշմարտութիւնն ասա իմ ճակատին, թող դառ լինի»։— «Շատ բարի, թագաւոր, խօսեց դերվիշը, դէ լսիր: Երբ որ ես Աստծու խօսքը քարոզելու համար ժողովրդի մէջ ման էի գալիս, ինձ թւում էր թէ վայնասունի ծովով եմ անցկենում: Դու պսպատի մէջ նստած, չես իմանում, թէ ի՞նչ յաւետենական նշովք է ծանրանում քո տան վրայ: Քո անթիւ հպատակներից որն է համարձակում քեզից պահանջ անել, որ դու Ստեղծողից մեծամեծ պահանջներ ես անում. որ առաքինութիւններից համար, Քո բռնած գործերը թագաւոր մարդի համար այնքան անվայել են, որ շատ գոհ պիտի լինես, որ մինչև այսօր Աստուած քեզ ողջ է թողել: Յանցանքներդ սարի չափ են, արգարութիւնդ կորկի չափ»։ Թագաւորն ամօթից կարմրած աչքերը պցել էր գեանին:— «Թագաւոր, շարունակեց դերվիշը, եթէ մեղքերդ կըզղջաս ու քաւելու միջոց կըփնտրես, այն ժամանակ քեզ կասեմ զաւակ ունենալու հնարը»։— «Քո բոլոր յանդիմանութիւնները տեղին են, դերվիշ բաբա, խօսեց թագաւորը, ես անարժան եմ Աստծու շնորհներին, լիովին զգում եմ յանցանքիս մեծութիւնը: Երկար ժամանակ արտասուքի գետեր եմ հոսեցրել ժողովրդի աչքերից, երես չունեմ

երկնքից զաւակ խնդրելու»։— «Սրտնեղելու կարիք չը կայ, թագաւոր, մխիթարեց դերվիշը, փափազիդ կատարումը Աստծու ձեռին դժուար չի, եթէ ծուռճամբից կնւղղուես: Այժմ ասա, ինչ որ ասեմ, կատարելու ես թէ չէ»։— «Դերվիշ բաբա, խօսեց թագաւորը յուզուած, եթէ երէկ կամ մէկէլ օրն ասէիր, չէի անիլ, բայց հիմի, երբ քար սիրտս փափկելու վրայ է, ինչ ասես կըկատարեմ ու թագուհուն էլ կատարել կը տամ, միայն թէ երկինքն ինձ պէս խստասրտի, դաժանի հետ հաշտուի ու ժառանգ տայ»։— «Ուզածդ գլուխ կըգայ միայն ժողովրդի բերանով, որովհետև քո գլխի ու սրտի վրայ ծանրացողը նրա նշովքն է, ամենից առաջ ժողովրդի հետ պիտի հաշտուես»։— «Ի՞նչպէս հաշտուեմ, դերվիշ բաբա, կերպը ցոյց տուր, ինչ ասես, պատրաստ եմ»։— «Ահա քեզ կերպը, հրամայի ծառաներիդ, որ ժողովրդի խեղճերին, տնանկներին կանչեն Մեծ աղբիւրի կուշտը, ուր քո այգին է: Դնա այնտեղ, խեղճ ու թշուառները հետ սրտաբաց խօսիր. հետաքրքրուիր ամենի վիճակով, տես ի՞նչ կարիքներ ունեն. հագուստ չունեցողին հագուստ տուր, փող չունեցողին փող: Ամեն պակասութիւն լրացնելուց ետ նստացրու ամենին ընդհանուր սեղանի շուրջը: Նրանք քո զաւակներն են, դու իբրև երկնքի կամքով կարգուած հայր նստիր նրանց մէջ: Ժողովուրդը, որ մինչ օրս քո միջոցով զրկանք է քաշել ու արտասուք կուլ տուել, թող քո աչքի առաջ լիանայ կերուխումով ու քեզ բարի ցանկանալով այնքան օրհնի, ինչքան որ մինչև օրս անիծել է. երբ ճաշը վերջանայ, չես թողիլ սուփրէն ծառաները հաւաքեն, այլ դու և թագուհին բոլորը վեր կը բաղէք, բաժինների մնացորդ-

ները կըտեղաւորէք, ամանները աղբրի ջրերում կը լուանաք: Այդ ձեր խոնարհ վարմունքով օրինակ կը տաք երկրի գոռոզ մեծամեծներին: Նրանք տեսնելով, որ աշխարհի տէրն ու տիրուհին աշխատանքը սիրում են, իրանք էլ դառ քրտինքով ապրող ժողովրդին չեն արհամարհիլ: Դրանով Աստծու աչքը վրէժ կը քաղցրահայ ու հետո կը հաշտուի»: — «Յետոյ ի՞նչ կըլինի, դերվիշ»: — «Յետոյ այն կըլինի, որ իբրև հաշտութեան նշան երկնքից մի խնձոր կընկնի: Այդ խնձորը երկու մաս կանես, կէսը դու կուտես, կէսը կըտաս թագուհուն»: — «Օգուտն ի՞նչ կը լինի, դերվիշ, եթէ այդ բաներն անեմ»: — «Օգուտն այն կըլինի, որ դու տարու գլխին զաւակ կուռնենաս: Եւ կարող է պատահել, որ մէկի տեղ երկուսը լինի»: — «Հա՛... այդ շատ լաւ բան էս ասում, պայծառ դէմքով խօսեց թագաւորը: — «Եթէ երկուսը լինի, թագաւոր, խոստացիր, որ մէկն ինձ տաս, էս էլ անզաւակ եմ»: — «Շատ բարի, դերվիշ բաբա, խոստանում եմ: Ահա քո մխիթարիչ խօսքերի համար ստացիր իմ գանձերից առատ բաժին ու տար, ում ուզում էս, բաշխիր: Տարու վերջին կըսպասեմ քեզ»:

Դերվիշը սրտումը գոհ, որ Աստծու կամքը կատարում է, խոր գլուխ վէր բերեց թագաւորին ու ծոցը ոսկով լի հեռացաւ պալատի դռնից:

Թագաւորն էլ իրա խոստումը բռնեց. այդ օրից դաժանութիւնը թողեց, դէմքը քաղցրացրեց ու ժողովրդի սիրտը շահելու համար բոլոր հարկերը թեթեւացրեց, յետոյ խեղձերին, վշտացածներին հրաւրեց Մեծ աղբրի գլուխը: Ընդարձակ մարգագետնում, փռած սուփրի շուրջը նստացրեց, ինքը մէջները նըստեց, ամենի վիշտը հարցրեց, խոստացաւ կարիքները

կատարել, սպասաւորեց նրանց, վերջն էլ Աստծու կամքով երկնքից խնձոր ընդունեց: Եւ ինչպէս դերվիշը գուշակել էր, տարու գլխին երկու տղայ ունեցաւ: Թագուհու ցնձութեանը չափ չըկար, իսկ թագաւորի ունքերից կասես մեղր կաթելիս:

Մի քանի ամսից ետ, երբ մանուկներն սկսան ծիծաղել, թագուհին սրտակոտոր ասեց թագաւորին. «դու դուր տեղ խոստացար մանուկների մինը տալ դերվիշին, մի՞թէ մենք շատ ունենք: Սրանց մի ժպտը աշխարհ աժի, ինչո՞ւ թափառականի ձեռը գցենք: Աղքատ մարդ է, երբ որ գայ, ոսկի տալով գոհացրու ե ճամբու դիր» — «Ձէ, թագուհի, հազիւ դերվիշի միջոցով գղջացել, ուղիղ ճամբի եմ եկել, նորից մի ծուխ: Աստծու բարկութիւնից սիրտս դողում է, էլ նրան հակառակ չեմ գնալ: Թո՞ղ բարի դերվիշը գայ ու իրա բաժին մանուկը վերցնի»:

Թագուհին իբրև կնիկ, սբտով աւելի տաք էր դէպի մանուկները, յօժար չէր ոչ մինից բաժանուելու: Դերվիշին խաբելու համար մէկին լոյս չէր հանում: Ողջ տարի անցկացաւ, դերվիշը գլուխը չերևաց: Թագուհին սրտում ցնձալով ասեց. «երևի դերվիշը մեռել է, որ չեկաւ, փառք Աստծու, տղէս ինձ մնաց»: Թագըրած զաւակը լոյս հանեց ու առաջարկեց թագաւորին, որ ինչպէս աշխարհի օրէնքն է, կնքել տայ, անուն դնի: Ամեն ինչ պատրաստ էր մկրտութեան համար, մնում էր յարմար անուններ գտնելը: Ահա մէկ էլ տեսան դերվիշն իրա խունացած վերարկուն ուսերին տնկուեց պալատի առաջ ու բարձր կանչեց. — «աչքդ լոյս, թագաւոր, խոստումդ արդար կատարել էս ու փոխարէն հատուց ում ստացել»: — «Դերվիշ բաբա,

ուրախ դէմքով պատասխանեց թագաւորը, օրհնեալ լինի Արարիչը, որ քեզ ուղարկեց ինձ մօտ: Այժմ թող քո բերանով էլ մանուկներին անուն դնի»: — «Թագաւոր, ասեց դերվիշը, երկուսն էլ զժրիկ, առողջ երեխաներ են. առաջին օրհնութիւնն այդ է, որ Աստուած պարգևելէ սրանց, մնում է երկրորդը, օր պիտի ստանան մօրից ու դաստիարակից»: Երբ մկրտութիւնը վերջացաւ, թագաւորը կանչեց. «գէ, անի, թագուհի, վերցրու քո զժրիկը, սրան շատ էիր սիրում, այս մէկը մեզ, միւսին էլ բարի ճանապարհ ու աջողութիւն»: Ժողովուրդը նստեց կնուներէ ճաշին, մեծ պատիւներ արեց դերվիշին, որ պատճառ դառաւ իրանց բարեբաղդութեան: Ամենը ցնծում էին բացի թագուհուց: Սա մի գլուխ աղաչում էր, որ դերվիշը երեխի փոխարէն գանձ վերցնի, բայց դերվիշը գլուխն օրօրելով ասում էր. «Թագուհի, սա Աստուած ընծան է, իրաւունք չունեմ թողնելու. ես իմ պարտքը պիտի կատարեմ իբրև դաստիարակ, դու էլ քո պարտքը իբրև մայր: Մնաք բարև, ասեց դերվիշը ու մանուկը վերարկուի փէշում կոլուած գնաց իրա ճանապարհը: Քաղաքէ քաղաք, աշխարհէ աշխարհ ման եկաւ. քանի սանիկը փոքր էր, գրկած ու շալակած էր ման ածում, երբ ոտնառտեց, խկոյն դցեց ընութեան ծոցը, որ ազատ մեծանայ: Անունը դրեց Քաջիկ: Յետոյ դերվիշն սկսեց կրթել սանիկի թէ մարմինը և թէ միտքը: Ինչ որ շնորհք ունէր, օր օրի վրայ հալելով ածում էր նրա սրտի ու գլխի մէջ: Ուզում էր սանիկին այնպէս դաստիարակել, որ պիտանի լինի թէ իբրև մասնաւոր մարդ և թէ իբրև աշխարհի կառավարիչ: Ինչ որ դաստիարակն ասում էր, սանիկն ուշի ուշով կա-

տարում էր. խողերի, ճարպիկութիւնների մէջ ետ չէր մնում իրա վարպետից: Իսկ վարպետը մի զարմանալի մարդ էր, ամեն շնորք մէջը կար: Ամեն դէպքին մի խրատ էր ասում. — «Լսիր, սանիկ, օրի մի օրը պիտի իրարից բաժանուենք, բայց աշխատիր, որ քաղցր յուշերով բաժանուենք. Մարդ կեանքի մէջ առաջ պարտականութիւններ պիտի կատարի, ապա իրաւունքներ պահանջի: Շատերի եմ ճանաչում, որ սրա հակառակն էին անում: Տղամարդութիւնը կեանքի դժուարութիւնների դէմ կռուելու մէջն է: Շատ երիտասարդներ եմ տեսել, որոնք շուտ յուսահատոււմ էին: Աշխարհում ամենաթշուառը նա է, ով դժբաղտութիւն չի տեսել: Եկած նեղութեանը պիտի համբերութեամբ յաղթել: Մարդկային բաղդաւորութիւնն ու քամբաղդութիւնը, իմացիր, միևնոյն սանդուխով են բարձր ու ցածր անում»: Սանիկը ճանապարհը շարունակում էր ու գլուխը կախ լսում խրատներին: — «Այնպիսի բան չբռնես, որ դէմ լինի խղճիդ. ինչքան էլ տեղդ նեղ լինի, ճշմարտութիւնը խօսիր, նրանից լաւ բան չըկայ: Սիրտը որ կայ, մարդու ամենամեծ գանձն է, նրան պիտի լաւ խնամք տանել: Բարութիւն արա համ բարեկամիդ, համ թշնամուդ, դրանով մէկին պահպանած կըլինես, միւսին յաղթած»: — «Յետոյ, հարցրեց սանիկը աչքը ձգելով ջրհորի մօտ շարուած կանանց վրայ. — «Իմացիր, ինչքան էլ բարի կին ունենաս, փորձանքից ազատ մնալ չես կարող, որովհետև աշխարհիս ամենամեծ փորձանքը կինն ինքըն է: Թէկուզ կինդ գեղեցկութեամբ աշխարհի առուքարը լինի, դարձեալ իմացիր, որ նա աչքի համար դրախտ է, բայց սրտի համար դժոխք»: Միշտ

այսպիսի խրատներ լսելով դաստիարակից սանիկը դարձել էր մի ընտիր, խելօք պատանի: Լաւ հասկանում էր թէ կեանքի ծովում ի՞նչ բանից պիտի հեռու մնալ երջանիկ լինելու համար: Բայց անկուշտի պէս միշտ ձանձրացնում էր դերվիշին, որ կրթիչ խրատները շարունակի: Նա իբրև խելօք դաստիարակ ասեց. «ման եկող տղայի ձեռ բռնելը յիմարութիւն է, պիտի թողնել, որ ինքը վազվզի: Այնպէս էլ կըրթութեան ամենալաւ մասն այն է, որ երիտասարդն ստանում է իրա սեփական ջանքերով, դառ փորձերով»: Այսպէս իմաստուն դաստիարակը Քաջիկի հետ երկար տարիներ զանազան աշխարհներ ման գալուց ետ մի օր ասեց. «սանիկ, եթէ քո մէջ ամբարած շնորքները կեանքի մէջ գործ ածել իմանաս, արժէ, որ վերջը թագաւոր դառնաս: Այսօր առաջին քննութիւնդ է, տեսնեմ՝ խելքի՞դ ես հետևում թէ աչքերիդ»: Մեծ ձորի ափին քերծեր ու քարափներ կային: Դերվիշը առաջնորդեց սանիկին դէպի ամենամեծ քերծը.— «Օ՛հ, ինչ ահռելի բերծ է, գոչեց սանիկը.— «Սխալու՞մ ես, մարդու համար իրա սրտի ազահութիւնն աւելի ահռելի է, քան թէ այս քերծը, պատասխանեց դերվիշը: Լսիր, այն քերծը բացուելու սովորութիւն ունի, մեծ է ու խոր, մէջը շատ բաներ կան, բայց դու այնտեղից պիտի հանես մի մոմակալ ու մի սուփրա. աւելի ոչինչ: Ուրիշ ինչ էլ որ աչքովդ ընկնի, ձեռ տալու իրաւունք չունես: Լաւ յիշիր այս պատուէրը»: Դերվիշը աչքերը երկինք դրած աղօթք արեց: Երկու րոպէ չէր անցկացել, մէկ էլ տեսնես, քերծը ճեղքուեց ու մի մութ այր բացուեց: Սանիկն շտապով ներս վազեց ու ի՞նչ տեսաւ. աչքեր ծակող անդին քարեր,

կարմիր ու սլալան մարգարիտներ, աջ ու ձախ, շեղջ շեղջ թափուած: Խելօք պատանին մի րոպէ գանձերի փայլից մնաց շմու՞ած, չըզիտէր ինչպէս վարուի, ձեռ տայ թէ թողի անարատ: Գայթակղութիւնը շատ զօրեղ էր, չըզիմացաւ, ազահութիւնից յաղթուելով մտահան արեց դերվիշի պատուէրը, լախ բաց արեց հագուստի ծոցերն ու գրպանները և ակներով, մարգարիտներով լցրեց: Նոր յիշեց, որ ներս է մտել մոմակալ ու սուփրա տանելու. մօտեցաւ նրանց, որ վերցնի ու դուրս գայ այրից, յանկարծ այնպիսի գոռոց ու դղրդոց լսուեց, որ սանիկը տեղն ու տեղը սասանեց: Պատանին վախեցած աչքերը բաց արեց ու տեսաւ այրի մուտքը ամուր փակուած, նոր զլխի ընկաւ թէ ինչի՞ հետևանք էր այդ. շատ փոշմանեց իրա անուշակալութեան վրայ, լաց լինելով շատ անգամ դերվիշին կանչեց, բայց արդէն ուշ էր: Նստեց խաւարում, երկար մտածեց, ճար ու ելք չըգտաւ: Նստելուց սրտնեղուելով վերկացաւ, թափառեց խոր այրի մէջ. թևերը մեկնած մթան մէջ ման ու ման արեց, կարծես ընկել էր դժոխքը, մատերով շոշափեց ոտի տակի գետինը, ոչ մի մխիթարութիւն, ոչ մի յոյսի կամ լոյսի կտոր: Երբ սրտի մէջ ազատուելու յոյսը մեռաւ, նա մի դառ սլփ արեց ու թլր՛փ գետնին փրուուեց: Ահա անսպասելի կերպով կուռը դիպաւ մի կոշտ բանի, մատը տարաւ շոշափեց, նման էր քարէ քլունգի: Մտքի մէջ փայլեց դաստիարակի պատկերը ու յանդիմանելով ասեց. «սանիկ, անփորձութիւնդ յաղթեց. աւելի հեշտ է խրատ լսելը, քան նրանց կատարելը: Ազահութեան ձեռից ընկար փորձանքի մէջ ու մեղքիդ պատիժը պիտի քաշես: Պարզ է, որ սու-

վից մեռնելու ես այստեղ, աւելի լաւ է, ինքդ քեզ համար գերեզման փորես ու մէջը պարկեսս:

Սանիկը քլունգը ձեռն առաւ, սիրտը մեռածի պէս թխկացրեց գեանին, քանդեց ու հողը փոսից բոռով դուրս տուեց: Որոշել էր փորել մինչև ուժերի հասնելը: Օր օրի վրայ փորում էր ու զարմանում, որ ուժերը չէին սպառուում: Աստուած գիտէ, թէ քանի շաբաթ էր փորել ու ինչքան խոր էր գնացել գերեզմանի մէջ, յանկարծ երիտասարդը, որի մէջ ապրելու յոյսը մեռել էր, ուրախ ճչաց խոր գերեզմանում: Յնծութեան պատճառը քլունգի ամուր հարուածն էր, որ վերջին անգամ խփելիս յատակը ծակեց. այդ ծակով նրա ականջն ընկաւ ջրի վշշոց: Գլուխը կռացրեց ու ինչ տեսաւ.— մի մեծ ջուր լափ տալէ նրա տակով հոսում է: Ինքն իրան ասեց. «աւելի լաւ է ջուրն ընկնել, քան գերեզմանում պարկել. եթէ խեղդուեմ, գոնէ ալիքները մարմինս լոյս աշխարհ կըհանեն»: Փորած ոտնատեղերով բարձրացաւ այրը, շորերը հագաւ, հետը վերցրեց սուփրէն, մոմակալը, իջաւ գերեզմանի յատակը, այդտեղ սուփրէն պատ տուեց մէջքին, մոմակալը ձեռին չըլսպ ընկաւ ջուրը, առանց իմանալու՝ գետ է թէ լիճ, նրա բարի բաղդից սուփրի ծայրը բացուեց, փուռեց ջրի երեսին ու չը թողեց, որ Քաջիկը ընկղմուի: Հոսանքի հետ առաջ շարժուելով մէկէլ աչքն այնտեղ բաց արեց, որ տեսաւ իրան լոյս աշխարհում ողջ և անփասս: Յամաք ելնելով շորերը հանեց, մզեց, նորից հագաւ: Հեռու ծուխ էր երևում, ուղղուեց այն կողմը, գտաւ մի պառաւի տուն, մեծ քաղաքի ծայրին: Բարի հողի էր սա, քաղցր ընդունեց երիտասարդին, շորերը կը-

րակի վրայ չորացրեց, քիչ ուտելիք, խմելիք բերեց առաջը: Քաջիկը պառաւին մարգարիտ տուեց. «տար փողոց, ծախիր ու սրա փողով պաշար ան»: Ինքը քնեց, որովհետև շատ յոգնած էր: Հանգստանալուց ետ պառաւին հարցրեց. «այս ինչ բնակութիւն է, նանի»:— «Մեծ քաղաք է, սրդի, թագաւոր է նստում և ինչ ասես կայ»:— «Ի՞նչ կայ ձեր քաղաքում, նանի, որ մարդ տեսնի ու դուրը գայ»:— «Տեսնելու բաներ շատ կան, սրդի, բայց քեզ պէս երիտասարդի համար զարմանալին մեր թագաւորի աղջիկն է: Առուքարի մասին լսել ես թէ չէ»:— «Ձէ, չեմ լսել, ո՞վ է, Առուքարը, նանի, պատմիր, լսեմ»:— «Նա մեր աշխարհի աչքն է, դու ինքդ պիտի տեսնես նրա շէնքն ու շնորքը, որ արմանաս, ես քեզ ինչ կարամ պատմել: Արարած երկրի երիտասարդների խելը տարել է, իմ անատամ բերանով նրա սիրունութիւնը բեզ մնց ասեմ: քանի երիտասարդներ են նրա սիրով մեռել, առանց կարենալու նրա հպարտ սիրտը գրաւել: Առուքարը եկողին մերժում է ասելով. «հեռացիր, իմ բաղդը դու չես, նա դեռ ճամբին է, ինձ չի հասել»: Այս խօսքերը տաքարիւն Քաջիկի սիրտը տակն ու վրայ արին. «հը՞, հարցրեց ինքն իրան, չըլինի՞ Առուքարը իմ բաղդն է, հը՞, կամ չըլինի՞ ես եմ նրա սպասած բաղդը: Շատ երիտասարդների հետ անի ես էլ իմ շնորքը փորձեմ»: Քաջիկը ուժեղ կայծող էր, արագ վազող էր, բաղցր երգող էր, հմուտ խաղացող էր: Մոռացաւ զլսով անցած փորձանքը, երբ քաղաքի զանազան գրաւիչ կողմերը տեսաւ: Վեր ու նիստը մեծ մարդկանց հետ էր, ով ասես, ուզում էր նրա բարեկամը դառնալ: Շէնք ու շնորքով ոչ մի իշխանի որդուց պակաս չէր: Յան-

կարծ երազումն էլի դերվիշը երկաց ու ասեց, «սուփ-
րէն ու մոմակալը գուր ես թողնում անգործադրելի,
նրանց մէջ հրաշալի գորութիւն կայ, բանացնելու
կերպը ահա այսպէս ու այսպէս է»:

Քաջիկը մտածեց տեսաւ, որ իշխանագնների հետ ոտ
մեկնելու համար հարկաւոր է մեծ տուն ունենալ, հրա-
ւէրքներ սարքել, հիւր գնալ, հիւր ընդունել: Այդ բանը
պառաւի խրճիթում գլուխ չէր գալ, իրա մօտի անգին
քարերն ու մարգարիտների մի մասը շուկայում գին
բռնացրեց, ստացած ահագին գումարով սալատանման
շէնք կանգնացրեց: Ներան ու դուրսը լաւ զարդարելուց
ետ ասեց. «այս տանը սազում է, որ մոմակալի ու սուփ-
րի հրաշալի գորութիւնը փորձեմ, տեսնեմ՝ ինչ կայ
սրանց մէջ, որ դաստիարակս պատուիրում էր՝ ամեն
ինչ թողնել այրի մէջ, վերցնել միայն այս երկու բանը»:

Քաջիկն ընդարձակ դահլիճում սուփրէն փռեց:
Այդ փռելն էր որ յանկարծ տեսաւ՝ աշխարհիս ամեն
տեսակ ուտելիք ու խմելիք լոյս ընկան նրա վրայ:
Քէֆն եկաւ. մենակ ինքն էր, բայց հարիւր մարդ կը
կշտանային: Ուրախ սրտով աջ ձեռք մեկնեց մոմա-
կալը վառելու: Վառեց ու սուփրին նստեց կերակուր-
ների համը տեսնելու: Մէկ էլ ինչ, տեսաւ մոմերի
միջից մի մի հոգի դուրս պրծան, մէկն ածույ, միւսը
երգող, երրորդը պարող, Նա սուփրի գլխին նստած
անթիւ բարիքներից վայելում էր ու գուարճութեամբ
նայում ածողին, երգողին, պարողին: Հէնց որ կշտա-
ցաւ, մոմերը հանգցրեց. նրանք էլ գլուխ տալով անե-
րևութացան: Սուփրէն էլ ծալեց, կերակուրները անե-
րևութացան իբր թէ բան չեղած: Սրա վրայ շատ ուրա-
խացաւ: Ամեն օր սալատանման տանը սրտի ուզածի

չափ վայելչութիւն էր քաշում ու դերվիշին օրհնում:
Բայց երիտասարդ սիրտը մի օր այսպէս հպարտացաւ,
«երբ մոմակալն ու սուփրէն այսպիսի գորութիւն ու-
նեն, որ իշխանագը կարող է ինձ հաւասարուել: Իժուար
չէ թագաւորին դուր գալ ու նրա Առուքար աղջկանը
կին առնել»: Հրաւէրք սարքեց իրա տանը, եկաւ
թագաւորն իրա մեծամեծներով, նստեց դահլիճում
մեկնած լիք սուփրի վրայ, պալատականների հետ
կերաւ, խմեց: Գլուխները տքացած ժամին Քաջիկը
մոմակալը վառեց, հիւրերի քէֆը շատ եկաւ, երբ
մինն ածեց, միւսը երգեց, երրորդը պարեց: Այսպէս
շարունակուեց մինչև ուշ գիշեր: Թագաւորը զարմա-
ցաւ, իրա կեանքում այսպիսի բան չէր տեսել, աղջկայ
մօտ Քաջիկին շատ գովեց. «սրա պէս շնորքով ու
գեղեցիկ երիտասարդ չի եկել իմ քաղաքը: Ի՞նչ անենք
որ իշխանագ չի, անի, ծանօթացիր, փեսացու ընտրիր,
վերջանայ»:

Առուքարն ինչքան որ անման էր գեղեցիկ
պատկերով, մեռաբսի պէս ընքոյշ ու երկար ծամե-
րով, այնքան էլ մեծասիրտ ու չրմահաւան էր: Քա-
ջիկի գէմքին ու կապսին հաւան էր, բայց զայրանում
էր, թէ նա հասարակ ծագումով ինչպէս է համար-
ձակում թագաւորի ու իշխանագների հետ ոտ մեկ-
նել: «Նա նրա պէսներին հող ու մոխրի տեղ էլ չեմ
դրել, հիմի հայրս առաջարկում է, որ նշանած ընտ-
րեմ: Եթէ այդ անեմ, այն ժամանակ իշխանագները
աշխարհի Առուքարի մասին ինչ կարծիք կը կազմեն:
Չէ, այդպիսի տղային պիտի իրա չափը ճանաչեցնել»:

Այս որոշումով աղջիկը մասնակցեց հօր խնջոյ-
քին, ուր մեծամեծները հետ հրաւիրուած էր և Քա-

Ղիկը, որ Առուքարի հետ ծանօթանայ, Սեղանի դարձը Առուքարն էր իրա ճարտար լեզուով ու գեղեցկութիւնով: Ամենը, ամենը նրա գլխովն էին պտըտուում, որ կուշտ կարենան նրա աչք ունքին նայել: Ճաշից ետ երբ բոլորը զբաղուած էին երգեցողութիւն լսելով, չարսիրտ Առուքարը կամենալով Քաջիկի բնաւորութիւնը փորձել, առաջարկեց նրան զառ գլորել: Սանիկի ականջում լսելի եղաւ դաստիարակի ձայնը. «մի անիլ այդ, թէ չէ փորձանքի մէջ կընկնես», բայց ջանել արիւնը յաղթեց, առաջարկն ընդունեց, ու վստահութեամբ սկսեց զառերը գցել: Առուքարը տանուլ տուեց. այդ բանը հօրը զարմացրեց, որովհետև Առուքարը յայտնի էր իբրև ճարպիկ խաղացող, առաջին անգամն էր, որ մի երիտասարդ իրա աղջկանը գերազանցում էր: Թագաւորը մտքումն ուրախացած ասում էր. «երանի գոռոգ աղջիկս մինչև վերջ տարուի ու հարկադրուած փեսայ ընտրի»: Խրախուսում էր աղջկանը խաղը շարունակել: Բոլոր մեծամեծները հետաքրքիր հետևում էին խաղին: Առուքարը տաքացած առաջ էր տանում խաղը ու տանուլ տալիս հօր գանձերը: Գանձերը վերջանալուց ետ պալատը մէջ բերեց: Քաջիկին զարմանալի կերպով զառը գալիս էր: Թագաւորը չէր նախանձում ապագայ փեսացուին, դրա համար թոյլ տուեց, որ տարուած աղջիկը քաղաքի վրայ էլ զառ բռնի: Քաղաքն էլ ձեռից գնաց: Աղջիկն անչափ դառնացել էր սրտում, բայց չէր երևացնում Քաջիկին. փորձեց ժողովրդին էլ խաղի մէջ բերել: Ժողովուրդն էլ գնաց: Մէջտեղը մնացին հայր ու աղջիկ, զրկուած ամեն գանձից ու փառքից: Առուքարը ճարը կտրած տեղի վերկացաւ ու բոլորի ներկայութեամբ

ասեց. «երբէք չի եղել, որ ես տարուեմ ու այսքան կուրուեմ մի երիտասարդի առաջ: Երևի դու ես, որին սպասում էի: Հպարտ գլուխս խոնարհեցնում եմ առաջդ, իբրև նշանած, եթէ յօժար ես»:— Առուքար, գոչեց Քաջիկը ցնծադէմ, երբ յօժարուում ես իմը լինել, երիտասարդների մէջ ինձ ամենաբաղդաւորը դարձնել, էլ ի՞նչ նշանակութիւն ունեն իմ աչքում աշխարհի գանձն ու ոսկին: Դրա համար էլ յայտնում եմ, այսօր ինչ որ գտաի մէջ տանուլ ես տուել, դարձեալ պատկանում են հօրըդ»: Թագաւորը հիացաւ փեսացուի մեծահոգութեան վրայ, այդ օրը օրհնեց նշանդէքը և խաղայ սրտով սպասեց հարսանիքի օրուան: Սակայն աղջիկը, որ գեղեցիկ պատկերի հետ գեղեցիկ հոգի չունէր, ուրիշ մտքի էր. նա մտադրուել էր վրէժ հանել տղից, որ հասարակ ծագումով եկաւ իշխանազների առաջը կտրեց: Ազնուութիւնը, որ գեղեցկութեան ընկերն է, Առուքարը չունէր, ուստի նենգութեամբ ուզում էր նրան ընկճել, որ գոռոգ սիրտը հովանայ: Քաջիկն ամենայն օր լինում էր պալատում: Առանձին ժամին աղջիկը հարցրեց տղին. «ինձ պէս գեղեցկուհուն հարսնացու շինեցիր ու դեռ չես ասում թէ ինձ սրչափ ես սիրում: Տեսնում ես, որ Թագաւորազ տղէքը մեր դռնից պոկ չեն գալիս: Պիտի բո սէրն իմանամ, որ ես տուած ուխտիս հաւատարիմ մնամ»:— «Ինչով ուզում ես, սէրս փորձիր, Առուքար, միամիտ պատասխանեց Քաջիկը:— «Դու շատ շնորքներ ունես, դրանց խորհուրդը քեզ մնայ, միայն ասա թէ ինչի՞ մէջն է քո գլխաւոր ոյժը»: Քաջիկի միտն եկաւ դերվիշի խրատներէից մինը. «ամենալաւ կինն էլ առանց փորձանքի չէ»: վտանգից

ազատ մնալու համար ասեց. — «ամենագորեղին հաստ
 թոկով կապում են և նա մնում է խեղճացած, ինձ
 բարակ պարանն էլ բաւական է»։ Այդ օրը ճաշից ետ
 տղէն ընել էր, աղջիկը իբրև կատակ կապկապեց նը-
 րան թոկով ու միւս սենեակում սպասում էր թէ ինչ
 կլլինի։ Քաջիկը գարթնեց ու ճլրմկոտալով թոկի
 կապերը կտրտեց։ Առուքարը խորամանկ ծիծաղով
 մօտեցաւ. «ես հաստատ դիտէի, որ քո ուժին երկա-
 թէ շղթան էլ չի դիմանալ, բայց ես թոկը փորձեցի»։
 Քաջիկը նրա գեղեցկութեամբ տարուած, ներեց ա-
 րած շարութիւնը և մագերը փաղաքշեց։ Նրա միտքն
 էր շուտ պսակուել ու գահ ժառանգել, իսկ Առուքարը
 հարսանիքի օրը դիտմամբ յետաձգում էր իրա նենգ
 միտքը գլուխ բերելու համար։ Մի օր հարցրեց. «սի-
 րելի, զառ խողալու մէջ քեզնից յաղթուեցի, ի՞նչ
 կարող եմ ուժի մէջ քեզ հետ մրցել։ Ասա, ի՞նչը կա-
 րող է ուժեղ մարդին յաղթել»։ Այս ասելով տղի վը-
 գով փաթաթուեց ու աչքերին նայելով հարցը կրկնեց։
 Քաջիկի սէրն այնքան թէժ բորբոքուած էր, որ ուշ
 չը դարձրեց աղջկայ խորամանկ հանգին, անկեղծօ-
 րէն պատասխանեց. «իմ մեծահոգի վարմունքի դէմ
 ամօթ է, որ ինձ վատութիւն ցանկանաս, Առուքար։
 Ինչպէս նենգամիտ, քնքոյշ խօսքն աւելի թունաւոր է
 արդար, կոպիտ խօսքից, այնպէս էլ աղիքի նուրբ լարը
 աւելի հատու է քան հաստ ճոպանը։ Իմացիր, ինչ զօրեղ
 արարած էլ լինի, եթէ նրա երկու բթերը երկտակ
 լարով կապկապեն, յաղթուած է ու յաղթուած»։

Իրանից ետ աղջիկն այնքան աչք պահեց, որ
 Քաջիկը միամիտ քնեց։ Պատրաստի լարով նրա ձեռի
 բթերը կապկապեց։ Քաջիկը գարթելով ուժ տուեց

որ մասներն իրարից արձակի, չեղաւ։ Մենակ էր սե-
 նեակում, քանի որ փորձ արեց լարին յաղթել, այն-
 քան աղիքէ լարը սրուելով խոր կտրեց բթերը և մը-
 տաւ մսի մէջ։ Տղէն կսկիծից ընկճուած խօսեց. «ինձ
 պէս միամիտ սիրտ ունեցողին արժանի է այս չար
 կատակը»։ Այդ վայրկեանին աղջիկը կողքի սենեակից
 դուրս պրծաւ ու հեգնանքով ասեց. «ի հարկէ ար-
 ժանի է քեզ այս անուշ կատակը, որ հասարակ ծա-
 գումովդ եկար թագաւորի փեսայ դառար ու Առու-
 քարի անունը հողի հաւասարեցրիր, վրէժ հանելու
 ժամը հասել է, քեզ պէս յանդուգին պիտի պատժել»։
 Անգութ կտրած գեղեցկուհին դահիճ կանչեց, որ գլուխը
 տայ ու կորցնի, Քաջիկը նրան ասեց. «աղաչում եմ,
 դեռ գլուխս մի տալ, Առուքար։ Ճշմարիտ ես ասում,
 ես անարժան ծագումովս չըպիտի քեզ հարսնացու
 ընտրէի։ Այսքան պատժելուց ետ թող շունչս վրէժ
 մնայ, աշխարհի մի անկիւնում ապրեմ ու արևդ օրն-
 նեմ։ Յիշիր, որ ես ոչ մի վատութիւն չեմ արել ոչ
 քեզ, ոչ քո գերդաստանին»։ — «Լաւ, կեանքդ քեզ եմ
 բաշխում, ասեց աղջիկը, վեր կաց և հեռացիր այս
 քաղաքից»։ Առուքարը վախ չըգգալով ոչ հօրից և ոչ
 խղճի դատաստանից, խլեց թէ սուփրէն, թէ մոմակալը։
 Անարգուած Քաջիկը թողնելով իրա շինած տունը, սրտա-
 կոտոր հեռանում էր քաղաքից, երբ նրան տեսաւ ծանօթ
 պառաւը, սիրով իրա մօտ տարաւ, մկրատի ծայ-
 րով լարերը կտրտեց, վէրքերը կապեց, խնամեց։ Ե-
 րիտասարդը հոգով խիստ ընկճուած էր, շատ ցաւում
 էր, որ սուփրի ու մոմակալի հետ պալատանման
 տունը կորցրեց։ Անչափ փափագում էր զերվիշի
 երեսը տեսնել և հարցնել թէ ո՞վ է ինքը, ո՞ւմ որդի

է: Նա միշտ իրան սանիկ էր կանչում առանց մի խօսք ասելու իրա ծագման մասին: Մտատանջութեան մէջ տապալկում էր. մի օր յանկարծ աչքը բաց արեց ու տեսաւ դաստիարակին այսպէս խօսելիս. «սանիկ, գիտէի, որ ինձ կարօտել ես, ահա եկայ: Դարձեալ փորձանքի ես հանդիպել: Այս ժամանակ ակնբերի ու մարգարիտների փայլով գրաւուեցիր, այժմ էլ կանացի գեղեցկութեամբ: Աշխարհ է, կը պատահի: Փորձանքներից մի յուսահատուիլ, դրանք երիտասարդ մարդուն անհրաժեշտ են, փորձանքը խրատում է, խելքի է բերում: Մոմակալն ու սուփրէն չեն կորչիլ, էլի կը գան քեզ մօտ: Շարունակիր սրտով բարի լինել, անհոգ կաց ու տես թէ գոռոգ, չըմահաւան հարսնացուիդ գլուխն ի՞նչ է գալիս»: Այս ասելով դերվիշը նրա աչքից աներևութացաւ:

Առուքարը նոր փեսացու էր ուզում ընտրել իշխանագնների միջից, որոնք Քաջիկի վարդուելու վրայ շատ էին հրճուած, ամեն մինը աշխատում էր ընծաներով, քաղցրախօսութիւններով աղջկայ սիրտը շահել, դուր գալ: Հօր կամքի հակառակ մեծ հրաւերք սարքեց Առուքարը, թիթեռնիկի պէս իրա գլխով պտտող իշխանագների, թագաւորագների ճաշի կանչեց. հիւրերին զարմացնելու համար ուզեց սուփրէն ու մոմակալը բանացնել: Առաջին փորձն էր, որ անում էր: Հրաշալի սուփրէն բացուեց բազմազան ու տելիքով, խմելիքով. բարձրաստիճան հիւրերը զուարթ դէմքով ձեռ մեկնեցին կերակուրներին, որ ճաշակեն: Առուքարը ճաշը զուարճալի դարձնելու համար ձեռը մեկնեց մոմակալին: Վառուեց, բայց ճրագի բոցերից դուրս եկած մարդիկը երգելու, պարելու, ածելու

փոխարէն մի մի մահակ ձեռներին ընկան հիւրերի, տանտիրուհու ջանին, ինչքան որ գիտես, լաւ ջարդ տուին: Ծեծը շարունակուեց մինչև կէս գիշեր: Այս խայտառակութեան պատճառն այն էր, որ Առուքարը մոմակալին ձախ կողմից էր մօտեցել ու սխալ վառել: Այս դէպքը բոլորովին կտարեց թագաւորի տան անունը ժողովրդի առաջ: Մինչև հիմի յամառ աղջկայ արարքը լուռ տարել էր, այժմ անմարդի եղած ու սրտում կատաղած ներս ընկաւ աղջկայ օթեանը, որ պալատից առանձին էր ու սկսեց անարգել. «դու նախանձոտ պտուղ, ի՞նչ վատութիւն էր արել քեզ այն պատուական երիտասարդը, որ տմարդաբար տանջեցիր ու նրա սեպհականութիւնը խլեցիր: Ասան, գոռոգ հոգի, դու ո՞ր թագաւորագին փեսացու ընտրեցիր, որ ես խափանեցի հասարակ ծագումով Քաջիկի պատճառով: Քեզ ու գլխու հացկերոյթ սարքեցիր, որ Քաջիկի հակառակորդներին պատիւ տաս, ահա ստացար ապերախտ վարմունքիդ պատիժը: Մի վրէժ նայիր, տես ի՞նչ օրումն ես, ամբողջ երեսդ կապտած է: Երկինքն է քեզ պատժել. մինչև չըզնաս փեսացուիցդ ներում չըխնդրես, բո գլխից պատուհասը չի պակսիլ»:

Հիւրերը քաղցած ու ջարդուած էին գնացել իրանց տները, դրա համար Առուքարը ամօթից պապանձուել էր, գլուխը կախ գցել: Ստացած հարուածներն այնքան զգալի չէին նրան, որքան պատահած խայտառակութիւնը, որ ժողովրդի բերանում ծամելու մաստակ էր դառել:

Առուքարը շատ էր փոշմանում արածի վրայ, խոստովանում էր հօր առաջ, որ անագնութեամբ ու

Թեթևամտութեամբ էր վարուել փեսացուի հետ, անգամ անիծում էր մոլորեցնողներին, բայց հպարտ գլուխը չէր վերցնում, որ գնայ տղից ներուժն խնդրի: Վերջն էլի ծեր թագաւորն էր, որ իրա ոտով գնաց Քաջիկի մօտ, քաղցր խօսքերով սիրան առաւ, բերեց կրկին պալատը, աղաչեց, որ դառ պատահմունքը մոռանայ: Թագաւորի միտքն էր այժմ — առանց աղջկայ կամքը հարցնելու, շուտով պսակը գլուխ բերել ու Քաջիկին իրա տեղ թագաւոր հրատարակել: Հէնց այն է թագաւորը Առուքարին իրա օթեանից կանչում էր, որ գայ Քաջիկից ներողութիւն խնդրի, այդ միջոցին մի պալատական լուր տուեց, որ մի խումբ մարդիկ են եկել, փեսայ Քաջիկին են հարցնում: Թագաւորը ներս հրաւիրեց օտարականներին, որոնց գլխաւորը դերվիշի դէմքն ունէր: Սա խոր գլուխ տալով Քաջիկին դիմեց այս խօսքերով: «Թագաւորագ տէր, սրանք հօրդ հպատակներն են, լուր են բերել, որ քո աւագ եղբայրը վաղաժամ մեռել է ու հօրդ թողել անժառանգ: Ծեր հօրդ հետ ժողովուրդն էլ մեծ կարօտով քո վերադարձին է սպասում»:

Ամենը մնացին զարմացած: Աւելի զարմացաւ Քաջիկը, երբ լսեց որ ինքը թագաւորագ է: Դերվիշը դիտմամբ էր ծածկել նրանից այդ բանը: Առուքարի հայրը Քաջիկին համբուրելով ասեց. «Սիրելի փեսայ, հաւանել էի քեզ առանց արքայական ծագումդ իմանալու, այժմ աւելի ուրախ եմ, որ Առուքարն անհուն ափսոսանքով կըզգայ իրա սխալը և կաշխատի դառնութեամբ քաւել: Մօտ եկ, աղջիկս», կանչեց թագաւորը: Կիսամեռ դարձած Առուքարը չըզիտէր, ինչպէս մեղայ գայ, որ իրա անգութ արարքը տղի սրտից

ջնջել տայ: Դերվիշի իմաստուն աչքը նկատելով աղջկայ գոռոզութիւնը, դարձաւ թագաւորին ասեց. «այստեղ հարսնացու ճարելն աւելորդ է: Քաջիկի համար իրա հայրը կը գտնի այնպիսի աղջիկ, որ գեղեցկութեան հետ կունենայ և մի բարի սիրտ»: Այս խօսքերը հէնց կասես քարագրողներ էին, որ ընկնելով Առուքարի սրտի վրայ փշուր փշուր արին նրա գոռոզութիւնը: Իսկոյն չոքեց ընկաւ Քաջիկի ոտները և լալով ասեց. «արածներես վրայ փոշմանել եմ մինչև սրտիս խորքը, մի մերժիլ ինձ, այսուհետև ոչ թէ կինդ, այլ սարկուհիդ կը լինեմ, կրակի մէջ էլ գցես, ընդիմացող չեմ»:

Քաջիկը կակղեց, ներեց նշանածի արարքը: Հաշտութիւնը կայացաւ հարսանիքի հանդէսով, որի միջոցին զարմանալի դեր խաղացին սուփրէն ու մոմակալը: Դրանք մի թագաւորութիւնից թանկ էին: Դերվիշն անյայտացել էր, չըկար: Նախկին գոռոզ Առուքարը այժմ Քաջիկին խոնարհ զառան պէս ամեն տեղ հետևում էր ու քնքշաբար գուրգուրում: Քաջիկը շատ ապրեց անօր մօտ, թէ քիչ, յայտնի չէ, միայն այն էր, որ ծնողների կարօտը քաշեց ու մրտածում էր հայրենիք վերադառնալ:

— «Ես այժմ մխիթարուած եմ, ասեց Առուքարի հայրը, ուրախ կըլինեմ, եթէ գնաք միւս ծնողներին էլ մխիթարէք: Ուր էլ լինէք, այսուհետև, յոյս ունեմ, որ երջանիկ կըլինէք, քանի որ սրտով իրար կպած էք»: Քաջիկի հակառակորդները չէին հանգստացել, նրանք միտք ունէին նրա ձեռից խլել Առուքարին, սուփրէն ու մոմակալը և դանձերը: Քաջիկը տխուր էր, հաստատ չըզիտէր թէ սիրուն նշանածն ինչպէս

կըհամբերի ճանապարհի նեղութիւններին: Այդ տխուր ժամին Առուքարը նրա ճակատը համբուրեց ու ասեց. «դու զուր ես հայրենիքի կարօտից մաշուում, Քաջիկ ջան, ես հոգով ու սրտով քոնն եմ, մազաչափ մի տարակուսիլ, գնանք, ուր որ ուզում ես»:

Թագաւորը ջորիների վրայ արծաթ ու ոսկի բարձած բաժինք տուեց: Քաջիկն ու Առուքարը մնաս բարով ասին, ձիան նստած՝ քարուանի հետ գնացին: Քաջիկը միշտ զգոյշ էր, իմանալով որ իրա թշնամիները շատ են: Դերվիշը շարունակ նրան երևոյթ էր լինում, կարևոր խորհուրդները տալիս ու անհետանում: Շատ վտանգաւոր տեղերից ապահով անցնելուց ետ Քաջիկի քարուանը մեծ փորձանքի հանդիպեց, երկինքը սևակնեց, որոտաց, կայծակ ու շանթից ետ այնպիսի քամախառ հեղեղ թափուեց, որ բոլոր ջորիներին իրանց բեռնով սկեց, կլանեց: Քաջիկը թողեց գանձերը ճակատագրի յուսով, հազիւ կարաց Առուքարին ողջ անմլաս հեռացնել հեղեղի ձեռից. մոմակալն ու սուփրէն Քաջիկը ձիու գաւաքին կապած ունէր: Գանձերից կողոպտուած նրանք լոյս ընկան ուրիշ աշխարհում: Վտանգն ու փորձանքը իսկոյն Քաջիկի միտն էին բերում գերվիշի պատուէրները ու անուշակալութիւնից կրած վնասները: Ագահութիւնից յաղթուելով՝ նա այրի ակն ու մարգարիտը յափշտակեց ու լաւ խրատուեց: Երկրորդ անգամ Առուքարի պատկերի գեղեցկութիւնով անչափ հրապուրուեց ու դրա համար լաւ պատժուեց: Այժմ միտն ընկաւ դաստիարակի մի խրատը՝ այն մարդը չի աղքատը, որի ծոցում փող չըկայ, այլ նա, որի սրտում ողորմ չըկայ: Ի՞նչ է նշանակում այս, մտածում էր նա: Այդ

ժամանակ նա անցնում էր մի հանգստարանի կողքով, տեսաւ երկու հոգի գերեզմանից հանել են մի ննջեցեալ ու մահակներով անողորմ ծեծում են: Առուքարի մեղքը շատ եկաւ, երբ տեսաւ, որ այդ մարդիկ անշունչ ննջեցեալին ծեծելուց ետ քաշեցին մօտիկ առուի մէջ, թրջեցին, հանեցին, նորից ծեծեցին: Քաջիկը մօտեցաւ, հարցրեց. «այ մարդիկ, ո՞վ է այդ ննջեցեալը, ինչո՞ւ էք այդպէս անաստուած վարուում»: — «Սա պարտապան մարդ է, պատասխանեցին ծեծողները, մինչև շունչ փչելը չի կարացել իրա պարտքերը վճարել: Դատաւորները վճուել են պարտքի փոխարէն մարմինը տալ պարտատէրին, որ ինչպէս ուզի, հետը վարուի: Փողատէրը մեզ վարձել է, որ մարմինը տանջենք: Նրա պատուէրով ամեն օր գերեզմանից հանում ենք, ծեծում ու կրկին տեղը դնում»: Քաջիկը, որ գերվիշի հոգով էր դաստիարակուած, այդ բացադրութիւնը լսելով սարսափեց. «ի՞նչ անողորմ աշխարհ է, մարդկանց մէջ ներողութեան զգացմունք չըկայ»: Նայեց, տեսաւ, Առուքարը լալիս է, դարձաւ մարդկանց հարցրեց. «ի՞նչքան է այդ ննջեցեալի պարտքը»: — «Այսքան ու այսքան, պատասխանեցին ծեծողները: Քաջիկը փնտրեց ծոցերը ու ինչքան փող գտաւ, տուեց նրանց, — «վերցրէք, ահա այս նրա պարտքը, այս մի քանի ոսկին էլ աւելի եմ տալիս, որ աղքատ ննջեցեալի վրայ տապանաքար դնէք: Վնաս չըկայ, որ ինձ մօտ փող չի մնում ճանապարհի համար, ուրախ եմ, որ այդ առաքինի չքաւոր մարդը անարգանքից կազատուի»:

Այս կարգադրութիւնն անելուց ետ Քաջիկը ճանապարհը շարունակեց աւելի դժուար ու մահահոս

տեղերով: Նեղ բոպէին իսկոյն նրան մի օգնական էր լոյս ընկնում. հէնց որ վտանգն անցնում էր, շուտով այդ մարդն աներևութանում էր: Արդէն դևերի աշխարհի մէջն էր, վտանգները անթիւ էին Առուքարի պատճառով: Քաջիկն ուժերը մենակ լարելուց յոգնել էր, սրտով ուզում էր գիշերը կուշտ քնով հանգստանալ, բայց վախենում էր, որ թշնամիքը դևերի միջոցով փախցնեն թէ կնոջը և թէ մոմակալն ու սուփրէն:

Նրա անհանգստութիւնը տեսնելով Առուքարն ասում էր. «Երեւի գոռոզութիւնս, ամբարտաւանութիւնս լիովին չեմ քաւել, այդ պատճառով փորձանքները գլխիցս չեն հեռանում»: «Ոչ, աչքի լոյս, պատասխանում էր Քաջիկը, քո մեղը չի, ես կարծում եմ պատճառը իմ դաստիարակն է, որ խրատելու համար ինձ փորձանքների է հանդիպում»:

Մի երկու օր էլ անվտանգ գնացին, Քաջիկը նայեց թղպոտ երկնքին, ամայի գետնին, անշունչ մօտակայքին ու ակամայ հառաչեց. «Մի, ի՞նչ կըլինէր, մի ազամորդի պատահէր, մտամոլորութիւնից ազատուէինք»: Այդ ասելն էր, որ աչքովն ընկաւ մի մարդու կերպարանք: Չայն տալով հարցրեց. «անցորդ եղբայր, ո՞ւր ես գնում: Եթէ ճանապարհդ դաժան թագաւորի հողովն է, արի միասին գնանք»:— «Իմ գնալու տեղը դաժան թագաւորի քաղաքից էլ դէնն է, պատասխանեց անցորդը, ուրախութեամբ ընկեր կը լինեմ, գնանք»:— «Անունդ ի՞նչ է, եղբայր, հարցրեց Քաջիկը:— «Պատրաստ, քեզ ծառայ»: Քաջիկն էլ երկար չըհետաքրքրուեց թէ ո՞վ է, ի՞նչ մարդ է, ո՞րտեղից է գալիս, ընկեր ընդունեց ու գնացին երեքով:

Չարմանալի սրտացաւ ընկեր դուրս եկաւ Պատ-

րաստը, հէնց որ մութը դաշտում վրայ էր հասնում, նրանց հանգիստ քնացնում էր, ինքը հսկում:

Մի անգամ կէս գիշերին Պատրաստը լսեց մի ձայն, որ կանչում էր. «Թագաւորազ Քաջիկ, չեմ թողիլ, որ առաջ գնաս, թէ քաջ ես, դուրս արի, կուռենք, ով յաղթող դուրս գայ, Առուքարը նրան լինի»: Պատրաստը, որ աժդահի տեսք ունէր, մօտ գնաց կանչողին. «եթէ ուզում ես ուժդ փորձել, ասեց, առաջ արի»: Դե էր, գոռոզաբար առաջ եկաւ: Պատրաստը վրայ թռաւ ուսերից բռնեց, գետնով խփեց ու թրով գլուխը կտրեց: Հետևեալ կէս գիշերին Պատրաստը լսեց ուրիշ դևի ձայն. «եղբօրս սպանել ես, եկել եմ վրէժ հանելու, դուրս եկ կուռենք, կամ ինձ էլ սպանիր կամ Առուքարը տուր»: Սօսողը երեք գլխանի էր. Պատրաստն առանց Քաջիկին թարժաժ անելու, մօտեցաւ դևին, մենամարտեց, գլխները կտրեց ու թողեց:

Երբորդ գիշերը ուրիշ դև եկաւ, վախենալով կոխ բռնել կամ թրով մենամարտել, առաջարկեց նետ ու անեղով իրանց շնորքը փորձել: Այս անգամ էլ Պատրաստը յաղթեց ու փախցրեց: Դա եօթ գլխանի քէօսա դէն էր, յոյսը չէր կտրում Առուքարին խլելուց, ամբողջ մի շաբաթ հետևում էր ճամբորդներին, որ մի անգամ ուղղատը գցի, Քաջիկին յաղթի: Նա հաւատացած էր, թէ իրա դէմ դուրս եկողը Քաջիկն է: Ութերորդ օրը Առուքարն ասեց. «սիրելի Քաջիկ, մեր ուղեկիցն ամբողջ եօթ օր ու գիշեր անքուն է, յոգնած կը լինի, մեղք է: Այս գիշեր էլ դու պահպանութիւն արա»:— «Շատ բարի, ասեց Քաջիկը ու մթնելուն պէս խնդրեց Պատրաստին, որ քնի, հանգստանայ: Պատրաստն ասեց. «եթէ ես քնեմ, եօթ օր չեմ գար-

թիւ, աւելի լաւ է, այս վտանգաւոր տեղերը ես հրակեմ, խոր-խոր ձորերը, մութ-մութ անտառներն անցկենանք, թէ չէ փորձանքի մէջ կընկնէք»։ — «Ոչ, ասին մարդ ու կին, այս գիշեր դու հանգստացիր, մենք պիտի հսկենք»։ Պատրաստը մեծ սալ քար բերեց, ցից կանգնացրեց ու ասեց. «ձեր խնդիրը կտարել չեմ ուզում, ասում էք, կը քնեմ, միայն երբ հարկաւոր լինեմ ձեզ, զարթեցնելու համար այս սալը գցեցէք քներակիս, որ վերկենամ ու ձեր կարիքին հասնեմ»։ Քաջիկին մի կողմ քաշելով ականջին փսփրսաց. «գիշերը եթէ քէօսա դեր գայ, նետով կուռիր, բայց զգոյշ կաց, որ քեզ չըմօտենայ, թէ չէ նրա շողոքորթ լեզուն քեզ փորձանքի մէջ կը գցի»։ Այս ասելով Պատրաստը գլուխը դրեց, քնեց։ Կէս գիշերին Առուքարն էլ նզղեց, քնեց, մենակ Քաջիկն էր մնացել պարթուն։ Յանկարծ խաւարում լսուեց թմփթրմփոց ու մրթմրթոց։ Մէկը գոռ ձայնով կանչեց, «Թ'ազաւորազ, ինչ ես անունդ Քաջիկ դրել և կուռից փախչում։ Եթէ գուր չես վերցրել այդ անունը, դուրս արի, ուժներս չափենք կաշելով կամ մենամարտելով»։ Քաջիկին շատ տակ արեց այդ նախատինքը, մոռացաւ Պատրաստի պատուէրը ու մեծասիրտ պատասխանեց. «գոռոզ կերպիցդ երևում է, որ մինչև օրս վախլանների ես պատահելի կաշել ես ուզում, արի, բայց իմացիր, որ յաղթելուց ետ ականջներդ կըտրելու եմ»։ Ասեց, մօտեցաւ քէօսա դերին։ Սա բռնեց, աջ քաշեց, ձախ քաշեց, հերսից գետինը վարեց ոտի բթերով, բայց չըկարաց Քաջիկի մէջքը գետնին խփել։ Լոյսը բացուելու մօտ էր ու դեր կրկին պիտի պարսպ գնար։ Նենգ միջոցով ուզեց նպատակին հասնել.

երբ Քաջիկը միամիտ էր, դեր նրան անակնկալ հասցրեց մի ուժգին թաթալոշ և գետնին փռեց։ Առանց բռայէ կորցնելու վազեց, քնած Առուքարին խտտեց ու փախաւ։ Քաջիկն առաւօտն ուշքի եկաւ, տեսաւ, ոչ կին կայ և ոչ մոմակալ։ Պատրաստը սուփրէն գլխատակ խորմփում էր։ Քաջիկն ասեց ինքն իրան. «Ինչպէս կարելի է, որ այս անպին քարը նրա քներակին դցեմ, վայ թէ նրան սպանեմ, կսկիծս աւելի մեծանայ։ Չէ, լաւ է համբերեմ, մինչև հաւատարիմ ընկերս ինքն իրան զարթի։ Մեղաւորը ես եմ, որ Առուքարը կորցրի, ինչո՞ւ ընկերիս խորհրդին չէի լսում»։ Եթէ ներսը օրը Պատրաստը վերջապէս զարթեց ու եղելութիւնն իմանալով ասեց. «ցաւին դարման անելը անկարելի չէ, քէօսա դեր իմ ձեռից չի ազատուիլ, արի գնանք նրա ետևից, յոյս ունեմ, ամեն ինչ ետ խլենք»։ Շատ գնացին թէ քիչ, դերի աշխարհում պատահեցին մի պառաւի։ Դեմայր էր, մի լիտր արծիճ բերանը գցած ծամում էր։ Ծծերը գետնին քաշ գալուց ազատելու համար ուսերով կախ էր գցել ու նստել դժգոհում որդու վրայ։ Պատրաստը նրան աւանջ դնելուց ետ հարցրեց. «նանի, ո՞ւր է քո ապերախտ տղէն, որ քեզ անխնամ է թողել»։ — «Ի՞նչ ասեմ, այ օտարական, նա այնպիսի տեղ է, որ օձն իրա պորտով, թռչունն իրա թևով չի հասնիլ, էլ ի՞նչ յուսամ նրանից»։ — «Երբ այդքան շնորքով տղայ ունես, նանի, էլ ինչո՞ւ ես դժգոհում, փորձելու մըտքով ասեց Պատրաստը։ — «Ի՞նչ օգուտ նրա շնորքից, երբ ես պառաւութեան օրերիս այս վիճակումն եմ»։ — «Ես ուրախութեամբ կը պատժեմ քո ապերախտ որդուն, խօսեց Պատրաստը, եթէ իմանամ ինչն մէջն է նրա հոգին»։ — «Նրա հոգու տեղն իմանալը գաղտնիք

է, պատասխանեց պառաւը, բայց ձեզ պէս բարի ոք-
միններէից չեմ ծածկիլ»: Պարզամիտ պառաւը գաղտ-
նիքն ասեց: Իրա վրայ Պատրաստը Քաջիկին թողեց
պառաւի մօտ ու ինքը գնաց պառաւի ցոյց տուած
մեծ սարի կողմը: Թանձր անտառով ստորոտից բարձ-
րացաւ նրա կատարը: Այնտեղ գտաւ մի զարմանալի
բախրա, քամու հետ խաղս էր լինում ու ծառերի
գլխով թռչկոտում: Դևի հոգու բնակարանը դա էր.
Պատրաստը վզից աղեղը հանեց ու նետը լարելով
բախրի վրայ բռնեց: Բախրէն նետը կրծքում ցցուած
խրտնելով երկար վազեց դէս ու դէն ու շնչասպառ
ընկաւ գետնին: Իրա ճղնաւոր եղջիւրների մէջ հիւ-
սուած կար մի բոյն և նրա մէջ երեք թռչուն: Պատ-
րաստը բոյնը վերցրեց ու գնաց մօտեցաւ քարայրին,
որ սարսափելի դևի բնակարանն էր: Դևը կատաղած
գուրս վազեց, որ պատառ պատառ անի յանդուգն
սրսորդին: Պատրաստն առանց նրա գոռոցին ուշ
զարձնելու, ձեռի թռչուններից մէկի վիզը պոկեց ու
գնաց դէպի դևը: Դևը մարմնի թուլութիւն զգալով
սկսեց տնքտընքալ: Նրան ձայն տուեց Պատրաստը.
«առաջ արի, դև, առանց կուռելու մեռնելը ամօթ է
քեզ համար»: Դևն ուժը հաւաքեց, որ յարձակուելով
նրան ձգմի թաթերի մէջ, բայց այդ միջոցին Պատ-
րաստը երկրորդ թռչունի վիզը պոկեց: Դևը խոր
փոքնչալով ճանապարհի մէջտեղը մեկնուեց. «ես
արդէն հոգեվարք եմ, աղաչելով դիմեց Պատրաստին,
վերջին թռչունն ինձ տուր, մի քանի օր կեանքս
երկարացնեմ»: — «Ձէ, պատասխանեց Պատրաստը, այդ-
քան շնորհի արժան չես, եթէ կամենում ես, բռնիր
նրա թևերից»: Դևը հագիւ էր թևից բռնել, Պատրաստը

քաշեց, թռչունի վիզը պոկեց: Դևը շունչը փչեց,
Պատրաստը բարձրացաւ քարայրը, գտաւ այնտեղ հա-
կերով ոսկի ու արծաթ: Ներքև բերեց ու Քաջիկին
իմաց արեց, որ շորիներ ճարի ու կրելով պառաւի
տանը պահի: Ինքն առաւ նեղ ու անեղը, սուփրէն և
գնաց Առուքարին գտնելու, հասաւ մի ծովի ափ, ջրի
երեսին մի ձուկ նշմարեց, գլուխը դէմ արած, անշարժ
տեղնուտեղը մնում է: Նետը բռնացրեց ականջի տա-
կին: Դու մի ասիլ ուռած էր: Ձուկը ծովի տիրուհին
էր, շատ ուրախ եղաւ, որ ուռածը պատուուեց, վահ-
րից թեթևացաւ: Նետը ձկան ականջի ոսկէ օղը պո-
կել էր. ձուկը Պատրաստին գոհութիւն անելուց ետ
օղը յետ ուզեց: — «Շատ բարի, կըտամ, պատասխանեց
Պատրաստը, ես էլ ծովի այն կողմը կորուստ ունեմ,
եթէ թող կըտաս, որ անցնեմ, եղբօրս նշանածին
գտնեմ, քեզ կըտամ ոսկէ օղը, որ նետի հետ ալիք-
ները բերին դէպ ինձ»: — «Երբ եղբօրդ համար ես նե-
ղութիւն քաշում, ասեց ծովի տիրուհին, ուրախու-
թեամբ ինքս կանցկացնեմ քեզ»: — «Ես ինքս էլ կարող
եմ, ասեց Պատրաստն ու սուփրի աջ մասը փռեց ու
վրէն նստեց: Ծովի տիրուհին նրան ուղեկցեց մինչև
միւս կողմը և ականջը դնելով գետնին ասեց. «լսում
եմ, որ քո հարս Առուքարը տեղաւորուած է եօթ ծո-
վից այն կողմ մի պալատի մէջ, քեօսակ դևի ձեռի
տակ է, նա է փախցրել: Եթէ շնորք ունես, հասիր,
ձեռից խլիր»: Պատրաստը տեսաւ, որ օղով թռչելու
բան է, փռեց սուփրի ձախ մասը ու նստելով վրէն
թաւ եօթ ծովի գլխով, հասաւ Առուքարի թագըս-
տարանը: Դա մի կղզի էր, վրէն մի պալատ, պալատը
ծաղկների, ծառերի մէջ թաղուած: Տխուր Առուքարի

համար արև բացուեց Պատրաստի երևալով. դեր չը կար, հիւրին պահեց իրա օթևանում, որ փախչելու հնարների մասին մտածեն:— «Առուքար, ասեց Պատրաստը, քեզ փախցնողը քեօսակ դեն է, որին ուժով յաղթել չի լինիլ, այդ փորձով գիտեմ: Մնում է նրա դէմ խելք բանացնել: Ես ծածուկ կըլսեմ, դու հարցը ու, թէ նրա հոգին ինչի՞ մէջն է»: Երեկոյին դեն եկաւ զբօսանքի տեղից ու Առուքարին գտաւ տխուր, հարցրեց. «Ի՞նչդ է պակաս այս աննման պալատում, որ տխուր ես»:— «Միթէ ինձ տանջող մենակութիւնը քիչ բան է, պատասխանեց Առուքարը, ոչ սի շունչ արարած իրաւունք չունի մօտս լինելու: Քո այդ կարգադրութիւնը խախտել չեմ կարող, գոնէ հոգուդ տեղն սոսա, գտնեմ, հետը խօսեմ, տխրութիւնից ազատուեմ»:— «Ես մօտս հոգի չունեմ, խօսքը կարձ կտրեց խորամանկ դեր ու անցաւ:

Երկրորդ օրը Առուքարը նորից զրոյց բաց արեց ու ասեց. «անհոգի շնչաւոր չի լինիլ, ուրեմն սրտեղ է քո հոգին, որ մօտըդ չի: Յերեկը, երբ դու չը կաս, տեսակ տեսակ մտքեր ինձ տանջում են. ասա, սրտեղ է, որպէսզի կանչեմ, հետն զբաղուեմ»:— «Աննման Առուքար, խօսեց դեր, երբ իմ հոգին քեզ այդքան սիրելի է, կասեմ տեղը: Նա բնակուում է ձկան գլխի մէջ, այդ ձուկը նախշուն է և ապրում է դեղին ծովի մէջ»: Գիշերն անցկացաւ, էգսը Պատրաստին ասեց. «Առուքար, միամիտ կաց, քեզ փախցնող դեին բանհոգի անելը իմ աչքիս վրայ»: Սուփրի ծայրը բաց արեց ու պատուիրեց. «տար ինձ դեղին ծովի կուշտը»: Բոլոր շնչաւորները քեօսակ դեին ատում էին, ուրախութեամբ Պատրաստին ցոյց տուին նախշուն ձկան

տեղը: Պատրաստը թուրը ձեռին մօտեցաւ ու վրայ բերելով գլուխը կէս արեց, միջից մի փոքր արկղ հանեց: Նրա մէջ կային երեք ծիտ, մէկը քեօսակի ոտների ոյժն էր, որով այնպէս արագ էր վազում, որ ետնից դժուար էր հասնելը, միւսը աչքերի լոյսն, որ հեռաւոր առարկաներն էլ նշմարում էր, երրորդը նրա հոգին— շունչն էր: Պատրաստը վերագառնալիս մէկի վիզը պոկեց: Երբ Առուքարի կուշտը հասաւ, քեօսակն ընկած վրում էր: Առուքարն ասեց. «Պատրաստ, բարի հրեշտակ, ծտերից մէկն ինձ տուր, ես սպանեմ, որ սրտիս վրէժը այս քեօսակից հանեմ»: Երկրորդ ծտի վիզը պոկուեց թէ չէ, դեի աչքերը կուլ գնացին, հագին մարմինը մնաց անոտ, անաչք: Այդ լուրն առան օդային ու ջրային կենդանիները, ցնծալով շտապեցին պալատի կուշտը, օրհնեցին Պատրաստի եկած ձամբէն, գովեցին նրա եռանդը, որ եղբօր նշանածի ետնից գալով իրանց էլ պատուհաս դեից ազատում է: Ամենն էլ դեին թշուառ վիճակումը ծաղրում էին: Այդ անարգանքից խոր վիրաւորուելով դեր աղաչեց Պատրաստին. «քեզ պէս քաջի ձեռից տանջանք կրելն իսկի կսկիծ չէ ինձ համար, բայց անտանելի ծանր է միւս շնչաւորների ծաղրը, որ իմ թուլութիւնից խրախուսուած՝ սիրտս խոր դաղում են: Աղաչում եմ, շուտ վերջ տուր կեանքիս, էլ չըտեսնեմ նրանց արարքները»: Պատրաստը վերջին ծիտն էլ սպանեց: Հէնց որ քեօսակ դեից ճնշուածները լսեցին նրա մահը, վրայ թափուեցին ամեն կողմից, ձկները ջուկ, կենդանիները ջուկ, որ վրէժը հանեն գոնէ նրա անշունչ մարմնից: Պալատի մէջ ամբարած գանձերը ջրային կենդանիները հանեցին արև. թագուհի ձուկն էլ

Առուքարին շալակած հասցրեց ցամաք ու իրա ականջի օղը ընծայելով ասեց. «դու պատճառ եղար, որ իմ հպատակները չար դևի ձեռքից ազատուեցին, այս էլ լինի իմ երախտագիտութեան նշանը»: Երբ Պատրաստը Առուքարին անհուն գանձերի հետ հասցրեց Քաջիկի մօտ, էլ դևի մօր մօտ մնալու կարիք չըկար, նրան ամեն բարիքից տուին, որ ապրուստ ունենայ, իրանք երեքով ճամբա ընկան քարուանի հետ: Այժմ էլ վտանգներն անպակաս էին, բայց Քաջիկն ու Պատրաստը ամեն բանի յաղթելով ողջ և առողջ Առուքարի հետ հասան նախկին դաժան թագաւորի մայրաքաղաքը, որ սուգ էր պահում թագաժառանգի մահուան պատճառով. Սգաւոր հայրը կորած Քաջիկին տեսնելով անչափ ուրախացաւ:— «Փառք Աստուծոն, որ ձերութեանս օրերին նոր մխիթարութիւն ուղարկեց: Սիրելի որդի, բաւական էր, որքան որ օտար երկրներ թափառեցիր, անի նստիր գահիս վրայ ու ժողովուրդը կառավարիր»:— «Շատ բարի, հայր, ասեց որդին, սպասիր գլխիս եկածները պատմեմ, տես մեղսից ո՞վ է թագաւոր լինելու արժան»:

Քաջիկը նստեց, պատմեց Պատրաստի արարքները: Թագաւորին անչափ դուր եկաւ նրա հաւատարիմ ընկերութիւնը. — «Թէպէտ դու իմ որդին ես, ասեց թագաւորը, բայց եթէ խղճով դատենք, արժանաւոր թագաւորացուն նա է»: Ու խնդրեց Պատրաստին, որ յօժարուի թագաւոր դառնալ, Պատրաստը չը յօժարուեց, Քաջիկն էլ իրա կողմից պնդեց, որ ընդունի. «ես չեմ դադարիլ խնդրելուց մինչև չըյայտնես հրաժարուելուդ պատճառը»:— «Լաւ, կը յայտնեմ, ասեց Պատրաստը, եթէ մինչև վաղն ինձ ժամանակ տաս»:

— «Տալիս եմ, ուրախասիրտ ասեց Քաջիկը: Սրանից ետ ամենը նստան ճաշի: Ծեր թագաւորի վրայ ոչ մի դաժանութեան հետք չէր մնացել, քաղցր ու մեղմ պատմում էր ժողովուրդի կարիքների մասին և իրա յաջորդին գործելու ծրագիրները առաջարկում: Այդ գիշեր երազում Քաջիկին երևաց Պատրաստը ու խօսեց. «սիրելի Քաջիկ, լսիր վերջին անգամ դաստիարակիդ ու միտդ պահիր նրա խօսքերը: Տարիներ առաջ ձեր դերվիշի կերպով երևացի հօրդ ու նրա մի որդին վերցրի կրթելու, կատարեալ դարձնելու համար: Յիշում ես մանկութիւնդ, քաղցր օրերի հետ դառն օրերի էլ հանդիպեցիր: Գլխիդ եկած ամեն մի փորձանքը խրատ, իմաստութիւն բերեց քեզ համար: Քեզ ուղեկցելով, նեղ տեղերում օգնելով, բերի հասցրի հայրական տունդ: Այժմ ժամանակ է, որ հանգիստ հոգով վերադառնամ օթևանս ու մխիթարուած սրտով շունչս փչեմ: Երբ անօրդ ընծայած գանձերը հեղեղը տարաւ, դու պատահեցիր մի մեռելի, որին պարտատէրերը ձեռնարկով անարգում էին: Ինքդ կարիքի մէջ էիր, բայց վերջին կոպէկներդ չըխնայեցիր անծանօթ ննջեցեալի համար: Դու խղճացիր, կարեկցեցիր մարդ արարածին: Լսիր, սիրելի Քաջիկ, քեզ դաստիարակող դերվիշն էլ ես էի, պարտապան ննջեցեալն էլ, քեզ ուղեկցող Պատրաստն էլ: Միևնոյն հողին էի գանազան կերպարանքներով: Ինձ վրայ պարտք էր դրուած ուղղել հօրդ սիրտը և նրա ժողովրդի համար դաստիարակել մի իմաստուն, քաջ և բարեխիղճ կառավարիչ: Պարտքս կատարել եմ ու գնում եմ ինձ ուղարկողի մօտ: Մնաս բարով ու բաղդաւոր, երկար ապրեա Առուքարի հետ քո ժողովրդի ծոցում ու սրտում»:

Առաւօտը երբ Բաշիկը քնից զարթեց, փնտրեց Պատրաստին, նա պալատում չըկար ու չըկար: Փառք տուեց Աստծուն, որ մի իմաստուն հոգի իրան պահապան էր կարգել, ապա նստեց հօր գահին ու աշխարհը կառավարեց քաջութիւնով և արդարութիւնով:

ԱՐՏԱԲՍՈՒԱՄ ԹԱԳԱՒՈՐԱԶԸ

Մի թագաւոր զբաղուած էր շարունակ իրա աշխարհը մեծացնելով, ամենևին ուշ չէր դարձնում իրա մինուձար տղի կրթութեան, դաստիարակութեան վրայ: Մեծամտած իրա գանձերով ասում էր. «ամեն բան արծաթի, ոսկու շատութեան մէջն է, որդին ինչպէս էլ լինի, կապրի»: Տղէն մարմնով առողջ էր ու խոշոր, ոնց որ գոմշի ձագ. փոքրուց ապրել էր ազատ, ինքնակամ, դուրգսւրող մայրը ամենևին չէր ուզեցել սրտին դիպչի, թողել էր իրա կամքի: Դրա համար տղէն դառել էր մեծասիրտ, աշխատելու անընդունակ, գլխից ձեռ վեր կալած պատանի: Մայրը միամտաբար ինչքն իրան ասում էր. «դեռ փոքր է, աչքը ուտել խմելում, թող ինչպէս ուզում է կեանք քաշի: Հասակն առնելով իրան կըհաւաքի ու ալխատասէր կըդառնայ: Հօր ծով կարողութիւնից ինչ կըպակսի նրա ուտել խմելով»: Թագուհին այդ ասելով հաւատացած էր, որ թագաւորի հետ ամենևին չի կարող փորձանք պատահել, քանի որ ողջ աշխարհը նրա ձեռից գողում էր, բայց սատանէն հակառակ է, քամբախտութիւնը բերում է այն ժամանակ, երբ մարդ չի սպասում: Այդպէս էլ պատահեց, այդ զօրեղ թագաւորը անակնկալ

հիւանդացաւ. տղէն դեռ անչափահաս էր ու անփորձ, ուստի հոգեվարքը մօտենալիս կանչեց փորձուած նազիրին ու խնդրեց, որ աշխարհ կառավարելու գործում տղին օգնի խորհուրդներով: Թագաւորը մեռաւ, նրա տեղը բռնեց որդին, մի կապկոտոր արարած, որի խելք ու միտքը շարունակ գուարճութեան մէջն էր, մարմնով ուժեղ էր ու աներկիւղ, գազանների դէմ կռուել, վաղել շատ էր սիրում, թագաւորութեան գործերը թողած մի գլուխ անհոգ կեանք էր անցկացնում փուշ և գուարճասէր իշխանազների հետ: Մայրը խրատում էր, որ նազիրի խորհրդով գնայ, բան չինի, տղէն խիզախ էր ու ինքնահաւան, չէր լսում: Նրա անվայել ընթացքը, խիստ շուայ ծախսերը դուր չէին գալիս երկրի մեծամեծներին: Նրանք ծերունի նազիրի միջոցով զգուշացնում էին, որ պատանի թագաւորը ձեռ վեր առնի անմիտ կեանքից, թէ չէ վերջը իրան համար վատ կըլինի: Խիզախ թագաւորագն աւելի յամառում էր ու հօր թողած առատ գանձերը, աջ ու ձախ, անխնայ ծախսում, հանդէսներ սարքում, գուարճանում իշխանազների հետ: Մի օր էլ վեր կացաւ տեսաւ, գանձերը չըկան, հատել են: Գանձարանները նորից լցնելու համար երիտասարդ թագաւորը իրան շրջապատողների խորհրդով խիստ հարկեր նշանակեց և հրաման արեց մեծամեծներին, որ հաւաքեն: Թողովրդի մէջ մեծ տրտունջ բարձրացաւ, երկիրը կործանուելուց ազատելու համար մեծամեծները առաջարկեցին նազիրին, որ գուարճասէր թագաւորին պալատից հեռացնի և ինքը կառավարի: Հաւատարիմ նազիրն այդ չէր անում, նրա ուխտն էր պատանի թագաւորին օգտակար լինել խորհուրդներով,

ոչ թէ գահը խլել: Մեծամեծները յօժար չեղան, իրանց վերջնական որոշումն այսպէս դրին. «այսուհետև դրա գուարճութեան համար մի սև փող տուողը չենք, աւելի լաւ է, իրա կամքով երկրից հեռանայ, եթէ սիրում է իրա հօր գահն ու յիշատակը, թէ չէ մենք օտար թագաւորի հպատակութիւն ցոյց կ'ըտանք, որ գայ դրան գահից ուժով արտաքսի:

Թագուհին չըթողեց, որ բանն այդտեղ հասնի, որդուն ստիպեց հնազանդուել և գիշեր ժամանակ մայր ու որդի թողին պալատը ու ծանօթների աչքից աներևութացան: Կանգ առան մի հեռաւոր քաղաքի ծայրին, համեստ օթեան գտան, ապրեցին մայր ու որդի: Մայրն անասելի տխուր էր, չէր կարողանում հաշտուել դառ ճակատագրի հետ, գլխին տալով անդադար ողբում էր կորցրած փառքը: Իսկ խիզախ որդին, մագաչափ դարդ չէր անում վիճակի փոփոխութեան վրայ, դարձեալ նախկին ուրախն էր, ամենևին միտք չունէր գուարճութիւնը թողնել, մի գլուխ փող էր պահանջում մօրից ու շայլ ծախսում: Մայրը տալիս էր ծոցի հոգապահուստ դրամներից: Ծանօթ երիտասարդները ուտում խմում էին Նիզախի հաշուով, առանց իմանալու, թէ ով է այդ հուժկու գուարճասէրը: Նիզախը վճուել էր հասնել գուարճասիրութեան յատակը ու յագենալով ետ դառնալ, բայց, աւանդ, մինչև այդտեղ հասնելը մօր հոգապահուստ գումարը հատաւ: Ընկերները հէնց որ նրան աղքատ տեսան, մէկ մէկ հեռացան, մնաց մենակ ինքը՝ անփող, անգործ: Առաջին անգամն էր, որ Նիզախը տխրեց ու տխրութիւնից գանգրաներ գլուխը կախած եկաւ մօր կուշտը ու իրա թշուառ վիճակը պատմեց: Մայրը

նրան յուսահատ տեսնելով կարեկցեց. «հապա ինչ էիր մտածում, սրդի, անհաշիւ ապրողի վերջն այդպէս է լինում: Միթէ կարծում էիր, թէ հօրդ գանձերը անհատնում են: Ուրիշ ճար չըկայ քո առաջ, պիտի պարսպսարսպ ման գալը թողնես ու վաստակ անես»: — «Սիրելի մայր, տխրադէմ խօսեց տղէն, ես մշակութիւն անելու էլ յօժար եմ, որ այս ամուր կազմուածքս ու զօրեղ կոնքերս մի բանի պէտք ածեմ»: — «Ոչ, սրդի, մշակութիւն անելը դեռ վաղ է քեզ համար: Լսիր, ես ունեմ մի թանկագին գոհար, ստացել եմ հօրիցդ նշանդրէլիս օրը, մեր վերջին յոյսը դա է: Տար, վաճառիր, մեծ գումար աժի, եթէ խելօք լինես, դրանով կարող ես առուտուր անել և մեր երկախս վիճակը ապահովել»: — «Անչափ շնորհակալ եմ, մայր, որ յուսահատութիւնից ինձ ազատեցիր, խոստանում եմ ուշք ու միտքս հաւաքել ու կարգին մարդ դառնալ»: Մօր ձեռը համբուրեց, անգին գոհարը բռնում գնաց շուկայ, որ վաճառի, նրա գնով գործ սկսի ու վաստակ անի: Բայց հէնց այդ գնալն էր, ինչ գնաց ու մօր աչքին չերևաց: Զուարճասէր անձինք նրան գտան ու շուրջորթելով հետը ման եկան: Նիզախը հաստատ չըմնաց մօրը տուած խոստումին, անձնատուր եղաւ ուտել զիթելուն ու ձեռն ընկած ամբողջ գումարը վաստեց, մնաց էլի դարդակ: Նրան քսպըլոյ ընկերները նրան թողին, ծաղրելով հեռացան: Այս անգամ Նիզախը սրտի խորքից զայրացաւ, որ իրան խելառի տեղ են դնում ծանօթները: Վրայի հագուստից ինչ որ կարելի էր ծախել ուտելու համար, այդ էլ ծախեց, վերջացրեց: Ամենն էլ նրան թափառաշրջիկի տեղ էին դնում ու արհամարհում: Այդ դառ վիճակը հարկադրեց Նիզախին լուրջ

մտածել իրա արած սխալները վրայ: Եւ նա մի տեղ նստելով սկսեց ան թաշել ու մի առ մի յիշել իրա խելառութիւնները: Երբ տուն հասաւ, մայրը յանդիմանեց. «այ կորած պտուղ, ախր մեր կարողութիւնն այն գոհարն էր, ի՞նչ արիր նրա փոխարէն ստացած ահագին գումարը: Եթէ առուտուրի շնորք չունէիր, գոնէ մի գոյգ եզ կառնէիր, բեռ կը կրէիր»: Տղէն գլուխը շարժելով պատասխանեց. «էհ, մայր, էլ մի ասիլ, իմ անառակութիւնը ինձ էլ խորտակեց, քեզ էլ: Այս բոպէիս իմ խելառ արարքներէց այնպէս անբաւական եմ, որ ես ինձ շանից ստոր եմ համարում: Լսիր, մայր, ի՞նչ եմ ասելու: Լաւ մտածելուց ետ եկայ այն եզրակացութեան, որ իմ բոլոր թշուառութեան պատճառը իմ հայրն է: Եթէ նա գանձեր թողնելու տեղ ինձ մի արհեստի վարժեցնէր, իմ վաստակով ես ու դու անկարօտ կ'ապրէինք: Նրանից ետ երկրորդ մեղաւորը դու ես, որ ինձ անչափ սիրելով թողում էիր միշտ իմ կամքին, ինչ ուզում էի, անում էի, ոչ պատժում էիր, ոչ խրատում: Այդ է պատճառը, որ ես ոչ փողի արժէքն իմացայ, ոչ ժամանակի: Այնքան երես առածին թեթեւ խօսքն ինչ կազդէր: Դրա հետեանքն այն եղաւ, որ խենթութիւններս շարունակելով հօրս գահից ընկայ. դա հաւասար էր մի սարի կատարից գլորուելուն: Միայն փառք Արարչին, որ ես դեռ անգունդը չը հասած ճանապարհի կիսում կ'անգ առայ: Հիւանդ հոգիս հիմի ուզում է առողջանալ, ու ինձ դիպած հարուածների պատճառները հասկանալ: Վերջը փորձելու եմ նորից այդ սարի կատարը բարձրանալ: Դրա համար զօրեղ կռներիս հետ ինձ հարկաւոր է փորձառութիւն, կեանքի իմաստութիւն, որ

եւ շունեմ, մայր, նոր պիտի հաւաքեմ: Արի այս քաղաքից հեռանանք, արդէն մարդկանց փախըսոցից նկատում եմ, որ սկսել են գլխի ընկնել, թէ սվքեր ենք: Գնանք մի անծանօթ հող, ինչ գործի էլ դնես, ուշկալ երեխի պէս կը հնազանդուեմ, ամենահասարակ պաշտօնն էլ կը կատարեմ, միայն թէ վաստակ անեմ, քեզ պահեմ: Ա՛խ, մայր, դու չես իմանում, թէ ներսից սնց եմ փոխուել»: — «Մինուճար ջան, երբ սրտիդ այդպէս մօտ ես ընդունում մեր վիճակի ծանրութիւնը, այդ հաստատ նշան է, որ անկեղծ զղջացել ես ու կամենում ես օրէց դէնը կարգին մարդ դառնայ: — «Այո, մայր, խիղախն ուզում է արդար վաստակ անել, ազնիւ մարդ դառնալ»: — «Եթէ քո հաստատ վճիռն է այդ, սրդի, ասեց մայրը, այն ժամանակ շատ չեմ հոգալ, որ թագաւորութիւնից զրկուել եմ: Այսուհետեւ ցամաք հացով էլ ինձ բաղդաւոր կը զգամ: Գնանք, ուր ուզում ես: Շատ կարելի է, լաւն այս է»:

Մայր ու որդի բաղաքից մութ-մութ դուրս գնացին, որ սքմին չը տեսնի: Գնում էին ոտով, շատն ու քիչը Աստուած գիտէ, այնքան գնացին, որ վերցրած պաշարը հատաւ, ամայի դաշտի մէջ մնացին սոված ու ծարաւ: Որ կողմն էլ նայում էին, ոչ մարդ կար, ոչ մարդահոտ: Նրանց խօսակցութիւնը պտտում էր աղքատութեան շուրջը, ուժեղ տղան հեշտ էր դիմանում ճանապարհի ծանրութեանը, ինչ որ ուժասպառ մայրն էր, թուլացել էր, առանց կռնից բռնելու ոտ չէր փոխում: Խիղախը մօր տանջանքը տեսնելով անասելի մորմոքում էր ու իրան մեղադրում իբրև յանցաւորի:

Վերջապէս օտար հողում, հեռու երկաց ընակու-

թեան ծուխ. «որդի, հառաչեց մայրը ու նստեց ճանապարհի մէջտեղը, ես այնտեղ հասնողը չեմ, եթէ մեռնելու եմ, թող այստեղ աչքերս փակեմ»: Խիզախը մօր կսկիծը տեսնելով չոքեց, նրա ծնկները համբուրեց. «ներիր ինձ, անառակ որդուդ, մայր ջան և աղօթիր Աստծուն, որ կարող լինեմ քո այս դառ վայրկեանները քաղցրացնել»: Ասեց ու աղի աղի լաց եղաւ: Մայրը աղի գլուխն առաւ գոգը ու մատներով մեղմիկ շփեց նրա այրուող ճակատը: Մօր գգուանքի, փաղաքշանքի տակ Խիզախը հանգիստ ու խաղաղ քնի ծոցն ընկաւ: Մայրը շարունակում էր փաղաքշել ծընկան վրայ դրած որդու գլուխը և անհուն սիրով դիտել նրա հպարտ երեսնարքը: Երկար ժամանակ բարձ շինած ծունկն անշարժ պահում էր, որ տղէն քնից լաւ կշտանայ, ինքն էլ դառ մտածմունքների ծովում լողում: Այս խոր լուծթեան մէջ նրա ականջն ընկաւ մի ձիու ոտնաձայն, սարսափած դէս դէն նայեց, տեսաւ դէնք ու զրահում մտած մի ձիաւոր: Մօտ գալով ձին կանգնացրեց ու քաղցրութեամբ հարցրեց.

— «Այ քուրա, կինարմատն ո՞վ, ճանապարհի մէջ նստելն ո՞վ, այս ի՞նչ բան է, ո՞վքեր էք, ո՞ւր էք գնում»: — «է՛հ: անծանօթ եղբայր, խօսեց թագուհին, մենք մայր ու որդի ենք, եկել ենք այս օտար երկիրը ապրուստ անելու»: Ձիաւորը թագուհու պատկառելի դէմքից ազդուելով կարեկցաբար հարցրեց. — «քուրա, ի՞նչ պէս է եղել, որ ձեր երկրից դուրս էք եկել»: — «Ձրաւորութեան երեսից, եղբայր, առաջ լաւ վիճակ ունէինք, յետոյ բաղդի անիւր շուռ եկաւ, մեզ հացի կարօտ շինեց: Որդուս տանում եմ գործի դնեմ, որ նրանով ապրուստ անեմ»: — «Հեռու մի տանիլ, քուրա, ասեց

ձիաւորը, եթէ տղէդ քաջ է, տուր ինձ, ես շատ մարդիկ ունեմ ձեռիս տակ, նրան էլ կը պահեմ, ոռճիկ կը տամ: Եթէ ճարպիկ է, վերջը կարող է մեծ կարողութիւն ձեռ բերել»:

Ձիաւորը բացի խրոխտ դէմքից, այլ և լաւ հագուստ ունէր: Թագուհին հաւատաց նրա խօսքերին ու ասեց. «յօժար եմ, ուրախութեամբ կը տամ, միայն պիտի սպասենք, որ տղէս ինքն իրան զարթի, թէ չէ խիստ բարկանում է, երբ քունը կոտրում են»: — «Լաւ կսպասեմ, ասեց ձիաւորը: Խիզախը անօթի փորով էր քնել, ժամանակից վաղ զարթեց ու անծանօթի առաջարկը լսելով պատասխանեց. «իմ քաջութիւնը ինքդ փորձով կը տեսնես, խօսքով ասելն աւելորդ է: Ի՞նչ ծառայութիւն ասես, կը կատարեմ, միայն այն պայմանով, որ սկզբից մի տարուայ վարձս տաս, մայրս կարենայ ինձնից բաժան ապահով ապրի»: — «Աչքիս վրայ, խօսեց ձիաւորը Խիզախի լայն կրծքին նայելով, ի՞նչքան ես ուզում: Ահա ստացիր ու մօրդ տուր»: Ոսկով լի քսակը մեկնեց նրան: Տղէն ասեց. «ժամանակ տուր, մօրս տանեմ այս երևող շէնը, օթևան վարձեմ, տեղաւորեմ ու գամ քեզ մօտ» — «Իրան էլ համաձայն եմ, գնա ու արի, հաւատում եմ խօսքիդ: Ինձ կը գտնես այս սարի լանջվերում»: Խիզախը տաբալ, մօրը տեղաւորեց, մօտը մի տարուայ ապրուստ դրեց, կրծքից համբուրելով թողեց ու եկաւ իրա մեծաւորի մօտ: Երկսով անցան, գնացին սարի միւս կողմը, ամայի դաշտի ծայրում կար մի խոր այր: Խիզախը հետը ներս գնաց, տեսաւ այնտեղ 40 կատաղի դէմքով մարդիկ, ամենն էլ դէնք ու զրահում մտած: Իսկոյն տեղներից վերկացան, խոր գլուխ տուին: Խի-

զախը հասկացաւ, որ իրա հետի մարդը նրանց գլխա-
ւորն էր, բայց չըհասկացաւ թէ ինչո՞ւ են այստեղ ժո-
ղովուել:

— «Տէր իմ, ի՞նչ պիտի անեմ ես, քիչ շունչ առ-
նելուց ետ հարցրեց Նիզախը:— «Համբերիր, երկու օ-
րէն վրայ կը պարզուի քո պաշտօնը, պատասխանեց
գլխաւորը: Տղէն մի երկու ժամ մնալով այրում՝ լսած-
ներէից եկաւ այն եղբակացու թեան, որ սրանք ամենը
փուշ, սրիկայ մարդիկ են և որ ինքը անառակ ընկեր-
ների ձեռից հեռանալուց ետ այժմ ընկել է աւազակ-
ների շարքը, որոնք հալալ աշխատանքը թողած, գի-
շերները յարձակվում են քարուղանների վրայ և վա-
ճառականների հարստութիւնները կողոպտելով բերում,
յանձնում իրանց գլխաւորին: Սա յարձակումներին
չէր մասնակցում, այլ գնում էր դուրս, տեղեկութիւն-
ներ հաւաքում, թէ ո՞ր քաղաքից ի՞նչ քարուղաններ են
եկնելու և ո՞ր ճանապարհով, գալիս էր իրա ստորա-
դրեալ աւազակներին խմբերի բաժանում և կողոպու-
տի ուղարկում: Նիզախը, գողագարանում մի քանի
օր մտածելուց ետ ասեց ինքն իրան. «մի տարուայ
վարձս այս գլխից ստացել եմ, անագնու թիւն կըլինի,
եթէ թողեմ, փախչեմ: Չէ, սրանք էլ ինձպէս մոլո-
րուած են, կը մնամ ու ինչքան ուժ ունեմ, կը փոր-
ձեմ սրանց ուղիղ ճանապարհի բերել, իրանց արարը-
ների վրայ մտածել տալ, եթէ համով չեն ուղղուիլ,
ուժ գործ կը դնեմ, եթէ ուժով չեն ուղղուիլ, կը
կոտորեմ բոլորին»: Սյս որոշման վրայ էր Նիզախը,
երբ գլխաւորը յայանեց, որ նրա պաշտօնն է, իբրև
ամենից տարիքով փոքրի գնալ աղբիւրից ջուր բերել
աւազակների և իրա ձիու համար: Թագաւորազը դա-

ուաւ ջրկիր, եռանդով ջուր էր կրում ուսով քարա-
սուն հոգու համար ու նրանց ծառայում: Երբեմն ա-
կանջ էր դնում զրոյցներին, հարց ու փորձով իմա-
նում էր, թէ ո՞ր կողմի վրայ պիտի գնան, ո՞ւմ վրայ
պիտի յարձակուեն:

Մի իրիկնադէմ շտապեցնում էին նրան, որ ջուր
բերի: «Ի՞նչ կայ, հարցրեց Նիզախը:— «Լաւ որս կայ,
օտար աշխարհից հարուստ վաճառականներ են անցնում,
այս գիշեր պիտի առաջները կտրենք»: Նկարագրից
Նիզախը հասկացաւ, որ վաճառականներն իրա հողի
մարդիկ են: «Ի՞նչպէս թոյլ տամ, որ աւազակներն
իմ ժողովրդին կողոպտեն, չէ, պիտի խափանել այդ
մտադրութիւնը»: Հէնց որ աւազակներին դուրս ու-
ղարկեց, ինքը մի հունի կոմբալ ունէր, առաւ ձեռն
ու կարճ ուղիով վազեց քարուղանի իջևանելու տեղը
ու խօսեց. «անծանօթ եղբայրներ, աւազակներ են գա-
լու ձեզ վրայ, ոտքի կացէք, հանեցէք ձեր զէնքերը»:
Ինքը գլուխը փաթաթեց ու միանալով վաճառական-
ների մարդկանց, մի լաւ ջարդ տուեց եկող աւազակ-
ներին ու յետ ածեց: «Ի՞նչ վարձատրութիւն ասես,
պատրաստ ենք, քնջ տղայ, ասին փորձանքից ազա-
տուած վաճառականները, ասա, որ քո լաւութեան
տակ չըմնանք»:— «Եթէ լաւութիւն անելու միտք ու-
նէք, գնացէք, գտէք ձեր կորած պատանի թագաւո-
րին, նրան արէք»: Սյս ասելով հեռացաւ Նիզախը ու
աւազակներից վաղ հասաւ այրը ու իրա տեղը պար-
կեց: Խայտառակուած աւազակները հետևեալ առաւօտ
գլխաւորին պատմեցին. «օտար վաճառականները շատ
սրտոտ մարդիկ էին, մեզ տեսան թէ չէ, էլ չըթողին՝
աչք բաց անենք, մահակներով յետ ածեցին, քիչ մը-

նայ գէնքերով մեզ շարդ ու փուրթ անեն»։— «Այ ամօթ ձեզ համար, ասեց գլխաւորը, ուղարկում եմ այդպիսի հարուստ քարուանի վրայ և դուք առանց կողոպուտի ետ էք գալիս»։

Երկրորդ շարթում գլխաւորը միւս խմբին ասեց. «աւելի մեծ քարուան է անցկենալու այս ինչ տեղով, հարուստ վաճառականների ապրանքով բարձած, գնացէք, յոյս ունեմ, դուք լիքը գաք»։

Խիզախը խօսք ու զրոյցից իմացաւ, թէ սվքեր են քարուանի տէրերը։ Առանց կասկածի տեղիք տալու իրա ծառայութիւնը կատարեց, շուրը բերեց։ Աւագակներին դուրս ուղարկելուց ետ ինքն էլ իրա թաթմոխ հոռնի կոպալն առած, կարճ ուղիով վագեց բորուանի իջևանելու տեղը ու յայտնեց. «անծանօթ եղբայրներ, աւագակներ են գալիս ձեզ վրայ, հանեցէք ձեր մահակներն ու գէնքերը, ես էլ ձեզ կօգնեմ»։ Ինքը գլուխը փաթաթեց ու հոռնի կոպալն առած, վաճառականների մարդկանց հետ ընկաւ եկող աւագակների վրայ ու լաւ շարդ տալով փախցրեց։— «Այ քաջ տղայ, ասին վաճառականները, մեծ փորձանքից մեզ ազատեցիր, ինչքանով վարձատրենք, որ քո լաւութեան տակ չըմնանք»։— «Ինչ լաւութիւն որ ինձ էք անելու, գնացէք, գտէք ձեր կորած պատանի թագաւորին ու նրան արէք», պատասխանեց Խիզախն ու վագէվագ հասաւ այրը։ Որսորդութեան ժամանակից ոտով արագ ման գալու սովոր էր։ Հետևեալ առաւօտ գլխաւորը երբ կրկին իմացաւ, թէ միւս խումբն էլ դարդակ է եկել, սաստիկ նախատինք թափեց գլխներին։— «Տէր, պատասխանեցին ստորագրեալները, մենք էլ չենք հասկանում, թէ ինչո՞ւ է բաղդներս կապուել, կամ ինչո՞ւմ

բոլոր վաճառականներն այժմ սրտոտ են դառել։ Էլ չեն սպասում, որ շարթուենք, մեզնից շուտ նրանք են յարձակուում գէնք ու մահակ առած»։— «Ամօթ ձեր տղամարդութեան, գոռաց գլխաւորն ու մատը մեկնելով Խիզախի վրայ ասեց. «եթէ այս ջրկիրին ուղարկէի, մի կոպալով եօթ վաճառական կը ծեծէր»։ Երբ ապրուստի պակասութիւնը զգալի դարձաւ այրում, գլխաւորը փորձի համար Խիզախին ուղարկեց պաշարի ետնից։ Ջրկիրը գնաց ու բեռներով բերեց։ Աւագակների նախանձն եկաւ. «սա ի՞նչ կտրուկ ոքմին է, որ ոչ ով չի կարում ընդգիմանալ»։ Խիզախը փորձառու էր դարձել, այրից դուրս գալիս ոչ մինի չէր ընկերացնում, մենակ գնում էր, խլում աւագակների բարեկամներից ու ազգականներից, որոնց մասին նախօրօք տեղեկութիւններ էր ժողովում։ Նրա ազդեցութիւնը այրի բնակիչների մէջ այնպէս մեծացել էր, որ ամենն էլ դողում էին նրա պատկերը տեսնելիս։ Միջոց էին փնտրում իրանց միջից հեռացնելու։ Գլխաւորը սրանեղութիւնից յոնքերը չէր բարձրացնում, գիտէին, որ քաջութեան պատճառով ջրկիրին շատ էր սիրում, ասին. «տէր, մեր աստղը խուարել է նրա համար, որ դու միշտ տխուր ես, և սրտով հիւանդ։ Քեզ միայն մի ճար կօգնի, այդ անմահական աղբիւրի ջուրն է, ուղարկիր ջրկիրին, բերի»։ Գլխաւորը կանչեց Խիզախին ու ասեց. «սիրելի, դու էլ տեսնում ես, որ դարդից հիւանդացել եմ, ինձ ճար է պէտք, ուզում եմ քեզ ուղարկել, բայց ափսոսում եմ ջահէլ հասակիդ, չէ որ մօրդ մինուճարն ես»։— «Ասա, տէր, քեզ համար ամեն վտանգի պատրաստ եմ», պատասխանեց Խիզախը։— «Դու պիտի գնաս անմահական աղբիւրը ջրի

Աստուծո՞ւ ես՝ խմեմ թէ չէ, կառողջանամ, միայն ինչ արած, որ աշխտեղ գնացողը էլ յետ չի գալիս. երկիւղալի տեղ է, ամենն էլ սարսափում են: — «Միամիտ կաց, տէր, երբ ինձ ես արժան տեսնում այդ յանձնարարութիւնը, ես կը գնամ և ուզածդ կըբերեմ»: Խիզախը չըզիտէր աւագակների չար նպատակը, Աստուծո՞ւ անունը տալով միամիտ վերկացաւ ու գնաց:

Անթիւ շէն ու բնակութիւն անցնելուց ետ հանդիպեց մի ամայի դաշտի, տակ ու գլուխ փշով, տատասկով լի, դժուար անցանելի: Խիզախը իրա յամառ բնաւորութիւնով կոխոտեց, անցկացաւ: Դրանից ետ նրա առաջ եկաւ մեծ տարածութիւն քարով, դռէճով լի: Համբերութեամբ այդ էլ անցկացաւ ու պատահեց մի անտանելի ցելի, փխակի, որի մէջ մանեղն ու դուրս գալը ամեն ճամբորդի բան չէր: Խիզախն իրա անյուսահատ բնոյթով այդ արգելքին էլ յաղթեց. համբերութեան մէջ քաջ վարժուած, ողջ առողջ հասաւ մի անտառի: Ես անտառ եմ ասում, դու դրախտ իմացիր, մէջտեղը կանաչ կարմրին տուող, բոլորակ ծաղկաստան ու նրա կենդրոնում անմահական աղբիւր. տակից ջուրը բլթում էր ու ծաղկապատ աւագանի մէջ պլպլում ու արևի շողերի հետ խաղում: Այնքան նեղութիւններից ետ Խիզախին շատ դուր եկաւ այս ամենը, մանաւանդ վարար աղբիւրի վրայ խելքը գնում էր: Կուսցաւ աւագանի վրայ, սրտի ուզածի չափ քաղցր խմեց ու աչքը զցեց անտառի սոսին տուող ծառերին, ծաղիկներին: Այնքան զմայլելի էին տեսարանները, կասես Աստուծո՞ւ իրա բոլոր շնչով նրանց մէջ նստած:

Այնքան մտիկ արեց դրախտային տեղերին, որ

կշտացաւ, յետոյ հետը բերած ամանը ձեռին մօտեցաւ աղբրին, որ լցնի ու ետ դառնայ: Կուսցաւ, որ բլրան ակնից լցնի, զգաց, որ ետևից իրա գլխին վրայ հարող կայ: Ով որ էր, իրա կուսն բոլոր ուժը փորձում էր, բայց չէր կարում Խիզախի վիզը ճկել և գլուխը ջրում թաղել: Ի՞թի ծայրը երբ դիպաւ ջրին, նրա փայլուն մակերեսի վրայ նշմարեց հրեշտակից էլ սիրուն մի աղջկայ պատկեր: Այս լուսացնցուղ պատկերից հոգի առած, Խիզախը ազատ ձախ թևը ետ տարաւ ու պատ տուեց աղջկայ բարակ մէջքով, այնպէս ամուր սեղմեց նրա գոտկատեղը, քիչ մնաց մէջքի իլիկը կոտրի: Խորհրդաւոր գեղեցկուհին թոքերին ուժ տալով կուրծքն այնպէս ուռցրեց, որ լանջակապի կոճակները իրար ետևից կտրտուեցին ու խկոյն նրա ծոցից մի նախշուն թաս ընկնելով աւագանի պռունկն ի վեր գլորուեց: Տղէն շտապով ձախ ձեռը բաց թողեց ու գլորուող թասի ետնից վազեց: Վերցնելն ու ետ դառնալը մի ակնթարթ հազիւ քաշեց, բայց երբ աղջկանը աչք ածեց, ոչ աւագանի ծաղկաստանում գտաւ և ոչ սաղարթախիտ անտառի ստուերներում: Խիզախը շատ ան ու վիշարեց, քթից շատ մուխ հանեց, բայց ձեռից փախածի ետնից չը հասաւ: Նախշուն թասը խնամքով պահեց իրա ծոցում, ամանը անմահական ջրով լցրած ճամբայ ընկաւ դէպի այրը:

Աւագակները ուրախացել էին նրա ուշանալու վրայ. «հազիւ ազատուեցինք այն զարգանդ արարածից, փորձանքի տակով եղաւ, կտրաւ», ծածուկ ասում էին իրար: Ինչ որ գլխաւորն էր, սրտանց սիրում էր Խիզախին, մի քանի անգամ մարդ էր ու-

զարկել բարձր սարի կատարից նայելու, արդեօք գալիս է իրա կտրիչ ջրկիրը, թէ չէ: Նախանձոտ աւագակները միշտ լուր էին տուել, թէ ոքմին չի երևում: Գլխաւորը մի օր արտասուք թափելով ակասում էր նրա կորուստը, երբ յանկարծ Սիգախը լոյս ընկաւ ու կանչեց. «ահա ուզածդ բերի, տէր, վեր կաց, խմի»: Գլխաւորը տուաջ Սիգախի ճակատը համբուրեց, յետոյ անմահական շուրը բերանին դնելով խմեց, այնքան խմեց, որ առողջացաւ: Սիգախի ժամանակը չէր լրացել, մնաց այրում ու շարունակեց ապարդիւն դարձնել աւագակների գիշերային արշաւանքները: Երբ նրանք առանց կողոպուտի մնալով համարեա քաղցած օրում էին մնացել, ջրկիրն ասեց գլխաւորին. «տէր, կողոպուտն այլ ևս չի աշողւում սրանց, ամեն տեղ ընդգիծութեան են պատահում: Ես կամենում եմ ապրուստի միջոց ճարել, բայց ոչ կողոպտելով, ինչպէս մինչև օրս է եղել: Այս թասը, որ անմահական աղբիւրի մօտ եմ գտել, կը տանեմ քաղաք, փողով կը վաճառեմ ու նրա գնով պաշար կը բերեմ»: Գլխաւորը հաւանութիւն տուեց: Սիգախը թասը ծոց դրած գնաց նշանաւոր ոսկերիչներին մօտ: Ոչ ոք չըկարաց նրա գինը որոշել, ամեն մի նոր տնդըղող նրա արժէքն աւելացնում էր: Հասարակ մարդու ուժից վեր էր նրան առնելը, ձեռէ ձեռ անցնելով թասը հասաւ թագաւորի պալատ. սակայն գինն այնքան բարձրացած էր, որ արժէքը վճարելու համար գանձարանում այդքան փող չըկար: Չար նազիրը նենգութիւն բանացրեց, ծածուկ հասկացրեց թագաւորին այսպէս. «բաւական տարի առաջ գողերը կողոպտեցին հօրդ գանձարանը, շատ ոսկու հետ տարան զարմանալի թասը,

նման այն թասին, որ այս երիտասարդը վաճառում է: Երդում կուտեմ, որ սա հէնց գողացուած թասն է»: Նազիրը ժողովրդի մէջ ևս տարածել տուեց, որ անգին թասը թագաւորի գանձարանից է տարուած: Թագաւորին այդ ձեռնտու էր, անփող տիրացաւ թասին և հրամայեց թաս վաճառող երիտասարդին իբրև գողի, կախ տալով սպանել և մարմինը թռչունների կերակուր դարձնել:

Սիգախն իրա խիզախութիւնն արեց, պալատականների ներկայութեամբ դարձաւ, թագաւորին ասեց. «թագաւոր, զուր տեղ հոգուդ վրայ մեղք ես բարձում. ես այդ թասը չեմ գողացել, այլ գտել եմ»: — «Լսում ես, տէր թագաւոր, գոչեց չար նազիրը, յանցանքը կիսով չափ վիզն է առնում: Ասում է՝ դրտել եմ, մի քիչ էլ եթէ հուպտաս, կը խոստովանի թէ ճիշտեղ է գտել»: — «Ճշմարտին հաւատա, թագաւոր: խօսեց Սիգախը, այդ թասը գտնուած է. կուզես, տուր, տանեմ, դրա հատն էլ բերեմ»: — «Ոչ, թագաւոր, վրայ բերեց նազիրը, գողին չի կարելի ձեռից թողնել. կը գնայ ու չի գալ: Թող իրա տեղ մեծ գրաւ թողնի»: — «Գրաւ չեմ կարող, ասեց Սիգախը, բայց պատանդ կը թողեմ: Աշխարհիս վրայ մի մօրից աւելի ոչինչ չունեմ, որ աչքիս լոյսին հաւասար է, եթէ յօժար ես, նրան կը բերեմ»: — «Այս թասը մի պառաւ կընկայ հետ չի կարելի փոխել, եթէ ուրիշ բարեկամ մարդ չունես պատանդ տալու, ուրեմն պիտի մեռնես, ասեց թագաւորը: Սիգախի վրայ մի ծանր տխրութիւն եկաւ, ոչ թէ նրա համար, որ պիտի կախուէր, այլ որ նա յօժարուում էր իրա սրտի ամենաթանկ բանը նըրանց մօտ պատանդ թողնել, նրանք էլ արհամարհում

էին: Քիչ մտածելուց ետ ասեց. «լսիր, թագաւոր, պառաւի փոխարէն տղամարդ ես պահանջում, լաւ, մէկի տեղ 40 հոգի բերեմ»: Խիզախը գնաց այրը, պատմեց գլխաւորին իրա հետ պատահած դէպքը ու առաջարկեց. «Թող քո մարդիկը գան քաղաք, թագաւորի մօտ պատանդ մնան, մինչև ես գնամ թասի հատը բերեմ»: Աւագակները կամք չըտուին. «վայ թէ գնացիր ու չեկար, մենք ինչո՞ւ կալանաւոր մնանք»: Գլխաւորը յորդորեց, որ յօժարուեն, նրանք չուղեցին: Այն ժամանակ Խիզախն իրա հունի կողմը բան գցեց նրանց ջանի վրայ, հակառակ խօսողներին լաւ դնքսեց: Արիւնհեղութեան առաջ առնելու համար գլխաւորն ասեց. «էլ հակառակութեան տեղը չի, ես էլ հետներդ գալիս եմ, գնանք»: Ամենը կակղած իջան քաղաք: Թագաւորին ներկայացնելով ասեց. «ահա, խոստացած պատանդները բերի, պահիր սրանց ինչպէս քո անուսին վայել է»: — «Քարի, ահա ստացիր թասը ու գնասրա հատը բեր: Եթէ խօսքդ կատարես, այս մարդկանց ազատութիւն կը տամ, իմ նաղիրին իբրև զրպարտողի կը կախեմ, թագաւորութեանս կէսն էլ քեզ կը տամ: Կէս տարի քեզ ժամանակ, եթէ մի օր աւել անցկացաւ և դու չերևացիր, այդ նշան է, որ դու խաբեբայ ես, այս ծանօթներդ կը կախուեն»: — «Թող այդպէս լինի, թագաւոր, ասեց Խիզախը ու թասը ծոցում, հունի կողմը ձեռին ճամբայ ընկաւ մօր կողմը, օրհնութիւնն առնելու, նրան պատմեց բանի էութիւնը, ու խոստացաւ մինչև կէս տարին իրա մօտ լինել:

Գնաց, գնաց, շատ ու քիչն Աստուած գիտէ, հասաւ մի քաղաք ու նրա պակին մի պառաւի խրճիթում հիւր ընկաւ: Աղքատ պառաւը օջաղի կրակն

իրար արեց, հիւրի դիմաց նստեց, ծանօթուելու համար հարց-փորձ էր անում, երբ դրսից կանչոց լսուեց. «պճաւ, ո՞ւր է տղէդ, պահապան գնալու հերթը քոնն է»: Պառաւն այդ կանչի վրայ խիստ յուզուեց, լաց եղաւ. «այսպիսի պատուհաս կը լինի՞, որ մենք քաշում ենք: Ո՞րտեղից պահապան տամ, միթէ մինչև օրս տուածը բաւական չէր»: Այս թոնթորանքը լսելով Խիզախի անահ սիրտը չըդիմացաւ. «ինչի՞ համար են պահապան ուղում, նանի, հարցրեց: — «Այ որդի, իսկի ես գիտեմ... աշխարհի գլխին պատվի է եկել, չի վերջանում: Ժողովրդից հերթով մարդ են տանում թագաւորի որդու գերեզմանին հսկելու: Գնացողը մահուան տուր է ուտում, մեռնում, երկու տղէս այդ ճամբին կորան, հիմի երրորդ տղիս հերթն է, եթէ գնաց, ծուխս կը հանգչի, ի՞նչպէս թողնեմ»: — «Համբերիր, նանի, մի նեղանալ, այդ պարտքը ես կը քաշեմ: Ինձ տար թագաւորի դուռը ցոյց տուր»: Պառաւը տարաւ, Խիզախը մտաւ պալատն ու ասեց. «թագաւորն ապրած կենայ, ես ճամբորդ մարդ եմ, պատահմամբ լսեցի, որ քո աշխարհում այսպիսի կարգ կայ: Թող այս գիշեր ես պահապան լինեմ: Եթէ ողջ մնացի, իմ բաղդն է, եթէ ոչ, թող ես էլ ուրիշների պէս գոհ լինեմ»: — «Շատ շնորհակալ կը լինեմ, գնա, ասեց թագաւորը:

Խիզախը հիւրընկալ պառաւի տանից վերցրեց բան, թի ու գնաց գերեզմանի մօտ մարդահասակ փոս փորեց, մտաւ մէջը, վերևից բարակ ճախեր փռեց, որ չերևայ: Նստեց փոսում և սպասեց: Գիշերուայ կիսին մէկ էլ տեսաւ, երկինքն որոտաց, թղպերն իրար գլխով տուաւ, դռոցի ու թնդոցի ծոցից մի սև ձի դուրս պրծաւ, փրփրում մտած, իջաւ գերեզմանից քիչ հե-

ուու: Չիաւորը լուսաթաթախ աղջիկ էր. շաապով վէր եկաւ ու երեք ճիւղանի մտրակը ձեռին մօտեցաւ գերեզմանի ափին: Մէկ անգամ խփեց, հողը յետ-յետ եղաւ, դագաղն երևաց: Երկրորդ անգամ խփելիս դագաղը դուրս թռաւ խուփը վրէն: Երրորդ անգամ խփելուն պէս խուփը դէն ընկաւ, դագաղի մէջ մի երիտասարդ կանգնեց ընտիր հագուստով: Աղջիկը փաթաթուեց կենդանացածի վզով ու սկսեց շերմաշերմ համբուրել: Երիտասարդն ամեն կերպ աշխատում էր նրա բորբոք գրկից ազատուել, չէր լինում: Չքնաղ ճիւղորն այն ժամանակ գրկից թողեց երիտասարդին, երբ նա բոլորովին ուժասպառ էր: Աղջիկը մտրակը կրկին շարժեց, երիտասարդը դագաղում պարկեց: Երկրորդ դարկով դագաղը գերեզման իջաւ, երրորդով հողն իրա տեղը թափուեց ու թուժբ գոյացաւ: Աղջիկն շտապ մօտեցու սև ձիուն, ոտը դրեց ասպանդակի մէջ և ուզում էր բարձրանալ մէջքը, խիզախը դուրս պրծաւ թագնուած տեղից, մի ձեռով ձիու սանձը բռնեց, միւսով աղջկայ բազուկը ու այնպէս ամուր սեղմեց, որ մտրակը մտաների միջից ընկաւ: Կուցաւ որ մտրակը վերցնի, ետ նայեց, էլ ոչ աղջիկը կար, ոչ ձին: Մնաց անի ու վիշ անելիս, թէ ինչո՞ւ այն անգամ էլ լուսաթաթախ աղջիկը ձեռից ընկաւ: «Տեսածս երանգ էր, թէ իրականութիւն, խօսեց խիզախը, անի մտրակի գործութիւնը փորձեմ»: Երեք դարկով երիտասարդին գերեզմանից հանեց: Նրա դարմանքին սահման չըկար: Երեք անգամ նորից դարկելով ննջեցեալին իրա տեղը պարկեցրեց:

Լուսաբացին հէնց որ պալատը գնաց, թագաւորի դարմանքն եկաւ, որ աղէն ողջ անվնաս վերադարձել

է: — «Սպասիր, թագաւոր, խօսեց խիզախը, տեսածս պատմեմ, աւելի դարմանաս»: Եւ սկսեց միառմի պատմել: — «Այդ անհնարին բան է, թագաւոր, ասին լսող պալատականները, կարելի է սա խսկի գերեզմանի մօտ չի էլ եղել: Հաստատ խաբում է: Եթէ ժողովուրդը լսի, որ սա գնացել է ու շունչը վրէն ետ եկել, հազար ու մի կարծիք կանի: Ի՞նչ պատասխան տանք այն ժամանակ: Այդ գլխացաւանքից ազատ մընալու համար օգտակար ենք համարում սրան բանդարկել»: «Բանդարկելն ի՞նչ օգուտ, ասին մի քանիսը, աւելի լաւ կը լինի գլուխը պոկել»:

Թագաւորը կարգադրեց, որ խաբբայ երիտասարդին կապկապած տանեն բարձր բարի գլխից գլորեն: խիզախն էր, իրան թափ տալով կանգնեց համարձակ ու թագաւորին այսպէս ասեց. «գուր ես հաւատում սրանց խօսքին, գնանք գերեզմանի մօտ, եթէ ասածս չըկատարեմ, թէկուզ ծառից կախեցէք»: Թագաւորը յօժարուեց ու պալատականներն առած գնաց գերեզմանի մօտ: խիզախը ցոյց տուեց իրա թագնուած տեղը, յետոյ ծոցից հանելով մտրակը թագաւորին հարցրեց. «բանի տարի է, որ աղէդ մեւել է»: — «Նօթ տարի»: — «Կուզե՞ս նրան ողջ տեսնել, հարցրեց խիզախը մտրակը ձեռում տրորելով: Եկած բազմութիւնը խրոնուեց գերեզմանի շուրջը: Չարախօսները դարձեալ գոռացին. «դա խաբբայ մարդ է, այդ տեսակ հրաշք չի կարող պատահել»: — «Թագաւոր, կանչեց խիզախը, եթէ սրանց ասածի հակառակ քո որդուն կենդանացնեմ, խօսք ես տալիս սրանց իբրև զրպարտիչներէ քանեմ, խօսք եմ տալիս, ասեց թագաւորը: Հէց որ խիզախը մտրակով գերեզմանին դար-

կեց, պատահածից ամենի բերանը բաց մնաց: Երկրորդ զարկին դագաղը ներքեից վերև թռաւ և նայողներին փշաքաղեցրեց: Թագաւորը զարմանքից գունատուել էր, Խիզախը նրան նայելով երրորդ անգամ մտրակը զարկեց: Իսկոյն և եթ խուփը դէն ընկաւ ու նորածիլ բեղերով թագաւորացը գերեզմանի ամին կանգնեց: Թագաւորն սկզբի վայրկենին շշուուեց, ապա ուրախութիւնից լաց լինելով թեքը տարածեց ու տղին գիրկն առաւ:

Կարօտն առնելուց ետ դարձաւ Խիզախին ասեց. «բա՛ջ երիտասարդ, զրպարտիչներն իրանց պատիժը կը ստանան, դրանում միամիտ կաց: Ու որովհետև իմ հատիկ զաւակն ինձ բաշխեցիր, իբրև վարձատրութիւն քեզ լինի իմ թագաւորութեան կէտը, կաց ու վայելիր:—Շատ շնորհակալ եմ, թագաւոր, այժմ թագաւորութիւն չեմ փնտռում, այլ այս թասի հատը»: Յոյց տալով ասեց. «եթէ գանձարանիդ մէջ սրա պէսն ունես, տուր»:—«Քո արած լաւութիւնն այնքան մեծ է, որ զրա պէս տաս թաս էլ քո չարին փոխ կանեմ: Բայց հաւատա, այդպիսի բան չունեմ»:—«Փոյթ չէ, ինքս կը գնամ գտնելու սրա հատը, շատ կարելի է տղիդ համար էլ հարսնացու ուղարկեմ: Ուրախ եմ, որ համոզուեցիր խօսքիս արհուլթեան մէջ, ինձ ուրիշ վարձատրութիւն պէտք չէ»: Ողջացած թագաւորացը մեծ խնշոյք սարքեց Խիզախի պատուին, որ իրա ուժով ու ճարտիկութիւնով երիտասարդներին շատ զարմացրեց: Յետոյ ամենին մնաս բարով ասելով գլուխը փէշը դրած հեռու աշխարհի կողմը գնաց: Շատն ու բիչը Աստուած գիտէ, երկար տարածութիւն կտրելով դէմ առաւ մի ծովի, որի երկու կողմի թագաւորները

կռուի մէջ էին: Ափին կանգնած նաւը պաշար էր տանում զօրքի համար: Զինուորները խորհուրդ տուին Խիզախին իրանց նաւի վրայ չըբարձրանալ: «Պատճառն ինչ է, հարցրեց Խիզախը:—Մեր թագաւորը կռուի մէջ է այն կողմի թագաւորի հետ. թշնամին աշխատում է մեր մթերքները ջուրը թափել և զօրքին սովով նեղել. դրա համար հէնց որ մեր նաւը հասնում է ծովի մէջ տեղը, յանկարծ լոյս է ընկնում մի հրաչք, թիկունքով նաւը շուռ է տալիս ջրի մէջ: Եթէ նաւի վրայ լողալ չիմացող մարդիկ են լինում, խեղդուում են: Ամբողջ եօթ տարի է, այս բանը շարունակուում է»: Խիզախի անվախ հոգին վառուեց, վճռեց նաւը փրկել վնասատու հրաչքի ձեռից: Խնդրեց նաւապետին, որ իրան նաւի վրայ վերցնի, իրա կեանքի համար ապահով լինի, որովհետև լաւ լողալ գիտէ: Իրաւունք ստանալուց ետ Խիզախը դիտմամբ կանգնեց նաւի վրայ այնտեղ, ուր սովորաբար զարգանդ հրաչքն երևում էր: Քամու ուժով նաւը ծանր ու բարակ լողալով հասաւ մէջտեղը: Նաւն սկսեց անալի կերպով օրօրուել, այդ նշան էր, որ հրաչքը երևալու է շուտով: Ամենը սարսափած դողում էին: Խիզախի աչքը նշմարեց ջրից դուրս եկող մի բազուկ, որ նաւի կողքից բռնած ուզում էր շուռ տայ: Խիզախի սիրտը չըջփոթուեց, վրայ թռաւ ու այդ բազկից ամուր բռնեց: Հրաչքի մարմինը ողորկ էր ինչպէս մարմար, թևն ուժով թափահարեց, ու ողորկ բազուկը բաշեց ազատեց, մատի մատանին յիշատակ թողելով ուժեղ տղի բռն մէջ: Հրաչքն այլ ևս չերևաց, նաւն անվտանգ հասաւ միւս տիւր: Ամենը հիացած էին նրա քաջութեան վրայ: Նաւապետը թագաւորի տղէն էր, ուրախացած

ասեց Խիզախին. «քաջ երիտասարդ, ի՞նչ տամ քո արած լաւութեան համար, որ գոհ մնաս»: — Այն էլ բաւական վարձ էր, որ ծովի վրայով շուտ հասցրիր այս ափը, թէ չէ ցամաքի ճանապարհը շատ երկար էր. աւելի բան չեմ ուզում, մնաս բարով, ասեց Խիզախը ու մատանին ծոցը դնելով գնաց: Առաջն եկող բոլոր քաղաքներում թասը ցոյց էր տալիս, նրա հատի համար մեծ գումար խոստանում. ամեն տեղ էլ ասում էին՝ չըկայ, չունենք: Քաղաքներից յոյսը կտրած ընկաւ անտառները, այրերը, աղբիւրների ափները, ժայռերի ծերպերը՝ կարծելով թէ այնտեղերք քաջքերի, վհուկների կը հանդիպի, նրանց միջոցով տեղեկութիւն կիմանայ: Ամենը դժուր:

Բայց Խիզախը ոչ մանգալուց էր յոգնում, ոչ անաշողութիւնից յուսահատուում, ինքն իրան մխիթարելով ասում էր. «էլի առաջ գնամ, կարելի փափագս կատարւում է ու կէս տարին չըլրացած կարողանում եմ մօրս երեսը տեսնել»: Թափառելը շարունակեց, շատ գնաց թէ քիչ, յայտնի չէ, նրա ուշադրութիւնը գրաւեց մի բարձր լեռ, չորս կողմը կանաչապատ դաշտ, ինքը մէջտեղ քարքարուտ ու սրուլիկ: Բայց այդ չէր նրան գրաւողը, որ բերեց լեռան ստորոտը, այլ այն սիւնաձև ծուխը, որ կատարից բարձրանում էր ու գնում սիպտակ ամպերի հետ խառնուում:

— Տէր Աստուած, գոչեց նա, այս ի՞նչ հրաշք է, միթէ այդ ամպաթաթախ կատարին մարդաշունչ կարող է լինի: Բացի արծիւներից ո՞վ կարող է այնտեղ վերև բարձրանալ: Բայց չէ՞ որ արծիւները կրակ անելու պէտք չունեն: Ուրեմն ի՞նչ քաջեր են լինելու, որ անտառն ու հովիտը թողած գնացել են ամպերի ծո-

ցում բնակութիւն հաստատել»:

Խիզախը լեռան բոլորքը պտտեց, ամեն կողմերին աչք ածեց, ոչ մի կածանի հետք չը նշմարեց. «Տէր Աստուած, բացականչեց նա, հապա այս լեռան բնակիչներն ի՞նչպէս են բարձրացել, որ լանջերի վրայ ոտնահետ չեն թողել: Նրանք հօ չէին կարող թռչել»: Հետաքրքրութիւնից վառուած սկսեց նորից ականել սրուլիկ լեռան ստորոտը, լանջերը, որ ոտնահետ գտնի, չըկայ ու չըկայ, իսկ կատարի վրայից ծուխը պարզ կերպով ծառանում էր ու նրա ուշքը, միտքը յափշտակում:

— Կամքի առաջ ի՞նչ կայ դժուար, խօսեց Խիզախը ու վստահօրէն վերև նայեց. սիրտս ասում է՝ էլ ինչի՞ է անունը Խիզախ, որ չես կարող վերև բարձրանալ. գնա տես, ի՞նչ ծուխ է վերև, տես, ո՞վքեր են այնտեղ ու էլի ի՞չի՞ր քո ճամբէն շարունակիր, որ թասի հատը գտնես»: Այս խօսքի վրայ թափն արեց ուժեղ ոտներով ու վազեց դէպի լեռան բարբարոտ կողքը, չանգըտելով մի տաս ոտ բարձրացաւ: Բռնելու հնար չունէր, որ հասած տեղը կանգ առնէր, ոտի տակն էլ փոխը էր, ուստի ներքև սլուեց, քարին ու դռէճին մատները քսելուց քեծ ոտելով: — Ոտնամաններս խանգարում են, մտածեց Խիզախը, արի բորիկանամ, այնպէս փորձեմ»: Ոտնամանները հանելով երկրորդ անգամ թափն արեց ու վազեց դէպի լեռ: Չեռի, ոտի մատներով փխրուն դռէճը բռնելով քիչ վերև գընաց, բայց վա՛յ այն գնալուն, տասնինգ, քսան ոտ չը փոխած, արիւնլուլիկ մատներով դարձեալ ներքև սըլլուեց ու գետնին դըրխկաց: Առանց զգացած ցաւը քանի տեղ դնելու Խիզախը խօսեց. «Վաս չունի թէ

ձեռն ու ոտս արիւնոտուեցին, բայց մի քանի քայլ
աւելի գնացի լանջի վրայ, այդ նշանակում է՝ եթէ
համբերութիւնս լարեմ ու շարունակ փորձեր անեմ,
վերջապէս խլէգնեցի: Քարաթոթոշները պէս կը գնամ
վերև»: Մօր մինուճար աղէն շունչ առնելով, ուժերը
նորոգելով կրկին փորձ արաւ դէպի լեռը, կրկնեց մէկ,
հինգ, տաս անգամ ու շարունակեց այսպէս մի օր,
երկու օր: Ուշ չը դարձրեց ոչ ձեռի դրինդները քե-
րուելուն և ոչ եղունգների տակերի արիւնոտուելուն:
Խիզախը վճռել էր ոչ մի ցաւի առաջ չընահանջել:
Եթէ սկըհում էր, նորից վեր էր կենում ու չորեք-
թաթ անելով, ոլորուելով բարձրանում: Բոլոր ուժը
ոտի բթերի վրայ էր, դրանք յոգնում էին թէ չէ,
ձեռի ափները պոկ էին գալիս դռէճստ լանջից ու
մէկ էլ տեսար խոշոր մարմնով ներքև գլորուեց: Խլէ-
գի պէս այնքան փորսող տուեց, այնքան տրորեց լե-
ռան լանջերը, այնքան սոթ տուեց, որ փխրուն սարա-
լանջով վեր գնալու մէջ վարժուեց: «Վճիռս է ծխի
մօտ համսել, ինչ չարչարանք ուղում է, թող գլխիս
գայ, գոչում էր ջրապինդ Խիզախը ու անսպառ ե-
ռանդով հողի ու քարի հետ կռիւ տալիս ոտներով,
ձեռներով, և արիւն-բրարնքում մտնում:

Խիզախի ջանքերը զուր չանցան, վերջապէս եր-
րորդ օրուայ մթնադէմին նա մօտեցաւ սրուիկ լեռան
կատարին ու տեսաւ մի փոքրիկ շէնք, մէջը ճրագ
վառած: Գուրսը շունչ կենդանի չէր երևում, Խիզախը
զոյշ մօտեցաւ լուսամուտին, տեսաւ ներսում բու-
խարու կրակն ուրախ վառվրուալիս, սուփրէն մեկնած,
ամեն բարիքով փ: Օթևանի բնակիչներն էին երեք
չքնաղ աղջիկ: Ես աղջիկ եմ ասում, դու արեգակ,

լուսնեակ իմացիր: Ինչպէս երևում էր, հեռու տեղե-
րից նոր էին իրար կուշա ընկել, համ սուփրի բա-
րիքները վայելում էին, համ իրար հետ կարօտով զը-
րոյց անում: Խիզախն այդ հրեշտակներին տեսնելիս
մոռացաւ մատների մղկըտոցն էլ, մարմնի շարգն էլ:
Նրանց տեսքով զմայլած՝ լուսամուտի տակ դրսից ա-
կանջ էր դնում նրանց զրոյցներին: Ամեն միւր պատ-
մում էր իրա գլխով անցածը: Նրանց միջի աւագը
բաժակը վերցրեց և խօսեց. «Ընչեր, մեր լեռից ներ-
քե, երբ աշխարհում զբօսնում էի, գնացի մեռած սի-
րելուս այցելութեան: Չրաշագործ մտրակի ուժով հա-
նեցի գերեզմանից, կարճ ժամանակով կենդանացրի,
համբուրելով, զգուրելով սրտիս կարօտը նրանից առայ,
հէնց ուղում էի ձի նստել, յանկարծ մի կտրիճ աղայ
վրայ թռաւ ու բազկիցս բռնեց: Գերի չընկնելու հա-
մար մտրակը թողի նրան ու ձեռից սլածայ: Հազա-
րաւոր երիտասարդներից նա առաջինն էր, որ ինձ
այդպէս վախեցրեց: Սյս բաժակը խմում եմ նրա պէս
ուժեղի կենացը: Աստուած նրա սիրտն այն կրակը
զցի, որ բուն ու հանգիստ կորցրած իմ ետնից ման
գայ: Եթէ նրա սիրտը տէր ունի, թո՛ղ գոնէ մտրակս
վերադարձնի, որ բաղդս կասուած չըմնայ: Չէ՞ որ
խեղճ թագաւորազը վշտից մեռաւ, որովհետև գոռոզ
հայրը յօժար չէր, որ մի անյայտ աղջկայ իրա հա-
տիկ ժառանգը կին ուղի»: — «Խմում ենք այդ քաջ ե-
րիտասարդի կենացը, ասին միւս քոյրերը ու դարդա-
կեցին: Մի բոպէ լուրթիւնից ետ միջնակն առաւ բա-
ժակը ու խօսեց. — «Բնչեր, ամբողջ եօթ տարի յա-
ջողութեամբ կուում էի իմ սէրը մերժող թագաւո-
րազի դէմ, որ իբրև նաւապետ ուղում էր պաշար անց-

կացնել ծովի այն կողմը զօրքի համար: Ամենի վրայ գարհուր էի տարածել, նաևը շուռ տալով անթիւ մարդիկ ու ապրանք էի ծովն ածել: Ոչ մի ադամորդի չէր համարձակուում տեղից շարժուել, բայց վերջին անգամ մի խիզախ երիտասարդ վրայ թռաւ, հօր մատներով բազկիցս բռնեց: Ինձ այնպէս նեղը գցեց, որ ոչ միայն չըկարացի նաևը շուռ տալ, այլ ձեռիս թանկագին մատանին նրա ափում թողնելով հագիւ անձս ազատեցի ու փախայ: Աստուած անի, տղի սիրտն այնպէս կըրակուի, որ հովանալու համար գիշեր ցերեկ ինձ փընտրի և մատանին ձեռին գայ ինձ տիրանայ: Իսկ եթէ սիրտն արդէն ուրիշի վրայ է, գոնէ գութ ունենայ, մատանին ինձ վերադարձնի, որ բաղդս կապուած չը մնար, կարենայի վրէժս թագաւորազից հանել»: — «Խըմում ենք այդ քաջ երիտասարդի կենացը, ասին միւս քոյրերը և քաղցր հիւթը դարդակեցին: Մի բոպէ լըռութիւնից ետ խօսեց ամենափոքրը ու ամենասիրունը, «Քոյրեր, բաղդ որոնելու ցանկութիւնը ձեզանից մէկին տարել էր լուռ հանգստարան, միւսին կապոյտ ծով, իսկ ինձ էլ տարաւ ստուերաշատ անտառի անմահական աղբիւրը, որին մօտենալը, նրա ջուր խըմելն ու ողջ հեռանալը ամեն մի ադամորդու շնորք չի: Ինչպէս որ ձեր ձեռից անթիւ, վախկոտ երիտասարդներ մահ են ընդունել, այդպէս էլ եղել են անմահական ջրի եկողները, ամենն էլ մեռել, կորել են: Վերջին անգամ մի երիտասարդ, ամեն արգելքի յաղթելով հասաւ անմահական աղբիւրի կողշտը, ոչ միայն ինքը կուշտ խմեց, այլ և ուղում էր ուրիշ մահկանացուի համար տանի: Ես կամեցայ այդ մեծասրտին պատժել ու աղբիւրի մէջ ընկղմել, բայց այդ երի-

տասարդը մատներով մէջքս այնպէս սաստիկ սեղմեց, ոչ քեզ մնաց հողիս տայի: Ուժգին շունչ առնելիս լանջակապիս կոճակները չըդիմացան, իրար եանից կտրտուեցին, ծոցս բացուեց ու այնտեղից ընկաւ նաշխուն թասը: Նա վագեց այդ թասը վերցնելու, ես ձեռից ազատուեցի ու փախայ: Ջուրը հայելի էր, նրա մէջ ես նրա պատկերը տեսայ, նա իմ: Թասի հատը մնացել է ծոցումս: Խմում եմ իմ ուշքը խլող այդ քաջի կենացը: Եթէ իմ սիրտն այրող կրակի մի պէժը Աստուած գցէր նրա սիրտը, նա հանգիստ չէր մնալ, քունը կտրած եանիցս կը գար, աշխարհէ աշխարհ ման գալով, որ ինձ գտնէր, ինձ էլ, թասի մնացած հատին էլ տիրանար: Իսկ եթէ քարասիրտ կը դառնայ, չի գալ, այն ժամանակ ինքը լինի իրա Աստուածը»: — «Խմում ենք այդ քաջ տղի կենացը, ասին քոյրերը ու բաժակները դարդակեցին: Յետոյ սկսան իրանց դուր եկած քաջերին աւելի մանրամաս նկարագրել ու միասին հառաչել. «Մի, Աստուած, ո՞ր էր թէ այդ երիտասարդները այստեղ լոյս ընկնէին, որ ամեն քաղցր ծառայութիւն նրանց անելով մեր սէրը ցոյց տայինք ու սրտներիս կարօտն առնէինք»:

Խիզախի համբերութիւնը կտրուելու վրայ էր, յարմար վայրկեանի էր սպասում, որ ներս ընկնի՝ Վերջին «մի»ը դեռ աղջկերանց բերանումն էր, որ նա դուռը բաց արեց ու առաջներին տնկուեց: Երեք քոյրերն էլ մնացին ապշած, անակնկալ ներս եկածին լուռ ու մունջ դիտեցին: ամեն միւր ծանօթ գիծ գտնելով նրա կերպարանքի վրայ սկսան դէմքները, բաղցրացնել, ժպտալ ու վերջն ամենը միանգամից խնդումով վեր թռան դէպի նա, ամեն միւրն ուղում էր իրա

գիրկն առնել, իրա կողքին նստացնել: Իրար ձեռից խլելով սկսան իրար դէմ դժգոհալ: «Սա այն անվախ երիտասարդն է, ասում էր աւագը, որ գերեզմանի մօտ մտրակը ձեռէս խլեց»:— «Ոչ, սա այն ուժեղ տղէն է, ասում էր միջնակը, որ ծովի մէջ մատանիս խլեց, այժմ իմ ետնից է եկել»:— «Քոյրեր, համբերեցէք, ասեց փոքրը, սա ոչ մէկիդ ետնից չի եկել, սա այն գեղեցիկ երիտասարդն է, որ ծոցիցս ընկած թասը վեր կալաւ, հիմի եկել է ինձ գտնելու»: Քոյրերից ոչ մինը չէր ուզում միւսին զիջանել: Տեսան որ ձգձը գելով բան չի դառնում, դարձան երեքով հարցրին. «աչքի լոյս, անկեղծ ասա, մեզնից ո՞րի համար ես նեղութիւն քաշել, լեռան կատարը բարձրացել»: Երեքն էլ ամպի պէս մաքուր էին, արևի պէս շողշողուն, չը գիտէր ո՞րի սրտին դիպչէր: Խիզախը քաղցր ժպտալով ասեց. «միթէ բոլոր հրեշտակները ձեզ պէս անգութ են լինում: Անասելի չարչարանքներ քաշելով, ոտաբոբիկ, փոշոտ, վիրաւոր մասներով հասել եմ ձեզ մօտ: Գեռ թողէք երկու ըոպէ շունչ առնեմ, քաղցս ու ծարաւս քիչ կոտրեմ, յետոյ այնքիս վրայ ձեր հարցի պատասխանը»: Աղջիկները զգալով իրանց սխալմունքը, որ երկար ձանապարհ եկած սիրելի երիտասարդին թողել են ոտի վրայ առանց հիւրասիրելու, ամօթից կարմրելով շտապեցին ուղղել ակամայ սխալմունքը, նստացրին, մէկը շորերը հանեց, թափ տուեց. միւսը ջուր բերեց, ոտն ու ձեռը լուաց, քեծոտ տեղերին ձէթ քսեց, երրորդը ուտելիք, խմելիք բերեց: Խիզախը կերաւ, մտիթարուեց ստացած հիւրասիրութիւնով, վերկացաւ շնորհակալութեան փոխարէն երեքի ձեռներն էլ համբուրեց ու այսպէս խօսեց. «աւելորդ եմ հա-

մարում այժմ ձեզ պատմել իմ գլխով անցած բոլոր բաները, այդ յետոյ էլ կիմանաք: Պառաւ մայրս, որ կազմում է իմ միակ գանձն ու սրբութիւնը, ժամէ ժամ սպասում է ինձ: Նրան տուած ուխտս է լինել ազնիւ ու արդար, բայց չար մարդիկ այս թասի պատճառով ինձ գող հրատարակեցին ու թագաւորի միջոցով կամեցան կախել տալ: Իմ փոխարէն 40 ընկերացու լինելու համար եմ թողել ու աշխարհէ աշխարհ թաներիս պատանդ եմ թողել ու աշխարհէ աշխարհ թափառում այս թասի հատը գտնելու, որ խօսքիս ազնուութիւնը հաստատեմ ու պատանդներին մահից ազատեմ: Ձեզանից ո՞վ որ կը տայ սրա հատը, նա կը լինի իմ հարսնացուն»:

Այս խօսքերի վրայ աւագն ու միջնակը տխուր ետ քաշուեցին, իսկ կրտսերը ծոցը բանալով ասեց. «իմ հաւանած երիտասարդ, երբ քո կորուստն այդ է, միամիտ կաց, ահա դրա հատը, ձեռդ մեկնիր ու ինքդ հանիր»: Խիզախի ուրախութեանը չափ չըկար, նրան էին պատկանում թէ անգին թասերը և թէ նրանց աննման տիրուհին: Դարձաւ միւս աղջիկներին ասեց. «գուք միք ախրիլ, աշխարհը մեծ է, երիտասարդները շատ: Թագաւորի կենդանացած տղէն և նաւապետ թագաւորազը ձեզ ուրախութեամբ կընդունեն, եթէ չէ, ահա ձեր մատանին ու մտրակը, գնացէք բաղդներդ ուր ուզում էք, փորձեցէք»:

Այդ գիշեր քոյրերը փափուկ անկողին շինեցին ու յոգնած թանկապին հիւրին քնացրին հանգիստ: Հետեւալ օրը աւագն ու միջնակը յայտնեցին, որ իրանք մնում են իրանց օթւանում, փոքր քրոջը խնդրեցին, որ մի քանի օր էլ մնայ իրանց մօտ: Բարձր լեռան կատարից հիանալի տեսարան էր, Խիզախն

Թուում էր, թէ ողջ աշխարհը իրա բռան միջին է, նս-
յեց աջ ու ձախ, անհուն հորիզոններին, մինչև իրիկ-
նադէմ քաղցր ժամեր վայելից երեք քոյրերի հետ
ծաղկների մէջ զբօսնելով ու դարձաւ ասեց. «կէս
տարի ժամանակամիջոց էր տուած, արդէն լրանալու
վրայ է, եթէ որոշեալ օրը չըհասնեմ, 40 ընկերներին
պիտի կախեն. մայրս էլ եթէ լսի, որ ինձ գողութեան
մէջ մեղադրում են, նա իրան կըսպանի: Հարկաւոր
է շտապել, ասացէք, սրտեղով պիտի իջնեմ այս կա-
տարից: Բարձրանալիս, ճիշտ է, անչափ նեղութիւն
ներ եմ քաշել, բայց բարի Աստուածը փոխարէն ա
ռատօրէն վարձատրեց, այստեղ գտայ այն գանձերը,
որոնց նմանը ոչ մի թագաւոր չունի» — «Միրելի փեսայ,
ասին աւագն ու միջնակը, քեզ լեռան կատարից մինչև
ստորոտ տանելը երկուսիս պարտքը լինի, մնացածի
հոգսը մեր կրտսեր քոյրը կը քաշի»:

Երկրորդ գիշերն էլ քաղցր հիւրասիրելով, միւս
առաւօտ երկու քոյրը հագան իրանց թևերը ու Խի-
զախին գնելով իրանց ուսերի վրայ, սկսան օդում սա-
ւառնելով իջնել: Քենիները նրա հետ զրոյց անելով
հասան ստորոտը: Կրտսերը ետ էր մնացել օթևանին
մնաս բարև ասելու. իրա բաժին գանձն ու ոսկին ի-
րա թևերի վրայ բարձեց ու նոյնպէս սաւառնելով իջաւ
ստորոտ: Մեծն ու միջնակը համբուրելով քրոջն ու
փեսին բազաւորութիւն մաղթեցին ու ետ թռան ի-
րանց լեռնային օթևանը:

Խիզախը խիստ տխուր էր, որովհետև գնալու ճա-
նապարհը երկար էր, ունեցած ժամանակը շատ կարճ,
քիչ էր մնում լայ, որ մօր յուսահատ վիճակը երևակայում
էր: Լուսաթաթախ աղջիկն ասեց. «վշտիդ պատճառը

հասկանում եմ, մազաչափ մի տխրի, զուր կորցրած
ժամանակդ ետ կը բերեմ. Մի ամսուայ ընթացքում
եկած տարածութիւնդ ես մի օրում կը թռչեմ: Ա՛րի,
իմ քաջ, նստիր թևերիս, գնանք», Երիտասարդը համ-
բուրեց աղջկայ ճակատը, նստեց նրա փուած թևերին
ու աչքերը խուփ արեց, որ չըշարժուեն: Լուսաթա-
թախն օդում այնպէս արագ էր լողում, որ քամուց էլ
արագ: Ամիսներով եկած ճանապարհը Խիզախը երեք
օրում կտրեց և այն ժամին հասաւ թագաւորի քաղաքը,
երբ չար նազիրը կրկնում էր. — «տես՞ր, թագաւոր,
ինչ խաբէբայ էր այն երիտասարդը, թասն առաւ
փախաւ: Զուր տեղն ենք նրա պատանդ թողած մարդ-
կանց կերակրում: Հրամայիր ամենին գլխատել ու
ծախսը կըճատել»:

Խիզախն իրա նշանածին քաղաքի ծայրում մի
տան տեղաւորելով ինքն շտապով պալատը հասաւ ու
աղաղակեց. «Թագաւորն ապրած կենայ, պայմանի ժա-
մանակը դեռ չըլրացած ահա եկայ: Գու պահանջում
էիր նախշուն թասի հատը, ահա բերել եմ. թող նա-
զիրը գայ ու իմանայ, թէ այս երկուսից որն է իրա
տեսածը»:

Թագաւորն ատեան կազմեց ու պալատականների
ներկայութեամբ հարցրեց նազիրին. «ասում էիր, որ
այս երիտասարդը իմ հօր գանձարանից անգին թաս
է գողացել, այս երկուսից որն է, ցոյց տուր»: Նազիրը
նայեց, մատնահարեց, մնաց շուարած, չըգիտէր, որն
ասի: Խիզախը ակն ու մարգարիտները ծոցից հանելով
ապուշ կտրուած նազիրի թթին մօտեցրեց ու հարցրեց.
«սոս, մի լռիլ, արդեօք սրանք էլ եմ թագաւորի
գանձարանից գողացել»: Ներկայ եղողները գոչեցին.

«նազիրը զրպարտիչ է, ցած հոգի մարդ է, պիտի պատուհասուի»։ Թագաւորը Խիզախի ձեռք բռնելով խօսեց. «ագնիւ տղայ, ճշմարտութիւնը պերականգնելու համար հաստատուն կամքով կէս տարի պտըտեցիր ու խօսքդ տեղաց արիր։ Դու ժողովրդի համար պիտանի մարդ կը լինես։ Ես անզաւակ եմ, արի իմ տեղ թագաւոր եղիր»։— «Թագաւոր տէր, խօսեց Խիզախը, մի քանի ժամով իրաւունքդ ինձ տուր, եթէ արած վճիռներս այս բազմութեան դուր կը գան, այն ժամանակ կը տամ իմ համաձայնութիւնը»։ Իրաւունք ստանալուց ետ Խիզախը աւազակներէ զխաւորին մօտ կանչելով ականջում մի բան փսփրսաց և հրամայեց, որ թագաւորական կառք տան նրան։ Դրանից ետ ինքը գահի վրայ նստելով նազիրին կանչեց առաջ. «լաւ լըսիր, ես թագաւորաց մարդ եմ ու վրքդուած հօրս գահից մի նազիրի միջոցով։ Ես ոչ թէ միայն ժողովրդի, այլ և իմ բարեացակամս էր։ Ես նոր եմ հասկանում նրան։ Եթէ նրա արդարասիրութիւնը, ազնուութիւնը չըլինէր, ես կը մնայի իմ անառակ բնաւորութեան մէջ, իմ աշխարհն էլ քար ու քանդ եղած կը լինէր, շուտով կը յայտնեմ նրան անհուն երախտագիտութիւնս, եթէ իմ ժողովրդի այդ ամենասրտացաւ բարեկամը կենդան մնացած կը լինի։

Դու էլ նազիր ես, այս աշխարհում թագաւորից ետ երկրորդ մարդը, բայց ինչպէս փաստը ցոյց տուեց, մի անարդար ու անազնիւ արարած ես, երևում է, թո՞օգտի համար միշտ խաբել ես քեզ անպայման հաւատացող թագաւորին և անմեղ անձերի դուր պատուհասել տուել։ Շատ պաշտօնեաներ թո՞ օրինակով ապականուած կը լինեն։ Քեզ պէս խորամանկ մեծաւորի

զլուխը պիտի կացնով կտրուի, որ միամիտ փոքրաւորները ուղղուեն»։

Խիզախի մայրը լալուց, որդու կարօտ քաշելուց կուրացել էր, երբ թագաւորական կառքով ևկաւ նրա մօտ աւազակապետը ու խոնարհ ծառայի պէս նստացրեց կառքի մէջ ու հասցրեց պալատի դուռը։ Խիզախը լսելով աւազակապետի գալուստը կանչեց ատեան ու բազմութեան առաջ այսպէս խօսեց.

«Դու մի տարի առաջ խոստացար ինձ մարդ շինել ու փառքի հասցնել, ինչո՞վ—գողութիւնով, կողոպուտով։ Քո ընտրած ճանապարհը սխալ էր և ես շատ անգամ ծածուկ անցել եմ քարուանով գնացող վաճառականների կողմը ու շարդել քո ընկեր աւազակներին։ Արդար քրտինքով վաստակած չնչին գումարը աւելի բարձր է, քան թէ գողացած մի պարկ ոսկին։ Ես իբրև թագաւորի մինուճար որդի, վատ ընկերների հեռեկելով ամեն անառակութիւն անում էի։ Դառնութիւններից ետ թողի այդ անվայել ճանապարհը։ Դու և քո ընկերներն էլ թողէք ճանապարհ կտրելն ու արիւն թափելը, և գնացէք հալալ վաստակ արէք ու ազնիւ կեանքով ապրեցէք։ Դրա համար ինչքան գումար հարկաւոր է, կըստանաք ինձնից։ Եթէ առաջարկս չէք ընդունիլ, հունի կոպալը պատրաստ է, էլի անուշ կանէք»։

— «Մի տարի ես եղել եմ քո մեծաւորը, խօսեց աւազակապետը, այս օրուանից մինչև կեանքիս վերջը կը լինեմ քո խոնարհ ծառան։ Տայ Աստուած, որ մեզ պէս շատ կորած հոգիների դարձ բերես»։

Այս ամենից ետ Խիզախը իրա մօրը թագուհու արժան դարդարած, նստացրեց կառքը ու իրա հետ տարաւ քաղաքի ծայր, ուր նշանածն սպասում էր։

«Սիրելի, ասեց թագաւոր աղջկան, բեզանից ծածկել եմ, որ ես թագաւորաց եմ, տես, խեղճ մայրս իմ կարօտը քաշելուց աչքերը վնասել է»։— «Դրա ճարը

դժուար չէ, պատասխանեց հարսնացուն կոյր սկեսօր ձեռը համբուրելով, ահա այս բոսկիլն կառողջանայ»: Թևի ծայրը քսեց պառաւի կոպերին: Աչքերը լաւացան, ինչպէս առաջ էին: «Երբ մայրս առողջացաւ, էլ վիշտ չունեմ, դէ, այժմ գնանք մեզ սպասող Թագաւորի մօտ, ասեց Խիզախը:

Պայտուժ մեծ ճաշ էր: Թագաւորը շատ դարմացաւ հարսնացուի գեղեցկութեան վրայ: Երբ Խիզախը միտ ա մի պատմեց պատանեկութիւնից սկսած իրա գլխով անցած փորձանքները, Թագաւորը հիացած գոչեց. «Ես ուրիշ յաջորդ չեմ ուզում: Նախկին անառակութիւններից պատճառով դու կորած մարդ ես եղել, բայց քո խիզախ հոգով դուրս ես պրծել կեանքի դառնութիւնների ու փորձութիւնների միջից, դառել այսպիսի ազնիւ, արժանաւոր մարդ. դու գտնուած գանձ ես իմ աշխարհի համար. կենդանութեանս օրով իմ գանձ քեզ եմ տալիս, ժառանգիր քո անձման նշանածի հետ»:

Մեծ պատրաստութիւններ եղան հարսանիքի համար, Թագաւորն իրա քաջասիրտ որդեգրի սիրու համար կամենում էր ժողովրդի հետ եօթն օր, եօթ գիշեր ուրախութիւն անել: Կերուխումը դեռ նոր էր սկսուել, մէկ էլ ի՞նչ տեսան. դեսպաններ լոյս ընկան Խիզախի հօր աշխարհից: Իեսպանների գլուխն էր հաւատարիմ նազիրը, ժողովրդի կողմից եկել էր խընդրելու, որ խելօքացած Խիզախը վերադառնայ. իրա հօր Թափուր գահին նստի ու երկիրը կառավարի:

Խիզախը վրայ ընկաւ ծեր նազիրի ձեռը համբուրեց միքանի անգամ, նազիրն էլ նրա ձակատը:

Հարսանիքի կերուխումը վերջանալուց ետ, արդեօք Խիզախ Թագաւորազը գնաց հայրական աշխարհը, թէ մնաց անգաւակ Թագաւորի մօտ, այդ մասին հէքեաթը բան չի ասում:



Թիֆլիսի գրախանութներում վաճառում են մեր կազմած դասագրքերը

1. ԿՐՕՆԻ ԴԱՍԱՏԻՈՒԹԻՒՆ. ա. բաժ. ձեռնարկ ուսուցիչների համար գինը. . . 40 կ.
2. ԿՐՕՆ. ա. տարի. բարոյախօսական առակներ և Յիսուսի կեանքից պատմուածներ. 10 »
3. ԿՐՕՆ. բ. տարի. Նահապետների կեանքից մինչև Յովսէփի մահը. . . 20 »
4. ԿՐՕՆ. գ. տարի. Մովսէսից մինչև Թագաւորութեան բաժանումը. . . 35 »
5. ԿՐՕՆ. դ. տարի. Մարգարէներ և հրէից ազգի վիճակը մինչև Հերովդէս . 40 »

Պատրաստ են տպագրութեան

6. ԿՐՕՆ ե. տարի. Յիսուսի կեանքը միեջե. Համբարձում.
7. ԿՐՕՆ. գ. տարի. Առաքեալների յամանակաշրջան եւ Հայաստանի լուսաւորիչներ.

Թիֆլիսի զրահամուծներում վաճառում են ժեր
աշխատութիւնները:

- 1. ՈՍԿԵԹԵԻԻԿ, պատկերով 30 կ.
- 2. ՇԷՆ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՂԶԻԿ. գ. տպագր. 12 պատկերով. 35 »
- 3. ԾՈՎԻՆԱՐ. գ. տպ. 25 »
- 4. ԵՐԿՈՒ ԱՂԲԵՐՍՅԵՂ. բ. տպ. 30 »
- 5. ԱՍՏՈՒԱԾ ԱՂԲԱՏԻ ԿԵՐՊՈՒՄ. 20 »
- 6. ԵՐԿՈՒ ԶՐՈՅՑ } ա. Երեք խոստովանութիւնն } 30 »
պատկերով } բ. Երեք սակու պատմութ.
- 7. ՀԷՔԻԱԹՆԵՐ. 30 »
- 8. ՀՈՂԱԾԻՆՆ ԱՆՄԵՌ ԱՇԽԱՐՀՈՒՄ 8 »
- 9. ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ. 30 »
- 10. ԾԵՐԵՐԻ ԶՐՈՅՑՆԵՐԻՑ. պատկերով. 20 »
- 11. ՄՐՏԱՇԱՀ ԲԱՆԵՐ. 20 »
- 12. ԱՍՏԾՈՒ ԴԱՏԱՍՏԱՆ. 5 »
- 13. ԱՍՏՈՒԱԾ ԶԸ ՃԱՆԱԶՈՂ. 10 »
- 14. ԳԱԼՕ ԱՓՕ. Նիժեցի Խաչան 12 »
- 15. ԺԱՄԱՆԱԿԸ ՈՍԿԻ. պատկերներով. 40 »
- 16. ԻՆՆԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, «ՍԻՐՏ» գրքից. պատկերներով 40 »
- 17. ՔԱԶ ԱՂԱՍԻ 25 »
- 18. ՍԱՍՈՒՆՑԻ ՅՈՎՆԱՆ. 30 »
- 19. ԽՈՒԼ ԽԱԶԻԿ. բ. տպ. 25 »
- 20. ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ. Ա. կապուկ. 40 »
- 21. ՎԱՐԴԱՆ. ՂԵՒՈՆԴ. ՄԱՍԻՆ պատկերներով. 30 »
- 22. «ՍԻՐՏ» գրքից Ծնողների նամակները որդուն 15 »
- 23. ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ գրքի գոհարներից 10 »

Հեղինակի հասցէն՝ Թիֆլիս. Միքայէլեան փողոց
№ 82. բնակ. 9.

4
« Ազգային գրադարան



NL0367358

60357